

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՎ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

051300 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

սովորող ուսանողների համար

ՎԱՆԱԶՈՐ 2016

**ՆԱԽԱԲԱՆ**.....

**ՄԱՍ I. Ա. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց**.....

**Բ. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը**.....

**Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը**.....

**Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**.....

**Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**.....

**1. Տեղեկագրի նպատակը**.....

**2. 051300 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ » մասնագիտության տեղեկագիրք**.....

**I. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ**.....

**II Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ**.....

**III Ընդհանուր մասնագիտական դասընթացներ**.....

**IV Հատուկ մասնագիտական դասընթացներ**.....

**V. Այլ բաղադրիչներ**

## ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր տարին մեր համալսարանի պատմության մեջ նշանավորվում է այս կամ այն իրադարձությամբ: 2014 –ը մեր համալսարանականացման տարին եղավ: 2015-ը նշանակալից էր երկու առումներով.

1. ՀՀ ԿԳ նախարարության ՈԱԱԿ-ի կողմից բուհն արժանացավ պետական հավատարմագրման 4 տարի ժամկետով: Այս ցուցանիշով մեր համալսարանը հանրապետության մարզային բուհերի մեջ առայժմ միակն է:

2. Առաջին անգամ կատարվեց ընդունելության քննություն համալսարանական մասնագիտություններով:

Անշուշտ, սրանից հետևում են բազմաշերտ բովանդակային փոփոխություններ և դրանցից բխող մարտահրավերներ, որոնց այսօր փորձում է դիմակայել մեր համալսարանը:

Բուհում առաջին հերթին փոփոխվել են այն ուղղությունները, որոնք նախկինում գերակայում էին մեր բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ ներկայումս վերանայման խնդիր ունեն համալսարանի տեսլականն ու առաքելությունները և դրանցով պայմանավորված հետագա գործունեությունը:

Մեր բուհին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել կրթություն իրականացնելու համալսարաններին հատուկ ավանդական մասնագիտություններով, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բավարարելու մեր տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքները:

Այն ժամանակաշրջանը, որում Վանաձորի պետական համալսարանը ծավալում է իր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որը կատարվում է համալսարանում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Խոսքը վերաբերում է համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մասնավորապես՝ բուհի ինքնավարությանը, որը ենթադրում է անկաշկանդ վերաբերմունք կազմակերպչաիրավական, ֆինանսատնտեսական, հաստիքային և ակադեմիական ոլորտներին, կառավարմանը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը, որակի ապահովմանը, գիտական գործունեությանը և այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են համալսարանում, և որոնք բոլորը միասին ձևավորում են տեսլականից դեպի իրականը տանող ճանապարհը:

Համոզված եմ, որ Վանաձորի պետական համալսարանն ունի մտավոր և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ճիշտ ներդրմամբ կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ համախոհությամբ, փոխադարձ

հանդուրժողականությամբ, ինչպես նաև պետության ու հասարակության առջև հաշվետվողականությամբ ու պատասխանատվությամբ առաջնորդվելու դեպքում միասին կհաղթահարենք արդի ժամանակաշրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

**ՌԵԿՏՈՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՄԱՍ I. Ա. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**1. Ընդհանուր դրույթներ**

Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

1. Սույն կանոնակարգը հիմնվում է, Կրթության մասին և ,Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն ,ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված ,Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգե-ի, ,Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցե-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

2. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած են ճանաչվում ,ՎՊՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների կազմակերպման, գնահատման և հաշվառման կանոնակարգե-ը՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 29.10.2007թ և ,ՎՊՀ-ում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցե-ը՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 07.03.2008թ.:

3. Սույն կանոնակարգում ներկայացված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, համակարգի բնութագրիչներ:

## **2. Կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները**

4. Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի Բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՎՊՀ-ի Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում.

- Բակալավրիատը Բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտուն դասընթացներ: ՎՊՀ-ում Բակալավրիատի տևողությունը 4 ուսումնական տարի է:

- Մագիստրատուրան Բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տևողությունը 1-2 տարի է (ՎՊՀ-ում՝ 2 տարի), հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:

- Ասպիրանտուրան հետբուհական կրթության աստիճան է: Ասպիրանտուրայի տևողությունն առկա ուսուցման համակարգում 3 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 4 տարի:

- Ուսումնական տարին ուսանողի 40 շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

- Կարողությունը (կոմպետենցիան) գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) և ընդհանուր (անկախ բնագավառից):

- Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:

- Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:

- ECTS Կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող

Ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

### **3. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները**

5. ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

6. կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

7. կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

8. ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

9. կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

10. կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

### **4. Կրեդիտային համակարգի կարևոր հատկանիշները**

11. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

12. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:

Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

13. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,

- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

### **5. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները**

Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ,

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

14. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի



լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան:

15. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,

- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսին նախապատվություն տալուց,

- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

## **6. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաձևավոր**

16. ՎՊՀ-ում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր (10% թույլատրելի շեղումով), ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

17. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 կրեդիտային միավորին:

18. ՎՊՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է աշնանային և գարնանային կիսամյակներով: Ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որի ընթացքում իրականացվում են տեսական ուսուցումը, ընթացիկ ստուգումները, ստուգարքներն ու քննությունները, ուսումնական, արտադրական և հետազոտական (մագիստրատու-րայում) պրակտիկաները, բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի շարադրման ու պաշտպանության աշխատանքները, ինչպես նաև պետական որակավորման քննությունները:

19. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավարը կազմում է 240 կրեդիտային միավոր:

20. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավարը կազմում է 120 կրեդիտային միավոր:

21. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

## **7. Դասընթացները և կրթական մոդուլները**

22. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

23. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

24. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, և ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

## **8. Կրեդիտների հատկացումը**

25. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը էլնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:

26. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:

27. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար նախընտրելի է սահմանել ամբողջական թվերով արժեքներ:

28. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական

կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

29. ՎՊՀ-ում ընդունվում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտային միավորների լսարանային և արտալսարանային աշխատաձևավալների հետևյալ մոտավոր հարաբերակցությունը.

Բակալավրիատում`

- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 1.5 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 3 ժամ լաբորատոր աշխատանք և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,

Մագիստրատուրայում`

- 3 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 4 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանք և 2 ժամ ինքնուրույն աշխատանք:

Ընթացիկ և հանրագումարային ստուգումների համար.

- Քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:
- Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում է 0,125 կրեդիտային միավոր:

- Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր :

30. Պրակտիկաների յուրաքանչյուր շաբաթվան և պաշտպանությանը տրվում է 1,5 կրեդիտային միավոր:

31. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում նաև ռեֆերատի ու զեկուցման) կատարումը և պաշտպանությունը գնահատվում է 3 կրեդիտային միավորով:

32. Բակալավրիատի 4-րդ տարվա յուրաքանչյուր կիսամյակում բակալավրի ավարտական թեզի աշխատանքների կատարման համար տրվում է 2 կրեդիտային միավոր, շարադրմանը և պաշտպանությանը՝ 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

33. Մագիստրոսական աստենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 15 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 0,3,6,6), իսկ թեզի շարադրման և պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր:

34. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարի համար հատկացվում է 12 կրեդիտային միավոր (3-ական միավոր յուրաքանչյուր կիսամյակի համար):

35. Պետական ավարտական յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար տրվում է 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

36. Մարմնակրթության համար կրեդիտային միավորներ չեն նախատեսվում:

## **9. Ուսումնական ծրագրերը, դասընթացները (կրթական մոդուլները) և ավարտական պահանջները**

37. Բակալավրի կրթական ծրագիրը ներառում է մինչև վեց հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ), ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) և հատուկ մասնագիտական դասընթացներ (ՀՄԴ), ինչպես նաև այլ բաղադրիչներ (ԱԲ):

38. Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է երեք կրթամաս՝ ընդհանուր մասնագիտական առարկաներ(ԸՄԱ), մասնագիտական պարտադիր դասընթացներ (ՄԴ), այլ բաղադրիչներ (ԱԲ) և գիտահետազոտական աշխատանք (ԳԱ) :

39. Կրթական ծրագրում ներառված կրթական մոդուլները ունեն իրենց դասիչները և ներկայացվում են հատկացված կրեդիտներով ու լսարանային ծանրաբեռնվածությունով: Նշվում են նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

40. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույնը կիսամյակների ընթացքում դասընթացն ավարտելու սկզբունքից:

41. Դասընթացներն իրենց բնույթով բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ, որոնք դասավանդվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

բ) կամընտրական դասընթացներ - պետական չափորոշիչներից բխող և ֆակուլտետների կողմից առաջարկվող դասընթացներ, որոնք ընտրում է ուսանողը առաջարկվող ցանկից, իսկ դրանց անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր կրթամասին հատկացված կրեդիտային միավորների գումարը:

42. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՀ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ 3 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը:

43. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՀ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58` ներառյալ մագիստրոսական ատենախոսության թեմայով գիտահետազոտական աշխատանքը (կուրսային, ռեֆերատ, էսսե, հոդված) և մագիստրոսական թեզի գնահատումը և պաշտպանությունը:

## 10. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

### 10.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է 5 հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՅՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ), ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) և հատուկ մասնագիտական դասընթացներ (ՅՄԴ), ինչպես նաև այլ բաղադրիչներ (ԱԲ): Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթաց ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է դասընթացների յուրաքանչյուր խմբին հատկացված կրեդիտային միավորների գումարը, ինչպես նաև դասընթացի յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը: Նշվում է նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	<b>36</b>	<b>13</b>
<i>պարտադիր</i>	20	8

<i>կամընտրական</i>	16	5
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	<b>8</b>	<b>4</b>
<i>պարտադիր</i>	6	3
<i>կամընտրական</i>	2	1
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	<b>126</b>	<b>31</b>
<i>պարտադիր</i>	99	23
<i>կամընտրական</i>	27	8
Հատուկ մասնագիտական դասընթացներ	<b>44</b>	<b>11</b>
<i>պարտադիր</i>	44	11
<i>կամընտրական</i>	0	0
Կրթական այլ մոդուլներ	<b>24</b>	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>240</b>	<b>59</b>

### **10.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս**

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՍ) կրթամասը կազմված է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

#### **ՀՍՍ պարտադիր դասընթացներ**

ՀՍՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.



Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ	Կիսամյակ	Գնահատման ձևը
		(դ/ս/գ/լ/ի) <sup>1</sup>		
Հայոց լեզու և քրականություն - 1	2	60 (8/ 0/24/ 0/28)	1	ստույգ արք
Հայոց լեզու և քրականություն - 2	2	60 (8/ 0/24/ 0/28)	2	ստույգ արք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60(18/ 14/0 /0/28)	1	ստույգ արք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60(18/ 14/0 /0/28)	2	ստույգ արք
Ռուսաց լեզու - 1	4	120 (0/ 0/64/ 0/56)	1	ստույգ արք
Ռուսաց լեզու – 2	4	120 (0/ 0/34/ 0/26)	2	ստույգ արք
Փիլիսոփայության հիմնահարցեր	4	120(28/20/0/ 0/72)	4	քննություն
Մարմնակրթություն				

1) դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, Լ-լաբորատոր աշխատանք

### ՀՍ կամընտրական դասընթացներ

ՀՍ կամընտրական դասընթացների ցանկը կազմված է կամընտրական առարկաներից, որոնք առաջարկվում են ֆակուլտետի խորհրդի կողմից, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը: ՀՍ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<b>Կամընտրական դասընթացներ</b>				
Օտար լեզու – 1 (անլերեն, ֆրանսերեն, քերմաներեն)	4	120(0/0/64/0/56)	1	ստույգ արք
Օտար լեզու – 2 (անլերեն, ֆրանսերեն, քերմաներեն)	4	120(0/0/64/0/56)	2	ստույգ արք
Օտար լեզու – 3 (անլերեն, ֆրանսերեն,	4	120(0/0/64/0/56)	3	ստույգ արք

□երմաներեն)				
Մշակութաբանություն	2	60(18/14/0/0/28)	3	ստու□արք
Սոցիոլո□իա				
Կրթության սոցիոլո□իա				
Իրավա□իտություն	2	60(18/14/0/0/28)	4	ստու□արք
Քաղաքա□իտություն				
Տնտեսա□իտություն				

#### 4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես կազմված է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական:

##### ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Համակար□չից օ□տվելու հմտություններ	2	60 (8/0/24/0/28)	1	ստու□արք
Քաղաքաշտպանություն և արտակ. իրավիճ. հիմնահարցեր	2	60 (24/0/8/0/28)	5	ստու□արք
Էկոլո□իա և բնապահպանության հիմնահարցեր	2	60(18/14/0/0/28)	4	ստու□արք

##### ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կրթամասի կամընտրական դասընթացի ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<b>Կամընտրական առարկաներ</b>				
Բժշկա□իտ. հիմունքներ և		60(18/0/14/0/28)		

առողջ. պահպանում	2		6	ստույգ
Արտակարգ իրավ. բնակչ. առաջին բուժօնություն				

### 10.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի ԸՄԴ կրթամասը բաղկացած է պարտադիր և կամընտրական առարկաներից:

#### ԸՄԴ պարտադիր դասընթացներ

ԸՄԴ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Փնահատման ձևը
Մասնագիտ. ներածություն	3	90 (24/0/16/0/50)	1	ստույգ
Մանկավարժության տեսություն	6	180(48/0/40/0/92)	1	քննություն
Մանկավարժության տեսություն	6	180(48/0/48/0/84)	2	քննություն
Մանկավարժական տեխնոլոգ.	3	90 (24/0/26/0/40)	3	ստույգ
Կրթության և մանկավարժական մտքի պատմություն	4	120(28/28/0/64)	4	քննություն
Շտկող մանկավարժություն	4	120(24/0/32/0/64)	7	քննություն
Հոբերանամանկ. պրակտիկում	2	60 (8/0/24/0/28)	2	ստույգ
Հոբերանամանկ. պրակտիկում	2	60 (8/0/30/0/22)	3	ստույգ
Սոց. մանկավարժություն	4	120 (28/0/28/0/64)	1	քննություն
Սոց. մանկավարժություն	5	150 (32/32/0/0/86)	2	քննություն

Սոց. մանկ. տեխնոլոգիաներ	4	120(28/0/28/0/64)	4	քննություն
Սոց. մանկ. խորհրդատվություն	5	150 (32/0/40/0/78)	3	քննություն
Սոց. մանկ. խորհրդատվություն	5	150 (32/0/40/0/78)	4	քննություն
Ընդհանուր հոգեբանության հիմունքներ	5	150 (32/0/32/0/86)	2	քննություն
Տարիքային և մանկավարժական հոգեբանություն	4	120 (28/0/32/0/60)	3	քննություն
Սոց. աշխատանքի հիմունքներ	5	150 (32/0/40/0/78)	5	քննություն
Ընտանիքի հոգեբ. հիմունքներ և խորհրդատվություն	6	180 (48/0/40/0/92)	6	քննություն
Սոց հոգեբանություն	4	120(28/0/32/0/60)	3	ստուգաք
Սոց հոգեբանություն	4	120(28/0/28/0/64)	4	ստուգաք
Տարիքային մանկավարժություն	5	150(32/40/0/0/72)	3	քննություն
Սոց քաղաքականություն	5	150 (32/0/32/0/86)	8	քննություն
Սոց մանկ պատմություն	5	150 (32/32/0/0/86)	8	քննություն
Ժամանակակից մանկավարժական տեսություններ	3	90 (24/28/0/0/38)	5	ստուգաք

## ԸՄԴ կամընտրական դասընթացներ

ԸՄԴ կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը բաղկացած է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից և ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<b>Կամընտրական առարկաներ</b>				
Էթնոմանկավարժություն Շեղվող վարքի մանկավարժություն	3	90 (24/0/26/0/40)	5	ստույգ արք
Մանկավարժական ներդրության հնարները Սոցմանկավարժը մասնաձիտական կողմնորոշման համակարգում	4	120(24/0/32)0/64	7	քննություն
Էթնոհոգեբանություն Ընտանիքի սոցիոլոգիա	3	90 (24/0/26/0/40)	5	ստույգ արք
Պենիտենցիար մանկավարժություն Համեմատական մանկավարժութ.	3	90 (24/0/24/0/42)	4	ստույգ արք
Սոցիալ-մանկավարժական մեթոդներ Սոցիոլոգիական մեթոդները սոցմանկավարժական հետազոտություններում	4	120(24/0/32)0/64	5	քննություն
Աշխատանքի հոգեբանություն Աշխատանքի սոցիոլոգիա	4	120 (24/0/28/0/68)	6	ստույգ արք
Սոցիալ-մանկավարժական մոդելներ Մոդելավորումը որպես ձիտական հետազոտության մեթոդ	4	120(24/0/32)0/64)	7	քննություն
Անձի հոգեբանություն Հատուկ հոգեբանություն	4	120 (24/0/32)0/64)	7	ստույգ արք

**10.1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս**

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի ՀՄԴ դասընթացների ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

**ՀՄԴ պարտադիր դասընթացներ**

ՀՄԴ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է մանկավարժական բնույթի ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Վերադաստիարակության հիմունքներ	3	90(24/24/0/42)	4	ստույգ արք
Վերադաստիարակության հիմունքներ	3	90(24/24/0/42)	5	քննություն
Սոցիալ-մանկավարժական հետազոտման մեթոդների պրակտիկում	5	150(32/0/32/0/86)	6	քննություն
Սոցիալ-մանկավարժական լորժուներության ուղղություններ	4	120 (24/32/0/64)	8	քննություն
Միջազգային սոց աշխատանք	5	150 (32/36/0/0/82)	8	քննություն
Ներառական կրթության կազմակերպում	4	120 (24/0/32/0/64)	5	ստույգ արք
Հոմեբանամանկ.ախտորոշում	5	150 (32/32/0/0/86)	6	քննություն
Հոմեբան.խորհրդ. հոմեշտկման հիմունքներ	և 5	150 (32/32/0/0/86)	6	քննություն
Հոմեբանամանկ. մարդաբան.	3	90(24/16/0/0/50)	1	ստույգ արք
Մանկավ. հետազոտության մեթոդոլոգիա և մեթոդներ	5	150 (32/32/0/0/86)	7	քննություն
Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ	2	60(20/0/16/0/24)	8	ստույգ արք

### 10.1.5. Այլ բաղադրիչներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
<i>Ուսումնական պրակտիկա</i>	3	6	ստու՝արք
<i>Արտադրական պրակտիկա</i>	6	7	ստու՝արք
<i>Արտադրական պրակտիկա</i>	6	8	<input type="checkbox"/> Գնահատական
<i>Կուրսային աշխատանք</i>	3	5	<input type="checkbox"/> Գնահատական
<i>Կուրսային աշխատանք</i>	3	7	<input type="checkbox"/> Գնահատական
<i>Ավարտական որակավորման քննություն</i>	3	8	քննություն

## Բ. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

### Ի. Ընդհանուր դրույթներ

1. Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որոնք ենթադրում են մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

2. Սույն կանոնակարգը հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային

համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություն-ներ-ում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»-ի, «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

3. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած է ճանաչվում ,Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգեր (ընդունված գիտխորհրդում 29.10.2007թ.):

## **II. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը**

4. Համակարգի հիմնադրույթները.

ՎՊՀ–ում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատ–ման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախունները,

բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

5. Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատ-րաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

6. Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած գիտելիքների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:

7. Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում դասընթացի ուսումնասիրված բաժինների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը՝



ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,

բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,

գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը:

8. Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

9. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշ-ների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից և ամփոփվում ուսումնական վարչությունում:

10. Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,

գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և հանրագումարային քննություններ կամ ստուգարքներ),

ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

### **III. Գնահատման մեթոդաբանությունը**

11. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ անփոփոխ ստուգման կազմակերպման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) քննությամբ ավարտվող դասընթացներ,

բ) ստուգարքով ավարտվող դասընթացներ:

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության ուսումնամեթոդական փաթեթում:

12. Քննություններով ավարտվող առարկաների ցանկը որոշում է տվյալ ֆակուլտետի գիտամանկավարժական խորհուրդը:

13. Քննությամբ ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագու-մա-րային քննության (այսուհետ՝ Յանրագումարային քննություն) հետ մեկտեղ նախատեսվում է 2 ընթացիկ քննություն(ըստ աշխատանքային պլանի): Ընթացիկ քննությունը կան նրա մի մասը, որպես կանոն, անցկացվում է գրավոր (ուսանողների կամ տվյալ առարկայի դասախոսի հիմնավորված առաջարկությամբ և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով):

- Սահմանվում են ընթացիկ քննության առաջադրանքի հետևյալ ձևերը՝ հարցաշար, թեսթ, ստուգողական աշխատանք, վերջիններիս զուգակցում կամ ստեղծագործական աշխատանք:

- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի առնվազն 8 միավորով գնահատվող հատվածը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով:

- Յանրագումարային քննության ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

14. Ստուգարքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունք-ներով ամփոփվող ստուգարքով:

15. Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

16. Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում: Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ դասընթացը վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

17. Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքնն.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի՝

17.1. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1 :

17.1.1. Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է՝ 5 միավոր - դասախոսություններին հաճախելու համար, իսկ 15 միավոր - գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքներին հաճախելու համար(հավելված 1):

17.1.2. Լսարանային պարապմունքներին հաճախումները որոշվում են համաձայն հետևյալ հաշվարկի.

$ՅՄ=Դ+Գ,$

որտեղ՝

ՅՄ-հաճախումներին հատկացվող միավորը

Դ-դասախոսությունների մասնակցությանը միավորը

Գ-գործնական (սեմինար, լաբորատոր) պարապմունքների մասնակցությանը միավորը

17.1.3. Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

17.1.4. Դասընթացի լսարանային պարապմունքների հաճախումների համար հատկացվող միավորը որոշվում է ըստ հաճախումների քանակի և համարժեք տոկոսի (հավելված 1):

17.1.5. Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է դասախոսը կամ խմբի (կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:

17.1.6. Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և (կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր ամսվա վերջում ակադեմիական խորհրդատուի կամ դեկանի կողմից ստանում է նախազգուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:

17.1.7. Տվյալ ամսվա ընթացքում համապատասխան փաստաթղթով վավերացված հարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար դեկանատի գրավոր թույլտվությամբ ամբիոնը կազմակերպում է չկատարած լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն: Այդ դասաժամերին ուսանողների մասնակցության դրական արդյունքների դեպքում բացթողումները համարվում են լրացված:

17.1.8. Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.2. Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր:

17.2.1. Ինքնուրույն աշխատանքի ձևերից են՝ ռեֆերատը, անհատական տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն :

17.2.2. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:

17.2.3. Եթե ինքնուրույն աշխատանքը (անհա-տական առաջադրանքը) նշանակված ժամա-նա-կա-հատվածում կատարված է առնվազն կիսով չափ և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատ-վում է դրական (8-20 միավոր):

17.2.4. Բոլոր առաջադրանքների դրական գնահատականների միջինի դեպքում (8-20 միավոր) ուսանողը ստա-նում է ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված 10 միավորը: Հակառակ դեպքում ուսանողն ինքնուրույն աշխատանքի համար միավոր չի վաստակում (տեղեկագրում գրվում է զրո):

17.2.5. Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները նշանակվում են մատյանում և տեղեկագրում:

17.3. Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանն ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ3), որը գնահատվում է 20 միավորով:

17.3.1. Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցու-թյունը և ակտիվությունը գնահատ-վում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում:

17.3.2. Կիսամյակում դասընթացի գործնական (սեմինար) ու լաբորատոր աշխատանք-ներին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.3.3. Դրական (8 և ավելի) գնահատականների միջինի դեպքում ամփոփիչ գնահատման տեղեկագրում ուսանողին տրվում է 20 միավոր, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

17.4. Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (Գ4):

17.4.1. ընթացիկ քննությունների դրական գնահատականների միջինը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական:

17.4.2. Տվյալ դասընթացի ընթացիկ քննություն(ներ)ից 8-ից ցածր միավոր ստացած կամ ընթացիկ քննությանը չներկայացած ուսանողը հնարավորություն է ստանում այն (վերա)հանձնելու հանրագումարային քննության օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում:

17.4.3. Բանավոր քննության թույլատրվում են այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատական-ներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում (հանրագումարային քննության նախորդ օրը ընթացիկ քննություն(ներ)ը հանձնած ուսանողը հանրագումարային քննության չի թույլատրվում):

17.4.4. Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով: Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է:

17.4.5. Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում:

17.5 Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (Գ5), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են 11-20 միավորներով, դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը):

17.5.1. 10-ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր:

17.6. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների գնահատումից (Գ6), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

17.6.1. Ուսանողի ձեռք բերած կարողությունները գնահատվում են 8-20 միավորներով/քննության միավորին համարժեք/, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք-ները գնահատվել են դրական և ինքնուրույն կատարվող աշխատանք-ները (անհատական առաջադրանք-ները) գնահատվել են դրական:

18. Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գքնն = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

19. Ստուգարքով ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած հանրագումարային/կիսամյակային միավորը (գնահատականը) (Գստ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

19.1. դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր ( տես 14.ա կետը ):

19.2. ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր (տես 14.բ կետը ):

19.3. գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունից և ակտիվությունից (Գ3), որին տրվում է 20 միավոր (տես 14.գ կետը):

19.4. ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռքբերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների դրական գնահատականների (8 և բարձր) արդյունքների միջին գնահատականից (Գ4):

19.4.1. Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 20 բալանոց համակարգով: Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում:

19.5. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների (Գ5) և կարողությունների (Գ6) գնահատումից: Այս դեպքում նորից հմտություններն ու կարողությունները արժևորվում են տեսական և գործնական գիտելիքների դրական գնահատման դեպքում (տես 14. ե և գ կետերը):

20. Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$\text{Գստ.} = \text{Գ1} + \text{Գ2} + \text{Գ3} + \text{Գ4} + \text{Գ5} + \text{Գ6}$$

21. Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և(կամ) անհատական պարապմունքներ՝ ըստ ժամանակացույցի:

22. Կուրսային աշխատանքի կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «ՎՊԶ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգերով:

23. Պրակտիկական գնահատվում է քննության ձևով՝ 100 միավորանոց սանդղակով՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական կամ արտադրական պրակտիկաների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգերով:

24. Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման մասին» կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով):

#### **IV. Կիրարկման ընթացակարգը**

24. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում): Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է մշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8-միավորանոց թեստային առաջադրանք:

25. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, մերկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

26. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

27. Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

28. Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

29. Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

30. Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:

31. Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):

32. Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը համապատասխան

ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

33. Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:

34. Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):

35. Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է «չներկայացած»: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

### **V. Ստուգարքների ամփոփումը**

36. Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր «կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

37. Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական սեմինար պարապմունքները :

38. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:

39. 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

### **VI. Քննությունների անցկացումը**

40. Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջան-ներում՝ 19-20-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

41. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ:

42. Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:

43. Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:

44. Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կամ այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:



45. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

46. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

47. Տվյալ առարկայից դրական գնահատական ( 58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

48. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

49. Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

50. «Քննության չի թույլատրված» (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,

51. բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում է» գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

52. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

53. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

54. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

## **VII. Գնահատման սանդղակը և նշագրումը**

55. ՎՊԳ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

56. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

57. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

58. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս «Ակադեմիական ազնվության կարգեր») այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

## **VIII. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը**

59. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

60. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

61. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

62. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

63. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$\text{ԳԿ} = \sum (\text{Կրեդիտ})$$

64. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է  $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360 \cdot 500$  հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

65. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

66. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

67. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):

68. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

### **X. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը**

69. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

70. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

71. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

72. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

73. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

74. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

#### **XI. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը**

75. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

76. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

77. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ («գերազանց» գնահատականներ):

78. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

#### **XIII. Կրեդիտների փոխանցումը**

79. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի:

#### **XIV. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը**

80. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

81. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

83. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

84. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

**Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները**

Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12

61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

Հավելված 2

Ուսումնառության արդյունքների գնահատման 100 -միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5-բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100-բալանոց համակարգի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«գերազանց» (5)	96-100	A+
«գերազանց» (5)	91-95	A
«գերազանց» (5)	86-90	A-
«լավ» (4)	81-85	B+
«լավ» (4)	76-80	B
«լավ» (4)	71-75	B-
«բավարար» (3)	67-70	C+
«բավարար» (3)	62-66	C
«բավարար» (3)	58-61	C-
«անբավարար»	0-57	D
«ստուգված»	58-100	S
«չստուգված»	0-57	U

## **Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը**

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

## **Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎԴՄԻ կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

## Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

### **1.Տեղեկագրի նպատակը**

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է մանկավարժության ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:



**1.1 Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս**

**ՅԼ/Բ-1007 Յայոց լեզու (2 կրեդիտ)**

**8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական Շաբաթական 2 ժամ 1-ին կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է հայեցի դաստիարակության խնդիրների լուծումը, ինչպես նաև ապագա մասնագետի գրավոր և բանավոր կիրթ խոսք մշակելու, ապագա ուսուցչի, գիտնական-հետազոտողի մոտ գործնական, գիտական ոճերին ծանոթացմամբ և կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.

Ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները, համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը:

2. Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.

Գործնականում կիրառել ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները:

3. Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.

ՀՀ պետական լեզվի գործառույթների, կիրառական առանձնահատկությունների նորմերին:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Հայերենը որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու: Թեմա 2.

Արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառներ. ընդհանուր գաղափար: Թեմա 3.

Հայերենագիտություն և հայագիտություն: Հայագիտական կենտրոններ: Թեմա 4.

Հայերենի հնչյունական համակարգը. ձայնավորներ և երկհնչյուններ, դրանց

ուղղագրությունը և ուղղախոսությունը: Թեմա 5. Հայերենի հնչյունական համակարգը. բաղաձայններ, դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը: Թեմա 6. Բառագիտություն. բառապաշար և բառակազմություն: Բասոապաշարի հարստացում. ստուգաբանական և բառակազմական վերլուծությունն իբրև բառապաշարի հարստացման միջոց: Թեմա 7. Գործնական գրություններ: Թեմա 8. Մասնագիտական տերմինաբանություն: Թեմա 9. Խոսքի մասեր: Հայերենի ձևաբանական նորմայի առանձնահատկությունները: Բառապաշարի հարստացումը ձևաբանությունն ուսումնասիրելիս: Թեմա 10. Շարահյուսական կապակցման եղանակներ և միջոցներ: Բառակապակցություն և նախադասություն: Կիրառական հմտություններ: Կապակցված խոսքի մշակումը և կատարելագործումը նախադասության ուսուցանման միջոցով: Թեմա 11. Կետադրություն: Կիրառական հմտություններ: Թեմա 12. Ամփոփում: Հայերեն բանավոր և գրավոր խոսքի առանձնահատկությունները, տարածված սխալների բնույթը, դրանց վերացմանն ուղղված գործնական աշխատանք գրավոր տեքստի և նրա բանավոր վերարտադրման հմտությունների ամրապնդման նպատակով:

**Յ/բ-0301. Յայոց լեզու և գրականություն – 2 կրեդիտ**

**Դասախոսություն -8, գործնական - 24 ժամ, (շաբաթական - 2 ժամ),**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Ուսանողներին զինել հայ գրականության պատմությանը վերաբերող գիտելիքներով՝ շեշտը դնելով գրապատմական շրջափուլերի առանցքային հեղինակների և գործերի վրա: Սովորեցնել բնագրի վերլուծություն կատարել, մասնակցել քննարկում-բանավեճերի, անգիր հատվածներ հանձնարարել չափածո գրական գործերից: Գրականության զարգացման պատմության մասին ընդհանուր պատկերացում ձևավորել՝ առնչակից տեսական հարցերի պարզաբանումներն ամուր հիմքերի վրա դնելով, ինչպես որոշ գրական ուղղություններ և մեթոդներ, գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ, կրկնության շարահյուսական ֆիգուրներ:

## ***Կրթական արդյունքները.***

### **Պետք է իմանա.**

Տվյալ դասընթացն ավարտելուց հետո ուսանողը պետք է ունենա առարկայի վերաբերյալ համապատասխան թեմաներից մշակումներ, գրի առնվազն երկու ռեֆերատ, կարդացած լինի հանձնարարված գեղարվեստական գրականությունը, լիարժեք պատկերացում ունենա հայ գրականության ընթացքի և զարգացման վերաբերյալ, կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում: Միևնույն ժամանակ ուսանողը պետք է անգիր հատվածներ իմանա հանձնարարված չափածո գործերից, մասնակցած լինի բանավիճային քննարկումներին:

### **Պետք է կարողանա**

- գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ գեղարվեստական երկերը,
- անգիր հատվածներ ասել պոեզիայից,
- զանազանել գրական մեթոդների և ուղղությունների տարբերակիչ սկզբունքները, ժանրային կառուցվածքները,
- գրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր կարծիք հայտնել:

**Պետք է տիրապետի** գրական-գեղարվեստական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարման մասնակցելու կանոններին:

### ***Բովանդակությունը***

1. Բանահյուսության գեղարվեստա-ճանաչողական գործառույթը: Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր:
2. «Սասնա ծռեր» էպոսը:
3. Գրիգոր Նարեկացի, «Սատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը:
4. Միջնադարյան տաղերգություն, հայրեններ:
5. Աբովյանը և լուսավորական շարժումը:
6. Զ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը:
7. Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Րաֆֆու «Սամվել» վեպը:
8. Գր. Ջոհրապը և հայ նորավիպագրությունը:
9. Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը:
10. Զ. Թումանյան:

11. Ավ . Իսահակյան:

12. Վ. Տերյանի քնարերգությունը:

13. Ե. Չարենցի պոեզիան:

14. Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/

15. Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ / Զամաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/:

16. Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ / Զ. Սահյան, Պ. Սևակ, Զր. Մաթևոսյան /:

### **Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (2կրեդիտ)**

#### **18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք (Շաբաթական 2 ժամ) 1-ին կիսամյակ, ստուգարք**

##### ***Նպատակը.***

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ:

##### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կինանա V-XIX դարերի հայ ազատագրական պայքարի պատմությունը,
2. կկարողանա ներկայացնել Հայաստանի ազատագրության ծրագրերը
3. կկարողանա ներկայացնել հայ ազատագրական շարժման նախադրյալները, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորումը
4. կտիրապետի հայ ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների
5. կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

##### ***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** V դ. ազատագրական պայքարը **Թեմա 2.** VI-VII դդ. ազատագրական պայքարը: **Թեմա 3.** VIII-IX դդ. ազատագրական պայքարը արաբական

տիրապետության դեմ **Թեմա 4.** Հայաստանի ազատագրական ծրագրերը **Թեմա 5.** Հայ ժողովրդի ազատագրական որոնումները XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին քառորդին **Թեմա 6.** Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության նրա ծրագիրը **Թեմա 7.** Հայաստանի ազատագրության ծրագրերը XVIII դարի II կեսին **Թեմա 8.** Ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում **Թեմա 9.** Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին **Թեմա 10.** Հայ հասարակական քաղաքական հոսանքները **Թեմա 11** Արևմտահայ ազգային ազատագրական շարժումների վերելքը XIX դ. 90-ական թթ: **Թեմա 12.** Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացումը: **Թեմա 13.** Ֆիդայական շարժումը: **Թեմա 14.** Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները:

### **Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (2կրեդիտ)**

**18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք (Շաբաթական 2 ժամ)**  
**2-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Նպատակը.**

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության նոր շրջանի ազատագրական պայքարի պատմության, Հայոց Մեծ եղեռնի, հայոց պետականության պատմության վերաբերյալ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. իմանա Հայոց Մեծ եղեռնի պատմությունը, կկարողանա ներկայացնել 1915թ. ինքնապաշտպանական մարտերը
2. կկարողանա ներկայացնել մայիսյան հերոսամարտերը և հայոց պետականության վերականգնման նախադրյալները
3. կտիրապետի արցախյան շարժման և անկախ պետականության վերականգնման պատմությանը

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Ազգային կուսակցությունների առաջացումը: **Թեմա 2.** Հայկական հարցը 1912-1914թթ.: **Թեմա 3** Հայոց Մեծ եղեռնը: **Թեմա 4.** 1915թ. ինքնապաշտպանական

մարտերը: Թեմա 5 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը: Թեմա 6. Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ. Թեմա 7. Արցախյան շարժման նոր փուլը: Թեմա 8. Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը: Թեմա 9. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

### **ՈԼ0081 Ռուսաց լեզու - 1 (4 կրեդիտ)**

#### **Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

#### **1-ին կիսամյակ, ստուգաք**

#### ***Նպատակը.***

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

#### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
2. ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
3. կիրառել ռուսաց լեզվի քերականական կառուցվածքը.
4. վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

#### ***Բովանդակությունը.***

Թեմա 1. Խաղաղության մշակույթ: ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը: Տեսական նյութ. Հնչյունաբանություն: Ռուսաց լեզվի հնչյունական համակարգը; ռուսերենի շեշտ; բանավոր և գրավոր խոսքի հնչերանգը:

Թեմա 2. Ռուսաց լեզուն որպես ՄԱԿ-ի աշխատանքային լեզուներից մեկը: Քերականական նյութ. Գոյականի քերականական սեռը: Ընդհանուր քերականական սեռի բառեր: Որոշչի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Մարդ: Դիմանկար: Բնավորություն: Ընտանիք: Քերականական նյութ. Որոշի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում:

Գոյականների հոլովները:

Թեմա 4. Տուն, բնակարան, քաղաք, որում ես ապրում եմ: Քերականական նյութ. Գոյականի թիվը: Եզակի թիվ, հոգնակի թիվ: Անեզական և անհոգնական գոյականներ:

Թեմա 5. Կրթություն: Կրթության համակարգի Հայաստանում: Քերականական նյութ. Ածական անուն: Որական, հարաբերական և ստացական ածականներ: Ածականի համեմատական աստիճանները: Ամբողջական և կրճատ ձևերը: Նրանց կիրառությունը կապակցություններում և նախադասություններում: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 6. Երիտասարդությունը 21 դարում: Քերականական նյութ. Թվական անուն: Թվականի տեսակները, ուղղագրությունը, կապակցությունները և շարահյուսական դերը: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 7. Աշխատանքի նշանակությունը մարդու կյանքում: Քերականական նյութ. Դերանուն: Դերանունների տեսակները: Քերականական կառույցների կազմում:

## **ՈԼ0081 Ռուսաց լեզու - 2 (4 կրեդիտ)**

### **Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

### **2-րդ կիսամյակ, ստուգարք**

#### ***Նպատակը.***

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

#### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.

2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.

3. կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարգերին և շարահյուսական կառուցածքներին.

4. կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը (եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

***Քոլանդակությունը.***

Թեմա 1. Գիտություն և տեխնիկա: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 2. Մշակույթ և արվեստ: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Առողջություն: Հանդիստ: Սպորտ: Ժամանց: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 4. Բնություն: Բնապահպանություն: Էկոլոգիա: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Ժամանակի պարագա և տեղի պարագա: Կառավարման սկզբունքով կառուցված պարագայական կապակցություններ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 5. ՁԼՄ-ներ և դրանց դերը ուսագ լեզվի ուսուցման օրծում: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Քերականական կառույցների կազմում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ:

Թեմա 6. Հայրենիք: Մեր հանրապետությունը: Կենսաձևը Հայաստանում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Կետադրություն:

**Փ/բ-0478. Փիլիսոփայության հիմնահարցեր – 4 կրեդիտ**

**Դասախոսություն - 28 ժամ, սեմինար – 20 ժամ, շաբաթական - 3 ժամ 4-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***



- Ուսանողներին զինել գիտելիքներով փիլիսոփայության և նրա խնդիրների մասին:

- Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքների պաշարը:

-Ուսանողներին գաղափար տալ մարդու էության, բնության և հասարակության օրենքների և օրինաչափությունների մասին:

-Օգնել ուսանողներին՝ տեսական գիտելիքները օգտագործել գործնականում:

- Հիմք ստեղծել հասարակական մյուս գիտությունների հետագա ուսումնասիրության համար:

### **Կրթական արդյունքները.**

- կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- տիրապետեն փիլիսոփայության հետազոտության մեթոդներին,
- կարողանան ըմբռնել բնության և հասարակական օրենքների բնույթը,
- կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- կարողանան տարբերակել փիլիսոփայական տարբեր ուղղությունների առանձնահատկությունները:
- որպես մեթոդաբանություն փիլիսոփայությունը կիրառեն այլ գիտությունների ուսումնառության ընթացքում:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1**Փիլիսոփայությունը որպես գիտություն: **Թեմա 2** Փիլիսոփայության զարգացման պատմական էտապները: **Թեմա 3** Մատերիա և կեցություն: **Թեմա 4** Հոգևորի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: **Թեմա 5** Ջարգացման հիմնախնդիրը **Թեմա 6** Իմացության տեսություն: **Թեմա 7** Գիտական իմացության յուրահատկությունը: **Թեմա 8** Սոցիալական փիլիսոփայություն: **Թեմա 9** Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: **Թեմա 10** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա11** Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: **Թեմա12** Հասարակական գիտակցություն: **Թեմա13** Արժեքաբանության փիլիսոփայություն

## Կամընտրական դասընթացներ

**OL0671 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) -1 (4 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

**1-ին կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.
2. կսովորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.
3. ձեռք կբերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

### ***Բովանդակությունը.***

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Թեմա 4. Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը և այլն:

**OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) - 2 (4 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

## **2-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.

2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.

3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանողական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

**OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) - 3 (4 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

**3-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հիմնարար գիտելիքներով և լեզվի քերականության ձևաբանության և շարահյուսության բաժինների և բանավոր խոսքի հիմունքների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.

2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.

3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

**Բովանդակությունը**

Թեմա 1 – Մակբայների համեմատության աստիճանը, Ածականների համեմատության աստիճանը: Թեմա 2 - Անգլերեն լեզվի ժամանակաձևերի ուսումնասիրություն, Ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևեր: Թեմա 3 - Միացյալ թագավորություն, աշխարհագրական բառապաշար, լրացուցիչ տեղեկություններ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության մասին: Թեմա 4 - Հողերի կիրառությունը հատուկ անունների հետ, գոյականական ածանցներ

**OL0671 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) – 1 – (4 կրեդիտ)**

**Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք, \_\_\_\_\_**

**1-ին կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել դպրոցում ձեռք բերած գիտելիքները գերմաներեն ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրության նպատակով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջորդ ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին

***Բովանդակությունը.***

Թեմա 1. Եղանակավորող բայեր, սուբյեկտային և օբյեկտային բայեր: Թեմա 2. Ածական անուն. Թեմա 3. Հոմանիշ և հականիշ բայեր: Ամենատարածված ասացվածքները գերմաներեն և հայերեն լեզուներով: Բառի բազմիմաստությունը. Թեմա 4. Ազատ թեմաների ինքնուրույն կազմում “Այսօր իմ ծննդյան օրն է”, “Իմ մասնագիտությունը”, “Գերմանիայի քաղաքները”, մի շարք բանաստեղծություններ Հ. Հայրենի, Վ. Գյոթերի ստեղծագործություններից:

**OL0672 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) – 2 – (4 կրեդիտ)**

**Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

Հարստացնել ուսանողների գիտելիքները բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակով և ուսանողների բառապաշարային և քերականական գիտելիքները հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան արտահայտել իրենց մտքերը, առօրյա խոսակցական թեմաներով, ինչպես նաև կատարեն ազատ թարգմանություններ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա ունկնդրելով ճիշտ հասկանալ բանավոր խոսքը
2. կկարողանա գրել փոխադրություն
3. կկատարի համապատասխան թարգմանություն գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:

***Բովանդակություն.***

Թեմա 1. Գոյականների հոլովման համակարգը և հոլովների կիրառական նշանակությունը: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաբերական դասակարգումը: Թեմա 3. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է “Ես ուսանող եմ”, “Սուրճի սեղանի շուրջը” (վարվելաձևը սեղանի շուրջը), “Գրադարանում”, “Տարվա եղանակները”, “Իմ սիրելի գրողը”, “Հայաստանի պատմությունից”, “Գնումներ խանութում”, “Ընկերական շրջապատում” և այլն:

**OL0672 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) – 3 – (4 կրեդիտ)**

**Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),**

**3-րդ կիսամյակ, ստուգաթք, Նպատակը.**

Ձարգացնել ուսանողների գիտելիքները լեզվի կառուցվածքի, առանձնահատկությունների, խոսքամասային ձևերի մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կառուցել հստակ ու սահուն խոսք՝ ճիշտ կիրառելով գերմաներեն լեզվի ժամանակաձևերը
2. կկարողանա գրել շարադրություն
3. կկատարի համեմատաբար բարդ թարգմանություններ գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

**Բովանդակություն**

Թեմա 1- Շեշտադրություն, ուղղագրություն, բառեր և քերականություն

Թեմա2- Հոդը, գործածությունը, բայ, հրամայական եղանակ, բառեր, շարադասություն:

Թեմա 3- Ֆոնետիկական վարժություններ, օժանդակ բայերի գործածությունը որպես ինքնուրույն բայեր, հարցական նախադաս. շարադասությունը, վարժություններ և տեքստ:

Թեմա 4 - Ընթերցանության օրենքները, գոյական հոլովումը, դերանուն, բառակազմություն, արտասանություն, բառապաշարի ուսուցում: Գրավոր և բանավոր վարժություններ:

**OL0671 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 1 - 4 կրեդիտ**  
**Շարաքական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),**  
**1-ին կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները. դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կկարողանա ընթերցել ադապտացված տեքստեր, հաղորդակցվել ֆրանսերենով:

***Բովանդակությունը***

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: Թեմա 2. Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: Թեմա 3. Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: Թեմա 4. Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Իգական սեռի և հոգնակի թվի կազմությունը: Թեմա 5 Թվական անուն : Թեմա 6. Հարցական ու ժխտական նախադասությունների կազմությունը: Թեմա 7 Ֆրանսերենի առավել գործածական նախդիրներն ու շաղկապները:

**OL0672 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 2 - 4 կրեդիտ**  
**Շարաքական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),**

## **2-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերեն լեզվի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային պարզ հմտություններ, գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- \* կկարողանա ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
- \* կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը,
- \* կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

### ***Բովանդակությունը.***

Թեմա 1. Սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերը: Թեմա 2. 3-րդ խմբի հիմնական անկանոն բայերը: Թեմա 3. Հրամայական եղանակի կազմությունը: Թեմա 4. Դերանվանական բայեր: Թեմա 5. Ածական անուն, համեմատության աստիճանների կազմությունը: Թեմա 6. Դերանվանական ածականներ /ստացական, ցուցական,, անորոշ Թեմա 7. Ֆրանսերենի բառակազմական միջոցները: Գործածական նախածանցներն ու վերջածանցները:

## **OL0673 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 3 - 4 կրեդիտ**

**Շաբաթական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),**

## **3-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ֆրանսերենի բառապաշարի և քերականության վերաբերյալ ունեցած գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ:



### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ընդհանուր հաղորդակցական նշանակության տեքստեր.
2. կկարողանա ֆրանսերեն լեզվով հաղորդակցվել առօրյա թեմաների շուրջ:

### **Բովանդակությունը**

Թեմա 1. Սահմանական եղանակի հիմնական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունն ու գործածությունը: Թեմա 2. ժամանակների համաձայնեցումը: Թեմա 3.: Անդեմ բայեր ու արտահայտություններ : Թեմա 4. Դերանունների հիմնական տեսակները (ստացական, ցուցական, անորոշ, հարաբերական), դրանց քերականական կարգերի բնութագիրը: Թեմա 5. Մակբայների տեսակներն ու քերականական կարգերը:

### **Փ/բ - 0481 Մշակութաբանություն 2 կրեդիտ**

**Դասախոսություն – 18 ժամ, սեմինար- 14 ժամ, (շաբաթական - 2 ժամ)**

**3-րդ կիսամյակ, առուգաբք**

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանանչելու, վերլուծելու և գնահատելու մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

### **Կրթական արդյունքները.**

պետք է իմանա

- մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները

Պետք է կարողանա

- ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարրերի փոխներթափանցումները
- ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները
- ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները
- մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում
- ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ տիպի)

Պետք է տիրապետի

մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները: **Թեմա 2.** Մշակույթի բնորոշումը: **Թեմա 3.** Մշակույթի գործառույթները **Թեմա 4.** Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ: **Թեմա 5.** Ջանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 6.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: **Թեմա 7.** Բնություն և մշակույթ: **Թեմա 8.** Հասարակություն և մշակույթ: **Թեմա 9.** Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները

Հ/բ – 0304 Սոցիոլոգիա –2 կրեդիտ

Դասախոսություն –18 ժամ, սեմինար - 14 ժամ, (շաբաթական - 2 ժամ)

3-րդ կիսամյակ, ստուգաք

**Նպատակը.**

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին:

**Կրթական արդյունքները.**

**- ՊԻՏԵՆԱ՝**

Հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները:

**-ԿԱՐՈՂԱՆԱ՝**

Նախագծել սոցիալական որևէ երևույթի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագիր:

**- ՏԻՐԱՊԵՏԻ՝**

Սոցիոլոգիական հետազոտության մշակման հիմնական ձևերին, մեթոդներին, գործիքներին, վերլուծության եղանակներին:

**Բովանդակությունը**

Թեմա 1. Սոցիոլոգիան իբրև գիտություն: Թեմա 2. Սոցիոլոգիական հետազոտություն: Թեմա 3. Հասարակություն: Թեմա 4. Մշակույթ: Թեմա 5. Սոցիալականացում: Թեմա 6 Շեղվող վարք: Թեմա 7. Հասարակության սոցիալական կառուցվածքը: Թեմա 8. Սոցիալական ստրատիֆիկացիա: Թեմա 9. Գլոբալացում:

**Հ/բ- 0354 Կրթության սոցիոլոգիա –2 կրեդիտ**

**Դասախոսություն –18 ժամ, սեմինար - 14 ժամ, (շաբաթական - 2 ժամ)**

**3-րդ կիսամյակ, ստուգաք**

**Նպատակը.**

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել լոկալ և գլոբալ կրթական համակարգերում տեղի ունեցող գործընթացների և դրանց սոցիոլոգիական՝ հնարավոր չափելիության վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

**- ՊԻՏԵՆԱ՝**

Կրթության ինստիտուտի դերը հասարակության գործառնության սահմաններում՝ այլ ինստիտուտների հետ փոխկախվածության տեսանկյունից:

#### **-ԿԱՐՈՂԱՆԱ՝**

Կազմակերպել կրթական գործընթացի արդյունավետության գնահատմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտություն:

#### **-ՏԻՐԱՊԵՏԻ՝**

Կրթության սոցիոլոգիական հետազոտման հիմնական մեթոդներին, գործիքների մշակման ձևերին, վերլուծության հիմնական եղանակներին:

### ***Բովանդակությունը***

**Թեմա 1.** Կրթության սոցիոլոգիայի էությունը. **Թեմա 2.** Գրագիտություն, դպրոցական կրթության առաջացումը. **Թեմա 3.** Կրթության հիմնական ձևերը **Թեմա 4.** Կրթության ինստիտուտի սոցիալական ֆունկցիաները **Թեմա 5.** Դպրոցական կրթության համակարգերի համեմատությունը արդյունաբերապես զարգացած երկրներում. **Թեմա 6.** Բարձրագույն կրթություն. Միջազգային փորձի համեմատական վերլուծություն **Թեմա 7.** Կրթություն եւ անհավասարություն **Թեմա 8.** Կրթության ինստիտուտի սոցիոլոգիական հետազոտություն **Թեմա 9.** Կրթության եւ տնտեսության կապը

**Փ/բ - 0479 Իրավագիտություն 2 կրեդիտ**

**Դասախոսություն – 18 ժամ, սեմինար - 14 ժամ, (շաբաթական - 2 ժամ)**

**4-րդ կիսամյակ, ստուգարք**

#### **Նպատակը.**

1. Ուսանողներին զինել գիտելիքներով իրավունքի, հատկապես մարդու իրավունքների, դրանց ներպետական և միջազգային պաշտպանության վերաբերյալ:
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, իրավագիտական գիտելիքները.
3. Ուսանողներին ծանոթացնել ՀՀ օրենսդրության հետ:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողները պետք է.

- պետք է տիրապետեն դասընթացի թեմաներին
- կարողանան ճիշտ գնահատել մարդու՝ որպես ժամանակակից իրավական պետություններում հռչակված բարձրագույն արժեքի դերն ու տեղը պետական կառույցների համակարգում, ճիշտ պատկերացում կազմեն քաղաքական իշխանության վերաբերյալ, ծանոթանան իրավունքի համակարգում ընդգրկված ճյուղերի հետ:
- կարողանան որոշ տեսական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ

### **Բովանդակությունը.**

**ԹԵՄԱ 1.** ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ, **ԹԵՄԱ 2.** ՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ, **ԹԵՄԱ 3.** ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ **ԹԵՄԱ 4.** ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ **ԹԵՄԱ 5.** ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ **ԹԵՄԱ 6.** ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՐԳԸ **ԹԵՄԱ 7.** ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԱԿԱՐԳԸ **ԹԵՄԱ 8.** ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ **ԹԵՄԱ 9.** ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ **ԹԵՄԱ 10.** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**Փ/բ - 0476 Քաղաքագիտություն 2 կրեդիտ**

**Դասախոսություն – 18 ժամ, սեմինար - 14 ժամ, (շաբաթական - 2 ժամ)**

**4-րդ կիսամյակ, ստուգաք**

### **Նպատակը**

- ուսանողներին զինել գիտելիքներով քաղաքականության և նրա խնդիրների մասին:
- Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքների պաշարը:
- ուսանողներին գաղափար տալ հասարակության քաղաքական գործունեության, օրենքների և օրինաչափությունների մասին:

- Օգնել ուսանողներին՝ տեսական գիտելիքները օգտագործել գործնականում:
- Հիմք ստեղծել հասարակական մյուս գիտությունների հետագա ուսումնասիրության համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- տիրապետեն քաղաքագիտության հետազոտության մեթոդներին,
- կարողանան ըմբռնել հասարակական քաղաքական համակարգի բնույթը,
- կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- կարողանան տարբերակել քաղաքագիտական տարբեր ուսմունքների առանձնահատկությունները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Քաղաքագիտության առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Քաղաքականության սուբյեկտի էությունը և ձևերը: **Թեմա 3.** Հասարակության իրավաքաղաքական համակարգը, նրա տիպերը: **Թեմա 4.** Պետություն, նրա տիպերը և ձևերը: **Թեմա 5.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 6.** Հասարակական-քաղաքական կազմակերպություններ: **Թեմա 7.** Անցումային հասարակության քաղաքական համակարգ: **Թեմա 8.** Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: **Թեմա 9.** Քաղաքական մշակույթ, ձևերը և ֆունկցիաները: **Թեմա 10.** Մարդու դերը քաղաքականության մեջ:

**S/բ-0515 Տնտեսագիտություն - 2 կրեդիտ**

**Դասախոսություն – 18 ժամ, սեմինար – 14 ժամ, շաբաթական - 2 ժամ**

**4 - րդ կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին.
2. կհմանա տնտեսագիտական գիտելիքների դերն ու գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում.
3. կկարողանա ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունները.
4. կհմանա առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: ***Թեմա 2.*** Ապրանքային արտադրություն: Ապրանք և փող: ***Թեմա 3.*** Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 4.*** Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: ***Թեմա 5.*** Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: ***Թեմա 6.*** Չեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: ***Թեմա 7.*** Ծախքերի տեսությունը: Արտադրություն և ծախքեր: ***Թեմա 8.*** Շահույթ և շահութաբերություն: Չեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: ***Թեմա 9.*** Ազրո-արդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: ***Թեմա 10.*** Կուտակում, սպառում և խնայողություն: ***Թեմա 11.*** Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: ***Թեմա 12.*** Ինֆլյացիա և գործազրկություն: ***Թեմա 13.*** Դրամավարկային համակարգի էությունը: Բանկեր: ***Թեմա 14.*** Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: ***Թեմա 15.*** Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: ***Թեմա 16.*** Համաշխարհային տնտեսությունը և

զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

## **1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս**

**Յ/բ-010400 Համակարգչից օգտվելու հմտություններ- 2 կրեդիտ**  
**Դասախոսություն -8 ժամ, գործնական -24 ժամ, շաբաթական - 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք**

### **Նպատակը.**

Ուսանողներին զինել էՀՄ-ների, նրանց առանձին հարմարանքների, արտաքին սարքերի, կիրառական ծրագրային համակարգերի, ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների, նրանց աշխատանքի սկզբունքների և կիրառության ոլորտների վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներով, որոնք կնպաստեն ուսումնառության հետագա մասնագիտական ձեռքբերումների նվաճմանը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա օգտվել համակարգչի սարքավորումներից, ֆայլային և ծրագրային համակարգերից:
- կտիրապետի համակարգչի ծրագրերի հետ համագործակցային աշխատանքին և խմբագրական աշխատանքների իրականացմանը:
- կկարողանա մասնագիտական որոշ հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն աշխատանքներ:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Տեղեկություններ տեղեկատվական տեխնոլոգիաների, ժամանակակից անհատական համակարգիչների մասին:

**Թեմա 2.** Օպերացիոն համակարգեր և միջավայրեր:

**Թեմա 3.** Տեքստային խմբագիր MS WORD ծրագիր:

**Թեմա 4.** PowerPoint համակարգ:

**Թեմա 5.** MS EXCEL էլեկտրոնային աղյուսակներ:



**0875. /բ-Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմն.2  
կրեդիտ Դասախոսություն –24 ժամ, գործնական -8ժամ, (շաբաթական 2  
ժամ)**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը**

Դասընթացի ժամանակ ուսանողին տալիս ենք այն գիտելիքները, որոնք կօգնեն բնական աղետների, վթարների և հակառակորդի կողմից հարձակման ժամանակակից միջոցների կիրառման հետևանքներից պաշտպանելու ձևերի և մեթոդների իմացությամբ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա բնակչության և քաղաքացիական պաշտպանության հիմունքները,
- կտիրապետի հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցներից, բնական աղետներից և վթարներից բնակչության պաշտպանության եղանակներին ու միջոցներին,
- կկարողանա կազմակերպել և իրականացնել պարապմունքներ հանրակրթական դպրոցների ցածր դասարանների աշակերտների հետ:

**Բովանդակությունը**

**Թեմա 1.**ԱՒ-ուՆ և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կառավարման պետական միասնական համակարգը:

**Թեմա 2.**ԱՒ, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղղիները:

**Թեմա 3.**ԱՒ, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղղիները:

**Թեմա 4.**Հարձակման ժամանակակից զանգվածային և սովորական միջոցները:

**Թեմա 5.**Քիմիական վարածան օջախները և քիմական իրադրությունների

□ նահատման մեթոդները:

**Թեմա 6.**Քիմիական վարածան օջախները և քիմական իրադրությունների

□ նահատման մեթոդները:

**Թեմա 7.**Ճառագայթային վարակման օջախները և ճառագ. իրադրության

□ նահատ.մեթոդները:

**Թեմա 8.**Ճառագայթային վարակման օջախները և ճառագ. իրադրության

□ նահատ.մեթոդները:

**Թեմա 9.**ԱՒ-ում և պատերազմների ժամանակ բնակչ. պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոց. կազմակերպումը:

**Թեմա 10.**ԱՒ-ում և պատերազմների ժամանակ բնակչ. պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոց. կազմակերպումը:

**Թեմա 11.**Պատերազմների ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպումը:

**Թեմա 12.**Արտ. իրավիճակների ռիսկի □ նահատումը:

**Թեմա 13.**ԱՒ և ՔՊ պլանների կազման հարցերը:

**Թեմա 14.**ԱՒ-ում օպերատիվ միջոց.-ի կազմ.-ումը:

**Թեմա 15.**Հանրակրթական դպրոց.-ի համակար□ի խնդիրները՝ բնակչ. և ք.պ. բնա□ավառում:

**Թեմա 16.**ԱՒ-ում և պատ. ժամանակ ուսումնական հաստատություն. □ ործունեության կայուն. բարձրացման ուղղիները և եղանակները:

**Թեմա 17.**Բնակչ.-ն ՔՊ հարցերով ուսուց. կազմ.-ումը:

**Թեմա 18.**ԱՒ-ում և ռազմ. դրության ժամ. բնակչութ. բարոյա-հո□. պատրաստման հարցերը:

**Թեմա 19.**ԱՒ-ում և ռազմ. դրության ժաման. դպրոց. օբյեկտ. Փ.Ա.Վ.Վ. աշխատ. կազմակերպ.-ը:

**Թեմա 20.**ԱՒ-ում և ռազմ. դրության ժաման. դպրոց. օբյեկտ. Փ.Ա.Վ.Վ. աշխատ. կազմակերպ.-ը:

Այցելություն փրկարարական ջոկատ:

**Թեմա 21.**Հանրակ. դպրոց.-ում 2-րդ, 5-րդ և 6-րդ դա - սարանների աշակերտների հետ ԱՒ և ՔՊ հիմնահարցերով պարապ. անց մեթոդիկան: Գործնական պարապմունք սոսմիկ կայանում:

**Թեմա 22.**Գործնական պարապմունք սոսմիկ կայանում:

**Կ 0913 Էկոլոգիա և բնապահպանության հիմնահարցեր` 2 կրեդիտ**  
**Դասախոսություն` 18 ժամ, սեմինար 14 ժամ, շաբաթական 2 ժամ**  
**4-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը***

. Խորացնել գիտելիքները և ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ <<Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ>> առարկայի վերաբերյալ, կրթել բնապահպանական և բնագիտական գիտելիքներով:

***Կրթական արդյունքները.***

- 1.կտիրապետի բնապահպանական, էկոլոգիական գիտելիքներին և մեթոդներին:
- 2.կկարողանա ճիշտ դաստիարակել աճող սերնդին էկոլոգիական և բնապահպանական կրթությամբ ու դաստիարակությամբ:
- 3.Ճիշտ կուսուցանի շրջակա միջավայրը անաղարտ պահելու և գալիք սերունդներին փոխանցելու համար:

***Բովանդակություն.***

ԹԵՄԱ 1. Էկոլոգիան որպես գիտություն: ԹԵՄԱ 2. Բնակության միջավայր: ԹԵՄԱ 3. Էկոլոգիական գործոններ: ԹԵՄԱ 4. Տեղախմբային էկոլոգիա: ԹԵՄԱ 5. Կենսահամակարգ ԹԵՄԱ 6. Էկոհամակարգեր: ԹԵՄԱ 7. Կենսոլորտը որպես կենդանի համակարգերի կազմավորման բարձր մակարդակ: ԹԵՄԱ 8. Էկոլոգիական համերկրային հիմնախնդիրներ, բնօգտգործում, բնապահպանություն: ԹԵՄԱ 9 . Բնապահպանության հիմնահարցերը և խնդիրները: ԹԵՄԱ 10. Հողոլորտ (լիթոսֆերա): ԹԵՄԱ 11. Ջրոլորտ (հիդրոլորտ): ԹԵՄԱ 12. Մթնոլորտ (աթմոսֆերա): ԹԵՄԱ 13 Բուսական աշխարհ (ֆլորա): ԹԵՄԱ 14. Կենդանական աշխարհ (ֆաունա): ԹԵՄԱ 15. Բնական պաշարների օգտագործման,

պահպանության և հարստացման խնդիրները: ԹԵՄԱ16.Մարդու բնապահպանություն

### **Կամընտրական դասընթացներ**

**Կ 0926 Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում -2 կրեդիտ, 18 դասախոս., 14 գործնական շաբաթական 2 ժամ 6-րդ կիսամյակ ստուգարք ,**

#### **Նպատակը.**

ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժվածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար , ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ

#### **Կրթական արդյունքները.**

- ✓ Կատարել վիրակապում, բեկակալի տեղադրում
- ✓ Կատարել ստամոքսի լվացում, հոգնա
- ✓ Ջերմաչափում, պուլսի որոշում, Ձ/ ճ չափում
- ✓ Այրվածքի մակերեսի և խորության որոշում
- ✓ Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժածների մոտ
- ✓ Տուժածի տեղափոխում
- ✓ կատարել արյունահոսության ժամանակավոր դադարեցում

#### **Դասընթացի բովանդակությունը**

ԹԵՄԱ 1. Հասկացություն հիվանդության մասին :Տուժածի քննության մեթոդները :  
ԹԵՄԱ 2. Վերակենդանացման միջոցառումներ: ԹԵՄԱ 3. Թունավորումներ : ԹԵՄԱ  
4. Վնասվածքներ: ԹԵՄԱ 5. Ջերմային խանգարումներ: ԹԵՄԱ 6.  
Արյունահոսություններ: ԹԵՄԱ 7. Վիրակապություններ: Վիրակապություններ: ԹԵՄԱ 8.

Առողջ ապրելակերպի կանոնները: ԹԵՄԱ 9. Ինֆեկցիոն հիվանդություններ: ԹԵՄԱ 10. Սեռավարակներ : Անվտանգ սեռական կապեր :Պրոֆեսիոնալ հիվանդություններ

**Կ 0926 Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն**

**2 կրեդիտ**

**18 դասախոս., 14 գործնական շաբաթական 2 ժամ**

**6-րդ կիսամյակ ստուգարք**

**Նպատակը.**

ուսանողներին տալ գիտելիքներ առողջ ապրելակերպի կանոնների, արտակարգ իրավիճակներում գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու մասին , ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ

***Կրթական արդյունքները.***

- ✓ Կատարել վիրակապում, բեկակալի տեղադրում
- ✓ Կատարել ստամոքսի լվացում, հոգնա
- ✓ Ջերմաչափում, պուլսի որոշում, Ձ/ ճ չափում
- ✓ Այրվածքի մակերեսի և խորության որոշում
- ✓ Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժածների մոտ
- ✓ Տուժածի տեղափոխում
- ✓ կատարել արյունահոսության ժամանակավոր դադարեցում

**Դասընթացի բովանդակությունը**

ԹԵՄԱ 1. Հասկացություն հիվանդության մասին :Տուժածի քննության մեթոդները :  
ԹԵՄԱ 2. Վերակենդանացման միջոցառումներ ԹԵՄԱ 3. Թունավորումներ :  
ԹԵՄԱ 4. Վնասվածքներ :

ԹԵՄԱ 5. Ջերմային խանգարումներ:

ԹԵՄԱ 6. Արյունահոսություններ :

ԹԵՄԱ 7. Վիրակապություններ: Վիրակապություններ :

ԹԵՄԱ 8. Առողջ ապրելակերպի կանոնները:

ԹԵՄԱ 9. Ինֆեկցիոն հիվանդություններ

ԹԵՄԱ 10. Սեռավարակներ : Անվտանգ սեռական կապեր : Պրոֆեսիոնալ հիվանդություններ

### **1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս**

**Մ/բ-1108 Մասնագիտության ներածություն` 3 կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, գործնական` 16 ժամ, շաբաթական 2,5 ժամ**

**1-ին կիսամյակ, ստուգարք**

#### **Նպատակը.**

Ուսանողներին ծանոթացնել սոցիալական մանկավարժի մասնագիտությանը, նրա գործունեության ոլորտներին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- «սոց. մանկավարժ» և «սոց.աշխատող» մասնագիտությունների տարբերությունները,
- սոց.մանկավարժի կոմպետենցիաները,
- սոց.մանկավարժի գործառույթները և դերերը,
- սոց.մանկավարժի գործունեության ոլորտները,
- սոց.մանկավարժի մասնագիտական պատրաստման անընդհատության համակարգը:

կկարողանա.

- բնութագրել սոցիալական մանկավարժի մասնագիտությունը,

- տարբերակել սոց.մանկավարժի և սոց.աշխատողի մասնագիտությունները,
  - իրավիճակից կախված որոշել սոց.մանկավարժի գործունեության ոլորտը:
- կտիրապետի.
- սոցիալ-մանկավարժական նախագիտելիքներին,
  - սոց.մանկավարժի գիտահետազոտական աշխատանքների նախնական ձևերին:

### **Բովանդակություն**

**Թեմա1.** Սոց.մանկավարժի մասնագիտության ընդհանուր բնութագիրը: Սոց.մանկավարժի կոմպետենցիաները և մասնագիտական կոմպետենտությունը: **Թեմա 2.** Սոց.մանկավարժի գործառույթներն ու սոցիալական դերերը: **Թեմա 3.** Սոց.մանկավարժական գործունեության ոլորտները: **Թեմա 4.** Սոց.մանկավարժի մասնագիտական պատրաստումը: **Թեմա 5.** ԲՈՒՅ-ական ուսումնադաստիարակչական գործընթացը: **Թեմա 6.** Ուսանողների ինքնուրույն աշխատանքները ԲՈՒՅ-ում: **Թեմա 7.** Ուսանողների գիտահետազոտական աշխատանքները ԲՈՒՅ-ում: **Թեմա 8.** Սոցիալական մանկավարժի մասնագիտական ինքնակատարելագործման անհրաժեշտությունը:

***Մ/բ-0267. Մանկավարժության տեսություն` 6 կրեդիտ***

***Դասախոսություն` 48 ժամ, գործնական` 40 ժամ, շաբաթական 6 ժամ 1-ին կիսամյակ, քննություն***

#### ***Նպատակը.***

Ապագա մանկավարժներին զինել գիտական-մանկավարժական գիտելիքներով, ձևավորել որոշակի կարողություններ ու հմտություններ:

#### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- հնարավորություն կունենա մանկավարժությունը, որպես գիտություն, դիտել գիտությունների ընդհանուր համակարգում և նրանց ենթատեքստում,
- արժևորել իր ընտրած մասնագիտությունը, նրա արդի խնդիրները, բարդույթները,
- կկարողանա կառուցել դաստիարակչական գործընթացը ժամանակի

պահանջներին համապատասխան

- խորությամբ վերլուծել ավանդական հարցեր դպրոցի ուսումնադաստիրակչական աշխատանքների կազմակերպման և կառավարման գործընթացի գիտական հիմունքների, դպրոցում մեթոդական աշխատանքների վերաբերյալ:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Մանկավարժության առարկան և մեթոդները, ընդհանուր հասկացությունները: ***Թեմա 2.*** Անձնավորության զարգացման և ձևավորման գործոնները: ***Թեմա 3.*** Անձնավորության զարգացման տարիքային փուլերը: ***Թեմա 4.*** Դաստիարակության հիմնական հասկացությունները, առանձնահատկությունները, օրինաչափությունները, շարժիչ ուժերը: ***Թեմա 5.*** Դաստիարակության սկզբունքները: ***Թեմա 6*** Դաստիարակության մեթոդները: Մեթոդների դասակարգումը: ***Թեմա 7.*** Կոլեկտիվի դերը անձնավորության ձևավորման գործում: ***Թեմա 8.*** Աշխարհայացքի դերը անձնավորության ձևավորման գործում: ***Թեմա 9.*** Դաստիարակության բաղադրամասերը

***Մ/բ-0268. Մանկավարժության տեսություն ` 6 կրեդիտ***

***Դասախոսություն` 48 ժամ, գործնական` 48 ժամ, շաբաթական 6 ժամ***

***2-րդ կիսամյակ, քննություն***

### ***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել ժամանակակից դիդակտիկայի հիմունքներին, ուսուցման տեսությանը և կրթական համակարգի բարեփոխումներին և դպրոցի կառավարման հիմունքներին:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- հնարավորություն կունենա հետազոտել, գտնել նոր ուղիներ, միջոցներ, որոնք կնպաստեն սովորողների իմացական ակտիվությանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և կնպաստեն ձեռք բերել կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներ, կտիրապետի դպրոցի



կառավարման չափորոշիչներին՝ կրթական համակարգի բարեփոխումների շրջանակում

- խորությամբ կտիրապետի մանկավարժի մասնագիտական վարպետությանը, որն իր ընտրած մասնագիտության առաջին և կարևոր պայմանն է:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Դիդակտիկան որպես գիտություն: ***Թեմա 2.*** Ուսուցման սկզբունքները: ***Թեմա 3.*** Ուսուցման մեթոդները: ***Թեմա 4.*** Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը: ***Թեմա 5.*** Կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը: ***Թեմա 6.*** Սովորողների գիտելիքների ստուգում և գնահատում: ***Թեմա 7.*** Դպրոցի կառավարում:

***Մ/բ-0270. Մանկավարժական տեխնոլոգիաներ՝ 3 կրեդիտ  
Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական՝ 26 ժամ, շաբաթական 3 ժամ  
3-րդ կիսամյակ, ստուգարք***

### ***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել մանկավարժական տեխնոլոգիայի նշանակությանը, ընդգծել դրա կարևորությունը սոցիալ-մանկավարժական գործընթացն արդյունավետ կազմակերպելու գործում:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- տեխնոլոգիայի նշանակությունը, կարևորությունը մանկավարժական գործընթացում,
- մանկավարժական տեխնոլոգիայի և մանկավարժական վարպետության փոխադարձ կապը,
- մանկավարժական տեխնոլոգիայի տարրերը,
- ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները,
- դաստիարակության տեխնոլոգիան,

- սոց.մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման տեխնոլոգիան:

կկարողանա.

- տեխնոլոգիական մոտեցմամբ լուծել սոցիալ-մանկավարժական խնդիրներ,
- տարբերակել «տեխնոլոգիա», «տեխնիկա», «մեթոդիկա» հասկացությունները,
- իմաստավորել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների առավելությունները և թերությունները,
- նախագծել տեխնոլոգիական քայլեր և պատրաստել տեխնոլոգիական քարտեր:

կտիրապետի.

- տեխնոլոգիական ցիկլում ախտորոշման գործընթացին,
- տեխնոլոգիական ցիկլում կանխատեսման գործընթացին,
- տեխնոլոգիական գիտելիքներին:

***Բովանդակությունը.***

Թեմա 1. Մանկավարժական տեխնոլոգիայի էությունը: Թեմա 2. Մանկավարժական տեխնոլոգիան և մանկավարժական վարպետությունը: Թեմա 3. Մանկավարժական տեխնոլոգիայի հիմունքները: Մանկավարժական տեխնոլոգիայի պատմական արմատները: Թեմա 4. Մանկավարժական խնդիրների էությունը և առանձնահատկությունները: Թեմա 5. Մանկավարժական տեխնոլոգիայի տարրերը: Կոնֆլիկտներ և վեճեր: Թեմա 6. Մանկավարժական տեխնոլոգիայի լրացուցիչ տարրերը: Թեմա 7. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները: Թեմա 8. Դաստիարակության տեխնոլոգիա: Թեմա 9. Սոց.մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման տեխնոլոգիա:

**Մ/բ-0259. Կրթության և մանկավարժական մտքի պատմություն –4 կրեդիտ Դասախոսություն –28 ժամ, սեմինար –28 ժամ, (շաբաթական - 4 ժամ)**

**4-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

- Ուսանողներին զինել դաստիարակության, դպրոցի և մանկավարժական մտքի առաձայցման և զարգացմանը վերաբերող կարևորագույն գիտելիքներով
- Խորացնել մանկավարժական գիտելիքները, որպեսզի ուսանողը կարողանա վերլուծել, համեմատել և համապատասխան եզրահանգումներ կատարել անցյալի մանկավարժների ուսմունքների վերաբերյալ

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա բնութագրել նշանավոր մանկավարժների մանկավարժական հայացքները և գործունեությունը,
- հնարավորություն կունենա ընդլայնելու իր մանկավարժական մտահորիզոնը,
- կձևավորի նշանավոր մանկավարժական տեսությունների և գաղափարների նկատմամբ հետաքրքրություն,
- քննադատական և համեմատական վերլուծության կենթարկի տարբեր ժամանակաշրջանների մանկավարժական գաղափարները,

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Դաստիարակության ծագումը նախնադարյան համայնական հասարակությունում: Դաստիարակման կազմակերպված ձևերի զարգացումն ու ձևավորումը հնագույն քաղաքակրթության պայմաններում: **Թեմա 2.** Կրթությունը և մանկավարժական միտքը հին աշխարհում: **Թեմա 3.** Կրթությունը, մանկավարժական միտքը միջին դարերում և վերածնության շրջան: **Թեմա 4.** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը ֆեոդալական հասարակության դարաշրջանում: **Թեմա 5.** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը 18-րդ դարում: **Թեմա 6.** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը 18-րդ դարի վերջին: **Թեմա 7.** Պետրոս 1-ին, Լոմոնոսով: **Թեմա 8.** Դպրոցը և մանկավարժական միտքը Ռուսաստանում /19-րդ դար/, ռուս հեղափոխական դեմոկրատ-մանկավարժներ: **Թեմա 9.** Դպրոցը և մանկավարժական միտքը 20-րդ դարասկիզբ: **Թեմա 10.** Ուշինսկի, Տոլստոյ, Պիրոգով: Նրանց մանկավարժական հայացքները: **Թեմա 11.** Մակարենկո,

նրա մանկավարժական գործունեությունը: ***Թեմա 12.*** Դպրոցը և մանկավարժական միտքը ԽՍՀՄ-ում: ***Թեմա 13.*** Դպրոցն ու դաստիարակությունը մինչև Մետոսյան հայագիր դպրոցը: ***Թեմա 14.*** Դպրոցն ու դաստիարակությունը 5-10-րդ դարերում: ***Թեմա 15.*** Դպրոցի և մանկավարժական մտքի զարգացումը հայկական վերածննդի ժամանակաշրջանում: ***Թեմա 16.*** Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-15-րդ դարերում: ***Թեմա 17.*** Դպրոցն ու մանկավարժական միտքը 16-18-րդ դարերում: ***Թեմա 18.*** Դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դ.: ***Թեմա 19.*** Հայկական դպրոցը սփյուռքում: Ազգապահպան նշանակությունը: ***Թեմա 20.*** Դպրոցը և ժողկրթության համակարգը 1990-ական թվականներից առ այսօր ՀՀ-ում:

#### **Մ/բ - 0275 Շտկող մանկավարժություն, 4 կրեդիտ**

#### **Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական՝ 32 ժամ (շաբաթական - 4 ժամ)**

#### **7-րդ կիսամյակ, քննություն**

##### ***Նպատակը***

Շտկող մանկավարժությունն դասընթացի նպատակն է ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, նրանց կրթության, ուսուցման և դաստիարակության օրինաչափությունները և մեթոդները, ձևավորել մանկավարժական մոտեցումներ, մտածողություն, աշխարհայացք, հմտություններ և կարողություններ հատուկ, շտկող, ներառական կրթություն իրականացնելու գործընթացում:

##### ***Կրթական արդյունքներ***

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է կարողանան տիրապետել
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների շեղումների պատճառներին, կանխարգելման, շտկման ուղիներին, ուսուցման, դաստիարակության, հանրօգուտ աշխատանքին նախապատրաստելու ներառման գործընթացի հիմնախնդիրներին,

- պատճառաբանված ձևով բացահայտել երեխաների հետ տարվող վերականգնողական, շտկողական աշխատանքների յուրահատկությունը,
- կարողանալ տիրապետել շտկման մեթոդներին, ձևերին, շտկող մանկավարժության վերականգնող մեթոդների կիրառմամբ կարողանալ ճիշտ տարբերակել զարգացման մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների կրթական կարիքը, հատուկ, ինտեգրացված, ներառական կրթություն իրականացնելիս կարողանալ աշխատել գիտական, մեթոդական գրականությամբ, ժամանակակից տեխնոլոգիաներով:

### ***Բովանդակություն***

**Թեմա1.** Հատուկ մանկավարժության զարգացումը արևմտյան Եվրոպայում: Հատուկ մանկավարժության կայացումը Ռուսաստանում: Հատուկ մանկավարժության զարգացումը Հայաստանում: **Թեմա 2.** Մանկական անոմալիայի առաջացման պատճառները, արտահայտման բնույթն ու ձևերը: Պայքար մանկական անոմալիաների դեմ: **Թեմա 3.** Շտկող մանկավարժության բնագավառները: **Թեմա 4.** Շտկող մանկավարժության առարկան, օբյեկտը, նպատակը, խնդիրները: Շտկող մանկավարժության կատեգորիաները: **Թեմա 5.** Կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 6.** Նորմայի տարբերակները: Տարիքային ճգնաժամեր. դրսևորումները, նորագոյացությունները. ա/ 3 տարեկանի ճգնաժամ, նախադպրոցական տարիքի ճգնաժամ,բ/ կրտսեր դպրոցական տարիք, գ/ միջին դպրոցական տարիք, դ/ ավագ դպրոցական տարիք: **Թեմա 6.** Օլիգոֆրենիա (սակավամտություն), էությունը և բնութագիրը, դասակարգումը: Օլիգոֆրեն երեխաների զարգացման առանձնահատկությունները: Կրթությունը և դաստիարակությունը: **Թեմա7.** Տիֆլոմանկավարժության հիմնական դրույթները, խանգարման պատճառները, զարգացման առանձնահատկությունները: Լսողության նշանակությունը: Լսողության կորստի պատճառները: Խուլ և թույլ լսող երեխաների զարգացման առանձնահատկությունները, կրթություն և դաստիարակություն: **Թեմա 8.** Խոսքային խանգարումներ, ընդհանուր բնութագիրը: Մանկան խոսքի զարգացումը: Խոսքային խանգարումների դասակարգումը: Խոսքային խանգարումներ ունեցող երեխաների կրթությունը և դաստիարակությունը: **Թեմա9.** Հենաշարժողական օրգանների խանգարումներ ունեցող երեխաներ, բնութագիրը: **Թեմա10.** Ներառական ուսուցմամբ կրթություն:

**Ձեմա11.** Երեխաների և դեռահասների զարգացման և վարքի շեղումների դասակարգումը: **Ձեմա12.** Հատուկ կրթական կարիքներով երեխա ունեցող ընտանիքներ, նրանց հետ իրականացվող մանկավարժական աշխատանքներ:

**Յ/բ-0308 Հոգեբանամանկավարժական պրակտիկում –2կրեդիտ**  
**8 ժամ դասախոսություն 24 ժամ գործնական, (շաբաթական 2,5**  
**ժամ)**

**2-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

ձևավորել և ամրապնդել ուսանողների մոտ մարդու հոգեբանական առանձնահատկությունների հետազոտման հմտություններն ու ունակությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Փորձարարական հետազոտությունների անցկացման հիմնական մեթոդական միջոցների մասին
2. Փորձարարական հետազոտության կազմակերպման և պլանավորման կարողություններ, արդյունքների մշակման և վերլուծության, ամփոփումների ձևակերպման կարողություններ,
3. Տիրապետել հոգեբանական հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ամփոփումների ձևակերպման առանձնահատկություններին
4. Տիրապետել հոգեբանական բնութագրերի կազմման սկզբունքներին

***Բովանդակությունը***

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** Հոգեբանա-մանկավարժական պրակտիկումի առարկան, խնդիրները, կապը այլ հոգեբանական գիտաճյուղերի հետ: Պրակտիկումը որպես հոգեբանի ընդհանուր մասնագիտական պատրաստման ծրագրի կարևոր բաղադրիչ: Պրակտիկումի նպատակը, խնդիրները, ուսանողների գիտելիքների խորացումը նրանց հոգեբանական հետազոտությունների մեջ ներգրավելու ճանապարհով:

**ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԴՈԳԵՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ:**

Տեսողական զգայության բացարձակ շեմքի որոշելը: Ծանրության զգայության տարբերակման շեմքի հետազոտումը: Ծանրության զգայության տարբերակման շեմքի հետազոտումը: Կինեսթետիկական զգայության հետազոտություն:

**ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** Մեթոդական

ցուցումներ: Ժամանակի ըմբռնման հետազոտություն: Ըմբռնման պատկերի ներմոդալականության երևույթի տեղափոխման ուսումնասիրությունը: Տեսողական ընկալման բացարձակ շեմի հետազոտումը: Դիտողականության հետազոտման մեթոդիկա: Ըմբռնումների անհատական առանձնահատկությունների հետազոտում: Ըմբռնման ծավալի հետազոտություն:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ:** Մեթոդական ցուցումներ:

Ուշադրության տատանումների հետազոտում: Ուշադրության կենտրոնացվածության և կայունության հետազոտում: Ուշադրության բաշխվածության հետազոտում: Ուշադրության ընտրողականության հետազոտում: Կամաժին ուշադրության առանձնահատկությունների հետազոտում: Ուշադրության ծավալի հետազոտություն:

**Յ/բ-0308 Հոգեբանամանկավարժական պրակտիկում –2կրեդիտ**

**8 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական, (շաբաթական 2,5 ժամ)**

**3-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

ձևավորել և ամրապնդել ուսանողների մոտ մարդու հոգեբանական առանձնահատկությունների հետազոտման հմտություններն ու ունակությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Փորձարարական հետազոտությունների անցկացման հիմնական մեթոդական միջոցների մասին

2. Փորձարարական հետազոտության կազմակերպման և պլանավորման կարողություններ, արդյունքների մշակման և վերլուծության, ամփոփումների ձևակերպման կարողություններ,
3. Տիրապետել հոգեբանական հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ամփոփումների ձևակերպման առանձնահատկություններին
4. Տիրապետել հոգեբանական բնութագրերի կազմման սկզբունքներին

### **Բովանդակությունը**

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՄԱՑԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ Ստածողության և խոսքի էքսպերիմենտալ հոտազոտման մեթոդները ժամանակակից հոգեբանության մեջ: Ստածողության ընդհանուր բնութագիրը, տեսակները, անհատական առանձնահատկությունները: Ստածողության ակտիվության հետազոտություն: Ստածողության ռիզիկոյան հետազոտություն /Լաչինսի մեթոդիկա/: Ակնառու-գործուն մտածողության հետազոտություն: Հետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Խոսքի ընդհանուր բնութագիրը: Ազատ զուգորդությունների թեսթը: Գրավոր խոսքի հոգեբանական վերլուծությունը; Հետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում:
2. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ: Երևակայությունը որպես բարձրագույն իմացական պրոցես, ընդհանուր բնութագիրը, տեսակները: Ստեղծագործական երևակայության հետազոտություն: Հետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Պրոյեկտիվ մեթոդների դերը երևակայության ուսումնասիրման գործում:
3. ՀՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ Զգացմունքների և հույզերի հետազոտման մեթոդիկաներ: Տրամադրության հետազոտման մեթոդիկա: Հետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Ապրումակցման հետազոտման մեթոդիկաներ: Հետազոտությունների նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Հուզական կայունության հետազոտության մեթոդիկաներ:



Յետազոտությունների նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում:

4. ԿԱՍՔԻ ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ Կամք և անձնավորության կամային որակներ: Սուբյեկտիվ վերահսկողության լոկուսի հետազոտության: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Իմպուլսիվության հետազոտություն: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Յամառության հետազոտման մեթոդիկա: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում:
5. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ - ՅՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ: Խառնվածքի ընդհանուր բնութագիրը, տիպերը: Յարցարանային մեթոդները խառնվածքի ուսումնասիրման մեջ: Այգենկի անձնային հարցարան: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում: Յոգեֆիզիոլոգիական մեթոդիկաները խառնվածքի առանձնահատկությունների ուսումնասիրման մեջ:
6. ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ: Յասկացողություն բնավորության մասին: Բնավորության ձևավորումը: Ռիսկի հակվածության հետազոտություն: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում:
7. ԸՆԴՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ: Յասկացողություն բնավորության մասին: Բնավորության ձևավորումը: Ռիսկի հակվածության հետազոտություն: Յետազոտության նպատակը, ընթացքը, արդյունքների վերլուծություն և մեկնաբանում:

**Մ/բ-1109 Սոցիալական մանկավարժություն` 4 կրեդիտ**

**Դասախոսություն` 28 ժամ, գործնական` 28 ժամ, շաբաթական 3,5 ժամ**

**1-ին կիսամյակ, քննություն**

**Նպատակը.**

Ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում

մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար:

Ուսանողների կողմից սոցիալական մանկավարժության որպես ինտեգրատիվ գիտության տեսական դրույթների, սոցիալական դաստիարակության և սոցիալականացման վերաբերյալ տեսական գիտական գիտելիքների յուրացումը: Ուսանողներին ծանոթացնել սոցիալական մանկավարժի աշխատանքի ընդհանուր բնութագրին, նրա պատրաստման համակարգին և սոցիալական մանկավարժության հիմունքներին:

Ուսանողների մոտ ձևավորել տեսական պատկերացումներ սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտի, առարկայի և հիմնական հասկացությունների մասին, ամբողջական պատկերացում տալ երեխայի (անհատի) սոցիալականացման գործընթացների և օրինաչափությունների մասին:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ բակալավրիատն ավարտողն պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

1. ունենա փաստեր համադրելու և սինթեզելու ունակություն,
2. ունակ լինի քանակական տվյալներից որակական հետևություններ անելու և գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու,
3. ունենա նոր գաղափարներ առաջ քաշելու և զարգացնելու կարողություն,
4. ունակ լինի ինքնուրույն և թիմում աշխատելու, ինչպես նաև թիմային աշխատանքը կազմակերպելու և առաջնորդելու,
5. ունակ լինի նախագծեր պլանավորելու և մշակելու,
6. ունենա համակողմանի և համակարգված գիտելիքներ մասնագիտական ոլորտում,
7. իմանա մասնագիտացման ոլորտի նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները, տիրապետի նորագույն մեթոդներին և տեխնիկական միջոցներին:

### ***1. Գիտենա՝***

- ՀՀ Սահմանադրությունը և կրթության բնագավառի օրենքները, ժամանակակից կրթության հարացույցները:
- Մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվելաձևի էթիկական և իրավական նորմերը:
- Մանկավարժական, սոցիալ-մանկավարժական գիտությունների կառուցվածքային առանձնահատկությունները:
- Սոցիալական մանկավարժության նորագույն ձեռքբերումները:
- Սոցիալական մանկավարժության ժամանակակից տեսությունները և սոցիալ-մանկավարժական հետազոտության նորագույն մեթոդները:
- Սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդաբանությունը:
- Կրթադաստիարակչական հիմնարկներում սաների սոցիալականացման գործընթացի նպատակային կառավարման մեթոդները:

## **2. Կարողանա՝**

- Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության և գիտության օրենքի հիմնական դրույթների վրա:
- Տրամաբանորեն ճիշտ ձևակերպել գրավոր և բանավոր խոսքը, գիտականորեն կազմակերպել իր աշխատանքը:
- Կատարել գիտական եզրահանգումների տրամաբանական փաստարկում:

## **3. Տիրապետի՝**

- Անձնական և հասարակական հարաբերությունները կանոնավորող վարվելակերպի իրավական նորմերին:
- Սոցիալ-մանկավարժական հետազոտությունների պլանավորման, կազմակերպման և ղեկավարման մեթոդներին:
- ժամանակակից կրթադաստիարակչական աշխատանքի իրականացման, դրա արդյունքների գնահատման մեթոդներին:

## **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական մանկավարժության որպես գիտության՝ ձևավորումն ու զարգացումը: Սոցիալական մանկավարժությունը որպես մանկավարժական գիտության առանձին ճյուղ, ուսումնասիրության առարկան, օբյեկտը: **Թեմա 2.**

Երեխայի զարգացումը սոցիումում: Մարդը սոցիալականացման գործընթացում: **Թեմա 3.** Սոցիալականացումն որպես սոցիալ մանկավարժական երևույթ: Սոցիալականացման մեխանիզմները: Սոցիալականացման գործընթացի բաղադրիչները: Սոցիալականացման փուլերը: **Թեմա 4.** Սոցիալական մանկավարժության մեջ «նորմ» և «շեղումներ նորմերից» հասկացությունների նշանակությունը: Սոցիալական մանկավարժության հասկացությունները: **Թեմա 5.** Սոցիալական մանկավարժության սկզբունքների և հետազոտության մեթոդների ընդհանուր բնութագրերը: **Թեմա 6.** Սոցիալականացման մեզա, մակրոգործոնները: **Թեմա 7.** Սոցիալականացման մեզո գործոնները: **Թեմա 8.** Սոցիալականացման միկրո գործոնները:

**Մ/բ-1109 Սոցիալական մանկավարժություն ` 5 կրեդիտ**

**Դասախոսություն` 32 ժամ, սեմինար ` 32 ժամ, շաբաթական 4 ժամ**

**2-րդ կիսամյակ, քննություն**

### **Նպատակը.**

Ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար:

Ուսանողների կողմից սոցիալական մանկավարժության որպես ինտեգրատիվ գիտության գործնական դրույթների, սոցիալական դաստիարակության և սոցիալականացման վերաբերյալ գիտական գիտելիքների յուրացումը:

Ձևավորել ուսանողների մոտ սոցիալ-մանկավարժական հետազոտությունների գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ բակալավրիատն ավարտողն պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

1. ունենա փաստեր համադրելու և սինթեզելու ունակություն,

2. ունակ լինի քանակական տվյալներից որակական հետևություններ անելու և գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու,
3. ունենա նոր գաղափարներ առաջ քաշելու և զարգացնելու կարողություն,
4. ունակ լինի ինքնուրույն և թիմում աշխատելու, ինչպես նաև թիմային աշխատանքը կազմակերպելու և առաջնորդելու,
5. ունակ լինի նախագծեր պլանավորելու և մշակելու,
6. կարողանա իրականացնել արդյունավետ կրթական գործունեություն՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմամբ:
7. ունենա համակողմանի և համակարգված գիտելիքներ մասնագիտական ոլորտում,
8. կարողանա լուծել սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական խնդիրներ,
9. կարողանա ձևակերպել և հետազոտել նոր խնդիրներ սոցիալական մանկավարժության և հարակից ոլորտներում:

### **1. Գիտենա՝**

- ՀՀ Սահմանադրությունը և կրթության բնագավառի օրենքները, ժամանակակից կրթության հարացույցները:
- Սոցիալ-հումանիտար և տնտեսագիտական առարկաների հիմնական դրույթները:
- Մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվելաձևի էթիկական և իրավական նորմերը:
- Մանկավարժական, սոցիալ-մանկավարժական գիտությունների կառուցվածքային առանձնահատկությունները:
- Սոցիալական մանկավարժության նորագույն ձեռքբերումները:
- Սոցիալ-մանկավարժական հետազոտության նորագույն մեթոդները:
- Սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդաբանությունը:
- Սոցիալ-մանկավարժական փորձարարական աշխատանքների տվյալների կիրառման շրջանակները:
- Սոցիալ-մանկավարժական հետազոտական աշխատանքների արդյունքները օբյեկտիվորեն գնահատելու մեթոդները:

- Կրթադաստիարակչական հիմնարկներում սաների սոցիալականացման գործընթացի նպատակային կառավարման մեթոդները:
- Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկություններն ու մեթոդները գործունեության տարբեր ոլորտներում սոցիալական տարբեր ինստիտուտներում:
- Հասարակության մեջ ռիսկային խմբերի անդամներին ինտեգրելու և նրանց սոցիալական հարմարումն ապահովելու սոցիալ-մանկավարժական մեթոդները:

## **2. Կարողանա՝**

- Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության և գիտության օրենքի հիմնական դրույթների վրա:
- Կատարել սոցիալ-մանկավարժական գործընթացների մաթեմատիկական մոդելավորում:
- Պլանավորել և իրականացնել սոցիալմանկավարժական գիտափորձ:
- Կատարել գիտական եզրահանգումների տրամաբանական փաստարկում:
- Ընդհանրացնել ստացված փորձարարական նյութը:
- Բազմաբնույթ ձևերով ներկայացնել ստացված արդյունքները:
- Կազմակերպել սոցիալ-մանկավարժական հետազոտություններ:
- Փորձնական ճանապարհով կատարել սոցիալ-մանկավարժական ախտորոշում և համապատասխան սոցիալ-մանկավարժական վերականգնողական, շտկողական աշխատանքներ:
- Ռիսկային խմբերի անդամներին ինտեգրել հասարակության մեջ և ապահովել նրանց ակտիվ սոցիալական հարմարումը:

## **3. Տիրապետի՝**

- Անձնական և հասարակական հարաբերությունները կանոնավորող վարվելակերպի իրավական նորմերին:
- Սոցիալ-մանկավարժական հետազոտությունների պլանավորման, կազմակերպման և ղեկավարման մեթոդներին:
- Ժամանակակից կրթադաստիարակչական աշխատանքի իրականացման, դրա արդյունքների գնահատման մեթոդներին:

- Ուսումնադաստիարակչական աշխատանքի ակտորոշման և գործընթացի արդյունքների կանխատեսման մեթոդներին:
- Սոցիալ-մանկավարժական վերականգնողական, շտկողական աշխատանքների մեթոդներին և տեխնոլոգիաներին:
- Հասարակության մեջ ռիսկային խմբերի անդամներին ինտեգրելու և նրանց սոցիալական հարմարումն ապահովելու սոցիալ-մանկավարժական մեթոդներին:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Սոցիալական հիմնախնդիրների ազդեցությունը դպրոցական գործընթացի վրա: ***Թեմա 2.*** Դպրոցի կառավարման գործընթացում սոցիալ-մանկավարժական ազդեցությունները ***Թեմա 3.*** Սոցիալական մանկավարժի աշխատանքի ուղղությունները դպրոցում: Դպրոցի սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական ձևերը, մեթոդները, իրավունքները և պարտականությունները ***Թեմա 4.*** Սոցիալական մանկավարժի գործունեության գործառույթները դպրոցական համակարգում ***Թեմա 5.*** «Ընտանիքը» որպես սոցիալական ինստիտուտ: Ընտանիք հասկացության էությունը: Ընտանիքի հիմնական գործառույթները: ***Թեմա 6.*** Ընտանիքի հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիաները և առանձնահատկությունները ***Թեմա 7.*** «Ռիսկի խմբի» ընտանիքների էությունը և նրանց առանձնատարկությունները: ***Թեմա 8.*** Սոցիալ-մանկավարժական աշխատանքի ուղղությունները «Ռիսկի խմբի» ընտանիքների հետ աշխատանքում: ***Թեմա 9.*** Օժտվածությունը՝ որպես սոցիալ-մանկավարժական խնդիր սոցիալական մանկավարժության մեջ: Օժտվածություն հասկացությունը, առանձնահատկությունները և տեսակները: ***Թեմա 10.*** Օժտված երեխան դպրոցում և ընտանիքում: Օժտված երեխաների սոցիալական խնդիրները: Օժտված երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդները: ***Թեմա 11.*** Սոցիալական մանկավարժի աշխատանքը բռնության զոհերի հետ: ***Թեմա 12.*** Սոցիալական մանկավարժի աշխատանքը բռնության զոհերի հետ: ***Թեմա 13.*** Երեխաների և մանկության պաշտպանության սոցիալ-մանկավարժական և իրավական ապահովումը

***Մ/բ-0273. Սոցիալական մանկավարժության տեխնոլոգիաներ՝ 4 կրեդիտ***

**Դասախոսություն` 28 ժամ, գործնական` 28 ժամ, շաբաթական 3.5 ժամ**  
**4-րդ կիսամյակ, բնություն**

**Նպատակը.**

Ուսանողներին ծանոթացնել ճանաչողական-վերափոխական շրջափուլի, տարբեր բնագավառների, խմբերի հետ տարվող սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- ընդհանուր տիպի կիրառական; մասնավոր տիպի կիրառական; տիպային; ռիսկի խմբի երեխաների; ավագ դասարանցիների մասնագիտական կողմնորոշման; անբարենպաստ ընտանիքների; սահամանափակ հնարավորություններով երեխաներին դաստիարակող ընտանիքների հետ տարվող; դեռահասների թմրամոլության դեմ պայքարի սոցիալական աշխատանքի; ուղղիչ աշխատանքային գաղութներում տարվող տեխնոլոգիաները:

կկարողանա.

- արժևորել տեխնոլոգիայի դերն օպտիմալ և ժամանակի պահանջներին համահունչ սոց.մանկավարժական գործընթաց կազմակերպելու գործում,
- կազմել գծապատկերներ, մոդելներ, սխեմաներ, որոնք կօգնեն տեխնոլոգիական մոտեցմամբ լուծել մանկավարժական խնդիրներ:

կտիրապետի

- սոց.մանկավարժական խնդիրները տեխնոլոգիական ցիկլի միջոցով լուծելուն,
- սոց.մանկավարժական տեխնոլոգիաների տիպաբանությամբ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոց.մանկավարժական տեխնոլոգիայի էությունը: **Թեմա 2.** Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրերը: **Թեմա 3.** Սոց.մանկավարժի գործնական աշխատանքի տեխնոլոգիաների և մեթոդների փոխկապակցությունը: **Թեմա 4.** Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների դասակարգում: **Թեմա**



5.Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի կառուցվածքը և բովանդակությունը: **Թեմա 6.** Սոց.մանկավարժի գործունեության առանձնահատկությունները սոց.մանկավարժական տեխնոլոգիայի ընտրության և իրականացման գործում: **Թեմա 7.** Սոց.մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիաները կրթական հաստատություններում: **Թեմա 8.** Սոց.մանկավարժի պրոֆեսիոնալ /արհեստավարժ/ կարգավիճակը դպրոցում: **Թեմա 9.** Սոց.մանկավարժի աշխատանքային սեղանը: **Թեմա 10.** Ռիսկի խմբի երեխաների հետ տարվող աշխատանքի սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ: **Թեմա11.** Ավագ դասարանցիների պրոֆկոդմնորոշման սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ: **Թեմա12.** Անբարենպաստ ընտանիքների հետ աշխատելու սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ: **Թեմա 13.** Սահամանափակ հնարավորություններով երեխաներին դաստիարակող ընտանիքների հետ տարվող սոց.մանկավարժական աշխատանքների տեխնոլոգիաներ: **Թեմա 14.** Դեռահասների թմրամոլության դեմ պայքարի սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ: **Թեմա 15.** Թմրաբանական ծառայության աշխատանքի սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ: **Թեմա 16.** Ուղղիչ աշխատանքային գաղութներում տարվող աշխատանքի սոց.մանկավարժական տեխնոլոգիաներ:

***Մ/բ-0274. Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն` 5 կրեդիտ  
Դասախոսություն` 32 ժամ, գործնական` 40 ժամ, շաբաթական 4,5 ժամ  
3-րդ կիսամյակ, քննություն***

### ***Նպատակը.***

Ուսանողներին զինել սոցիալականացման գործընթացում դժվարությունների հանդիպող անձանց /հատկապես երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին/ օգնելու գործնական մեթոդներով և զանազան հնարներով:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտները,
- կիմանա սոցիալ-մանկավարժական խորհրդատվության իրականացման

փուլերը,

- կիմանա հարցազրույցի իրականացման առանձնահատկությունները,
- պատկերացում կունենա մանկան, դերահասի, օժտված երեխաների, սահմանափակ հնարավորություններով և մանկատան երեխաների սոցիալական պրոբլեմների մասին,
- կիմանա սոցիալական մանկավարժի գործառույթներն ու դերը:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը որպես սոցիալական աշխատողի գործունեություն: ***Թեմա 2.*** Հարցազրույցի մեթոդը սոցիալ-մանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա 3.*** Սոցիալական մանկավարժի մասնագիտական և անձնային որակները: ***Թեմա 4.*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը մանկության շրջանում: ***Թեմա 5*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը դժվար դեռահասների հետ: ***Թեմա 6.*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը ընտանիքում: ***Թեմա 7.*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը դպրոցում: ***Թեմա 8.*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը մանկատներում:

***Մ/բ-0276 Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն` 5 կրեդիտ  
Դասախոսություն` 32 ժամ, գործնական` 40 ժամ, շաբաթական 4,5 ժամ  
4-րդ կիսամյակ, քննություն***

### ***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել խնդրառու երեխաների սոցիալականացման գործընթացի առանձնահատկություններին /հատկապես ներառական դպրոցների և ողողիչ աշխատանքային հաստատությունների/, զինել նրանց նման երեխաներին օգնելու գործնական մեթոդներով և հնարներով:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կտիրապետի սոցիալ-մանկավարժական խորհրդատվության ուղիներին, եղանակներին ներառական դպրոցներում և բուհերում

- հանգամանորեն կիմանա ուղղիչ աշխատանքային հաստատություններում հայտնված անչափահասների հետ տարվող սոցիալ-մանկավարժության խորհրդատվական աշխատանքների
- կտիրապետի սոցիալական մանկավարժության խորհրդատվության իրականացման առանձնահատկություններին ժամանակակից ինֆորմացիոն դաշտի պայմաններում

***Բովանդակությունը.***

***Թեմա 1*** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը հաշմանդամների հետ:

***Թեմա 2*** Սոցիալական մանկավարժական խորհրդատվություն բուհում: ***Թեմա 3.***

Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն ներառական դպրոցներում

/սոց. մանկավարժի աշխատանքը ներառական դպրոցում/: ***Թեմա 4.*** Սոցիալական

մանկավարժության խորհրդատվություն անչափահաս հանցագործների հետ: ***Թեմա***

***5.*** Համակարգիչը և սոցիալականացումը /սոցիալական մանկավարժության

խորհրդատվություն/: ***Թեմա 6.*** Սոցիալական մանկավարժության խորհրդատվության

իրականացումը ժամանակակից ինֆորմացիոն դաշտի պայմաններում: ***Թեմա 7.***

խորհրդատվություն սոցիալական ինստիտուտների համագործակցության մասին:

**Յ/բ-0300 Ընդհանուր հոգեբանության հիմունքներ –5 կրեդիտ**

**Դասախոսություն –32 ժամ, գործնական - 32 ժամ, (շաբաթական 4 ժամ)**

**2-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

1. Ուսանողներին զինել գիտելիքներով հոգեբանության մասին:
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, հոգեբանական և մեթոդական գիտելիքները:
3. Ուսանողներին գաղափար տալ հոգեբանության առարկայի, խնդիրների, հոգեկանի և հոգեկան գործընթացների զարգացման օրինաչափությունների մասին:
4. Սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն և ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:

## **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ ցուցաբերել հոգեբանության առարկայի, հոգեբանության հիմնական մեթոդների իմացություն,
- ✓ դրսևորել գիտելիքներ իմացական և հուզականային գործընթացների, անձի հոգեկան վիճակների ու հատկությունների վերաբերյալ:

## **Բովանդակություն**

**Թեմա1.** Ընդհանուր հոգեբանության առարկան, ծագումն ու զարգացումը **Թեմա2.** Ժամանակակից հոգեբանության կառուցվածքը և մեթոդները **Թեմա3.** Հոգեկանի և գիտակցության ծագումն ու զարգացումը **Թեմա4.** Անձնավորություն **Թեմա5.** Գործունեություն **Թեմա6.** Խումբ և կոլեկտիվ **Թեմա7.** Հաղորդակցում և խոսք **Թեմա8.** Ուշադրություն **Թեմա9.** Զգայություն **Թեմա10.** Ընթրնում **Թեմա11.** Հիշողություն **Թեմա12.** Մտածողություն **Թեմա13.** Երևակայություն: Երևակայության դերը ստեղծագործական գործունեության մեջ: **Թեմա14.** Հույզեր և զգացմունքներ **Թեմա15.** Կամք **Թեմա16.** Բնավորություն **Թեմա17.** Խառնվածք **Թեմա18.** Ընդունակություններ

**Հ/Բ -0333 Տարիքային և մանկավարժական հոգեբանություն - 4 կրեդիտ**

**Դասախոսություն - 28 ժամ, գործնական - 32 ժամ, (շաբաթական 4 ժամ)**

**3-րդ կիսամյակ, քննություն**

**Նպատակը.**

Դասընթացը գիտելիքներ է տալիս հոգեկանի զարգացման օրինաչափությունների, անձի տարիքային առանձնահատկությունների, անատոմոֆիզիոլոգիական կառուցվածքի, հոգեկանի զարգացման նախադրյալների, մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերությունների վերաբերյալ, հոգեկանի զարգացման օրինաչափությունների, փաստերի և մեխանիզմների մասին, ուսուցման և դաստիարակության ազդեցությամբ հոգեկանի զարգացման, աշակերտի

անձի զարգացման առանձնահատկությունների, մանկավարժի մասնագիտության կառուցվածքի վերաբերյալ:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

-կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,

-կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,

-կիմանա տարքային բոլոր փուլերում հոգեկանի զարգացման օրինաչափությունները, մեխանիզմներն ու առանձնահատկությունները

-կառանձնացնի տարքային ճգնաժամերը, հոգեկան նորագոյացությունները և գործունեության ձևերը,

-կկարողանա վերլուծության ենթարկել կրթական գործընթացների վերաբերյալ տեսություններն ու դրույթները,

-կիմանա կրթական գործընթացների արդի հիմնախնդիրները կրտսեր դպրոցական, դեռահասության, պատանեկության, ուսանողական տարիքներում:

-կհասկանա կառուցվածքային մոտեցումները, մեթոդաբանության տրամաբանությունը:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Տարիքային և մանկավարժական հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները:

**Թեմա 2.** Տարիքային և մանկավարժական հոգեբանության՝ որպես գիտության ծագումն ու զարգացումը:

**Թեմա 3.** Հոգեկանի զարգացման տեսությունները:

**Թեմա 4.** Հոգեկանի զարգացման օրինաչափություններն ու դինամիկան և անձի ձևավորումն օնտոգենեզում:

**Թեմա 5.** Երեխայի հոգեկան զարգացումը մինչև դպրոց հաճախելը:Պերինատալ հոգեբանություն:Հոգեկան զարգացումը նորածնության շրջանում:

**Թեմա 6.** Երեխայի հոգեկան զարգացումը մանկիկային տարիքում:

**Թեմա 7.** Վաղ մանկական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները:

**Թեմա 8.** Հոգեկան զարգացումը նախադպրոցական տարիքում

**Թեմա 9.** Անձի ձևավորումը և հոգեկան զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում:

**Թեմա 10.** Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության տարիքում:

**Թեմա 11.** Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկության տարիքում:

### **Յ/բ-0326 Սոց. աշխատանքի հիմունքներ –5 կրեդիտ**

**Դասախոսություն –32 ժամ, գործնական – 40 ժամ, (շաբաթական 5 ժամ)**

**5-րդ կիսամյակ, քննություն**

#### **Նպատակը.**

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոց. աշխատանքի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխատանքի բազմազանության և բազմաձևության մասին:

#### **Կրթական արդյունքներ**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ Գիտենա հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները:
- ✓ Գիտենա սոց. աշխատանքը որպես մասնագիտության դերը հասարակական կայուն զարգացման գործընթացում:
- ✓ Կարողանա նախագծել սոցիալական որևէ երևույթի, սոցիալական դեպքի ուսումնասիրմանն ուղղված ուսումնասիրության վերլուծության և առաջարկի հիմնահարցի լուծման ուղիները :

#### **Բովանդակություն**

**Թեմա1.** Սոցիալական աշխատանքն իբրև մասնագիտություն

**Թեմա2.** Սոցիալական աշխատանքի որպես մասնագիտության առաջացման և ձևավորման գործընթացում

**Թեմա3.** Սոցիալական աշխատանքի ինստիտուտը

**Թեմա 4.** Սոցիալական աշխատանքում ընդունված էթիկական նորմերը

**Թեմա 5.** Խորհրդառուների հետ տարվող սոցիալական աշխատանքի գործընթացը

**Յ/բ-0313 Ընտանիքի հոգեբանության հիմունքներ և խորհրդատվություն - 6 կրեդիտ**

**Դասախոսություն –48 ժամ, գործնական – 40 ժամ, (շաբաթական 5.5 ժամ) 6-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան ընտանիքի հոգեբանության և խորհրդատվության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական ,հոգեբանական լուծումներ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի ընտանեկան հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

***Բովանդակությունը***

**Թեմա 1.** Ընտանիքի հոգեբանության առարկան ,խնդիրները ,սկզբունքները , մեթոդները

**Թեմա 2.** Ընտանիքի հիմնական ֆունկցիաները: **Թեմա 3** Սեր և խանդ: Խանդի բաղադրիչները: **Թեմա 4.** Ապագա ամուսնու ընտրությունը: Հոգեբանական

համատեղելիություն: **Թեմա 5** Մինչամուսնական սեռական կյանք: Արտամուսնական կապեր: **Թեմա 6.** Ներընտանեկան կոնֆլիկտներ.պատճառները,տեսակները:

Ներընտանեկան կոնֆլիկտ և փակուղի : Փակուղուց դուրս գալու միջոցները: **Թեմա 7.** Անուսնալուծության պատճառները և հետևանքները: **Թեմա 8** Երեխան, որպես ընտանիքի լիարժեք անդամ: **Թեմա 9.** Ընտանեկան խորհրդատվության առարկան, խնդիրները, նպատակները: **Թեմա 10.** Ընտանիքին ցույց տրվող հոգեբանական օգնության տարբերակները: **Թեմա 11.** Կլինիկական և ախտաբանական/պաթալոգիկ/ դրսևորումները ծնողական դիրքորոշումների ընթացքում: **Թեմա 12.** Նախնական հոգեախտորոշում: Բողոքի վերլուծությունը: **Թեմա 13** Դիմողի վարքը առաջին հանդիպման, գրույցի ժամանակ : **Թեմա 14** Երեխայի վարքի զարգացման շեղումների հոգեախտաբանության նպատակները: **Թեմա 15** Կոնֆլիկտի գոտին և ծնողների բողոքները հասակակիցների հետ շփման պրոբլեմների դեպքում : **Թեմա 16** Ընտանեկան ախտաբանության մեթոդիկայի միօրինակությունը և արդյունավետությունը **Թեմա 17.** Ընտանիքի համատեղ հոգեթերապիան, որպես խորհրդատվական ամենաարդյունավետ միջոց:

**Յ/բ-0310 Սոցիալական հոգեբանություն –4 կրեդիտ**

**Դասախոսություն –28 ժամ, գործնական - 32 ժամ, (շաբաթական 4 ժամ)**

**3-րդ կիսամյակ, ստուգաթղթ**

### **Նպատակը.**

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան սոցիալ-մանկավարժական գործունեությանը նթացքում առաջացած խնդիրներին տալ սոցիալ-հոգեբանական լուծումներ:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի սոցիալական հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:



***Բովանդակությունը***

**Թեմա 1,** Սոցիալական հոգեբանության տեղը այլ գիտակարգերի համակարգում:

**Թեմա 2,** Սոցիալ-հոգեբանական մտքի ձևավորման պատմությունը:

**Թեմա 3,** Սոցիալ- հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական հիմքերը:

**Թեմա 4,** Հասարակական և միջանձնային հարաբերություններ:

**Թեմա 5,** Հաղորդակցման կոմունիկատիվ կողմը:

**Թեմա 6,** Հաղորդակցման ինտերակտիվ կողմը:

**Թեմա 7,** Հաղորդակցման պերցեպտիվ կողմը

***Յ/բ-0310 Սոցիալական հոգեբանություն –4 կրեդիտ***

***Դասախոսություն –28 ժամ, գործնական - 28 ժամ, (շաբաթական 4ժամ)***

***4-րդ կիսամյակ, քննություն***

***Նպատակը.***

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան սոցիալ-մանկավարժական գործունեությանը նթացքում առաջացած խնդիրներին տալ սոցիալ-հոգեբանական լուծումներ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի սոցիալական հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

***Բովանդակությունը***

**Թեմա 1,** Խմբերի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

**Թեմա 2,** Մեծ սոցիալական խմբեր

**Թեմա 3,** Տարերային խմբեր և սոցիալական շարժումներ:

**Թեմա 4,** Փոքր խմբերի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

**Թեմա 5,** Փոքր խմբում դինամիկ գործընթացների ընդհանուր բնութագիրը:

**Թեմա 6,** Միջխմբային հարաբերություններ:

**Թեմա 7,** Անձի սոցիալական հոգեբանություն

**Թեմա 8,** Սոցիալականացում, սոցիալականացման փուլերն ու ինստիտուտները:

**Թեմա 9,** Սոցիալական դիրքորոշում:

**Մ /բ-1127 Տարիքային մանկավարժություն – 5 կրեդիտ**

**Դասախոսություն - 32 ժամ, սեմինար - 40 ժամ, Շաբաթական 4,5 ժամ ժամ,**

**3-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել տարիքային տարբեր խմբերի երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին , նրանց հետ տարվող անհատական տարատեսակ աշխատանքներին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքները կիրառել սոցիալ-մանկավարժական գործունեության ընթացքում,
- ընտանիքների, կրթադաստիարակչական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներում,

***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Տարիքային մանկավարժության առարկան, նպատակը և խնդիրները:

***Թեմա 2.*** Նախադպրոցական տարիքի նշանակությունը անձնավորության ձևավորման գործում: ***Թեմա 3*** Խաղը որպես երեխայի բազմակողմանի դաստիարակության միջոց: ***Թեմա 4*** Ավագ նախադպրոցականին դպրոցական

ուսումնառության նախապատրաստումը: **Թեմա 5.** Կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 6** Դեռահասության տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 7.** Պատանեկան տարիքի առանձնահատկությունները:

**Յ/բ-0341 Սոցիալական քաղաքականություն` 5 կրեդիտ**

**Դասախոսություն` 32 ժամ, գործնական` 32 ժամ, շաբաթական 4 ժամ**

**Ց-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել ժամանակակից պետության ներքին կարևորագույն բաղադրատարրերից մեկի` սոցիալական քաղաքականության, վերջինիս ձևավորման պատմական անհրաժեշտության, տնտեսության զարգացման մակարդակի և սոցիալական քաղաքականության վարման ձևի ու խորության, գաղափարախոսության միջև կապի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

**- ԳԻՏԵՆԱ`**

Սոցիալական քաղաքականության էությունը, հիմնական սկզբունքները, սուբյեկտները, իրականացման ձևերը:

**-ԿԱՐՈՂԱՆԱ`**

Գնահատել սոցիալական քաղաքականության դաշտում մշակված ծրագրերը:

**-ՏԻՐԱՊԵՏԻ`**

Սոցիալական քաղաքականության բնագավառում մասնակցային և համագործակցային հետազոտությունների ընթացակարգին:

***Բովանդակությունը***

**Թեմա 1.** 1.Սոցիալական քաղաքականության էությունը. վերջինիս սահմանումների քննարկում, սոցիալական քաղաքականությունը` իբրև պետության ներքին քաղաքականության ձև: 2.Սոցիալական հիմնախնդիրներ, դրանց լուծման անհրաժեշտությունը և ձևերը, սոցիալական պահանջմունքի ձևեր, դրանց ուղղակի

ազդեցությունը սոցիալական հիմնախնդիրների առաջացման վրա: 3.Սոցիալական քաղաքականություն և սոցիալական ծառայություններ, դրանց տեսակները փոխկապվածությունը: Սոցիալական ապահովություն, առողջապահություն, կրթություն, բնակարանային ապահովում, անձնական սոցիալական ծառայություն: 4. Սոցիալական քաղաքականության սկզբունքները: Արդարություն և հավասարություն, արդյունավետություն, համընդհանրություն և ընտրականություն, վերաբաշխում, համերաշխություն;

**Թեմա 2. 1.** «Բարեկեցության պետությունը»՝ որպես սոցիալական քաղաքականության հիմք: Պատերազմի ուղղակի և անուղղակի հետևանքների ազդեցությունը սոցիալական քաղաքականության կազմակերպման անհրաժեշտության վրա: Մեծ լճացման մասին հիշողություններ: Քեյնսի տնտեսագիտական տեսության գաղափարները: «Բարեկեցության պետության սկզբունքները»: 2. Գաղափարախոսության դերը սոցիալական քաղաքականության կազմակերպման գործում: «Աջեր». պահպանողականություն և ազատականություն: «Չախեր». սոցիալիզմ և սոցիալական ժողովրդավարություն: 3.Բարեկեցության պետության մոդելներ. Ռ.Թիթմուսի մնացորդային, ինստիտուցիոնալ, արտադրական ձեռքբերումների մոդելները, Գ.Էսպինգ-Անդերսոնի ազատական, հետադիմական-կորպորատիվ, սոցիալ-ժողովրդավարական մոդելները: 4. Սոցիալական քաղաքականության զարգացումը ապահովող գործոններ. տնտեսության վիճակը, ժողովրդագրական իրավիճակ, ճնշման խմբեր, էմպիրիկ գործոն: 5. Սոցիալական քաղաքականության մոդելներ. Արևմուտքի փորձ: Շվեդիա. սոցիալ-ժողովրդական մոդել: Գերմանիա. պահպանողական-կորպորատիվ մոդել: Մեծ Բրիտանիա և ԱՄՆ. ազատական մոդել: Հայաստանյան փորձ սոց.քաղաքականության մոդելի ստեղծման գործում:

**Թեմա 3. 1.**Սոցիալական քաղաքականության իրականացումը: Սոցիալական ծառայությունների բաշխումը. պետական հատված, մասնավոր հատված, հասարակական հատված, ոչ ձևական հատված: Ֆինանսավորման միջոցներ: 2.Սոցիալական ծառայության հասցեականությունը, դրա ապահովման մեթոդները. գում, հապաղում կամ սոցիալական ծառայությունների դանդաղ մատուցում, թուլացում, ծառայությունների համար վճարում, օգնության մատչելիության սահմանափակում, զսպում: 3.Սոցիալական ծառայությունների ստացման

առանձնահատկությունները. ֆինանսական, ֆիզիկական, հոգեբանական խոցելիություն:

**Թեմա 4.** 1.Սոցիալական քաղաքականության գնահատումը: Սոցիալական քաղաքականության նպատակների և հետևանքների հարաբերակցության խնդիրը: 2. Ծրագրային փաթեթ: Կարիքի գնահատում: Ծրագրի ընդհանուր գնահատում: Ծրագրի նպատակի, տրամաբանության, պրոբլեմի համապատասխանության գնահատում: Ծրագրի իրականացման գնահատում, մոնիտորինգ: Ծրագրի արդյունքների և արդյունավետության գնահատում, հաշվետվություն: 3. Շահառուներ, տեսակները: Անկախ և մասնակցային գնահատում: 4. Սոցիալական քաղաքականության գնահատման վերլուծական սխեմաներ: Պրոբլեմային իրավիճակի ախտորոշում: Այլընտրանքային ուղիների լուծման առաջադրում: Այլընտրանքային ուղիների լուծման գնահատում: Հիմնախնդիրների ծառ: 5. Սոցիալական քաղաքականության գնահատման վերլուծություն: Սոցիալական քաղաքականության գնահատման վերլուծության ժամանակ առաջ եկող դժվարություններ. պատճառի և հետևանքի հիմնահարց: Տեղեկատվության հասարակությունանելիության խնդիրը:

**Մ/բ-0272 Սոցիալական մանկավարժության պատմություն` 5 կրեդիտ  
Դասախոսություն` 32 ժամ, սեմինար` 32 ժամ, շաբաթական 5 ժամ  
8-րդ կիսամյակ, քննություն**

**Նպատակը** - Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիալ-մանկավարժական մտքի ծագման և զարգացման պատմությանը, պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ գաղափարների անկման և վերելքի նախադրյալներին:

**Կրթական արդյունքները.**

- մասնագիտական գիտելիքները խորացնելու և փոխանցելու հմտությանը
- նոր գաղափարներ առաջ քաշելուն
- թիմում աշխատելու կարողանությանը
- գնահատման գործիքների կիրառմանը

## **Բովանդակություն**

**Թեմա 1.** Սոցիալական մանկավարժության զարգացման սկզբնական փուլը (հին ժամանակներից մինչև 17-րդ դարը): **Թեմա 2.** Կոնֆուցիոս «Ձրույցներ և դատողություններ», **Թեմա 3.** Պլատոն – Պրոտոգորես, Օրենքներ, Պետություն: **Թեմա 4.** Արիստոտել- Քաղաքականություն, Մարկ Քվինթիլիանոս «Յոթերորդի դաստիարակության մասին»: **Թեմա 5.** Վլադիմիր Մոնամախ – Խրատական ուսուցում (քարոզ), **Թեմա 6.** Յան Կոմենսկի – Մայրական դպրոց կամ երիտասարդության հոգատար դաստիարակության մասին 6 տարվա ընթացքում: Դիդակտիկա: **Թեմա 7.** Առաջատար ուղղությունների զարգացումը սոցիալական մանկավարժությունում 18-19-րդ դարերում: Սոցիալական մանկավարժության կայացումը որպես գիտություն: **Թեմա 8.** Ջ.Լոկկ «Մտքեր դաստիարակության մասին», Ժ.Ժ.Ռուսո, **Թեմա 9.** Ա.Դիստերվեգ, Պիրոգով, **Թեմա 10.** Ռ. Օուլեն, Շ.Ֆուլյե, **Թեմա 11.** Պ. Լեսզաֆտ, Պ. Նատորպ: **Թեմա 12.** Ելիզավետա Նիկոլաևնա Վոդովոզովա:

**Մ/բ-1107 Մանկավարժական ժամանակակից տեսություններ` 3 կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, սեմինար` 28 ժամ, շաբաթական 3 ժամ**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Ձևավորել ուսանողների գիտական աշխարհայացքը, ընդլայնել ուսանողների մանկավարժական մտահորիզոնը, կատարելագործել մանկավարժական վարպետությունը, մանկավարժական տեսությունների տրամաբանական յուրացում:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները.

- կկարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կկարողանան գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ, նրանց մոտ կձևավորվի քննադատական մտածողություն:

### ***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** Ներածություն: Տեսությունների համառոտ բնութագիրը **Թեմա 2.** Ա. Բինեի տեսությունը **Թեմա 3** . Ս. Շացկու գիտամանկավարժական գործունեությունը, տեսությունը **Թեմա 4.** Պ. Բլոնսկու կյանքը, գիտամանկավարժական գործունեությունը, տեսությունը **Թեմա 5.** Ա. Մակարենկոյի կյանքը, գիտամանկավարժական գործունեությունը, տեսությունը **Թեմա 6** Ս. Մոնտեսսորիի կյանքը, գիտամանկավարժական գործունեությունը, տեսությունը **Թեմա 7** 3. Կորչակի կյանքը, մանկավարժական գործունեությունը, տեսությունը **Թեմա 8** 2. Ռոդարիի մանկավարժական գործունեությունն ու տեսությունը **Թեմա 9** 3. Գարդների գիտական գործունեությունն ու տեսությունը **Թեմա 10** 3. Զամագործակցային ուսուցում **Թեմա 11** Քննադատական մտածողության տեսություն

## **Կամընտրական դասընթացներ**

**Մ/բ-0264 Էթնիկական մանկավարժություն (3 կրեդիտ)**

**Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական՝ 26 ժամ Շաբաթական 3 ժամ**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը***

*Հավաքել և համակարգել երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության մասին այն բոլոր տվյալները, որոնք կան ազգային մշակույթներում:*

*1) Բացահայտել, թե ժողովրդի մանկավարժական մշակույթն ինչպես է նպաստում սերունդների միջև կապերի ստեղծմանն ու ժամանակի ճիշտ ըմբռնմանը. նախնիներ -մենք ապագա սերունդներ շղթայի գիտակցմանը:*

*2) Ժամանակակից գիտական մանկավարժության և հոգեբանության ձեռքբերումների*

*միջոցով բացայտել էթնոսի հոգեկան և մշակույթի առանձնահատկությունների փոխկապվածությունը:*

### ***Կրթական արդյունքները.***

**Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.**

1. էթնոմանկավարժության առանձնահատկությունները, խնդիրները, կառուցվածքը
2. էթնոմանկավարժության հիմնական հասկացությունները
3. էթնոմանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում
4. ժողովրդի բազմադարյան փորձի, բարոյական արժեքների սերնդե սերունդ փոխանցման կարևորությունը
5. ժողովրդական մանկավարժության մեջ օգտագործվող ավանդական մեթոդների և միջոցների վերածննդի կարևորությունը:

***Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.***

1. մանկավարժական տարբեր իրավիճակներում կիրառել յուրացված տեսական գիտելիքները
2. ձևակերպել սեփական տեսակետը ժողովրդական մանկավարժության հիմնախնդրի վերաբերյալ
3. արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը ժողովրդի մշակութային անցյալի արժեվորման մասին:

***Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.***

1. էթնոմանկավարժական գիտելիքների անհրաժեշտ մակարդակին
2. էթնոմանկավարժության հիմնական հասկացությունների համակարգին
3. ժողովրդական մանկավարժության ժամանակակից միջոցներին:

***Բովանդակությունը.***

**ԹԵՄԱ 1.** Էթնիկական մանկավարժության առարկան և խնդիրները **ԹԵՄԱ 2.** Էթնիկական սոցիալականացում և մանկավարժություն **ԹԵՄԱ 3.** Բնության արտացոլումը էթնոսի մանկավարժական մշակույթում **ԹԵՄԱ 4.** Նախնադարյան էթնոմանկավարժություն և էթնոսի ծագման (էթնոգենեզ) խնդիրները **ԹԵՄԱ 5.** Կրոնական պահանջմունք և ճակատագրապաշտություն **ԹԵՄԱ 6.** Քրիստոնեական հոգեբանություն և մանկավարժություն **ԹԵՄԱ 7.** Էթնիկական սոցիալական իմացություն և մանկավարժություն **ԹԵՄԱ 8.** Մարդու բնավորության մասին պատկերացումները ժողմանկավարժության մեջ **ԹԵՄԱ 9.** Ժողովրդական



պատկերացումները մարդու ընդունակությունների մասին **ՁԵՄԱ 10**. Յանելուկների էթնոմանկավարժություն և էթնոհոգեբանություն

**Մ/բ-0277 Շեղվող վարքի մանկավարժություն 3 կրեդիտ**

**Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական՝ 26 ժամ Շարաքական 3 ժամ**  
**5-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

Ուսանողներին գաղափար տալ անձնավորության զարգացման օրինաչափությունների և շեղվող վարքի մասին: Ուսանողներին գիներ շեղվող վարք ունեցող երեխաների դաստիարակության առանձնահատկությունների, ախտորոշման և օգնություն ցուցաբերելու մանկավարժական գիտելիքներով:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա դժվար դաստիարակվող երեխաների դաստիարակության առանձնահատկությունների, ախտորոշման և օգնություն ցուցաբերելու մանկավարժական ուղիները,
- կկարողանա դժվար դաստիարակվող երեխաների հետ տարվող աշխատանքների մասին ձեռք բերած գիտելիքները և ունակությունները կիրառել գործնականում,
- կնախապատրաստվի դժվար դաստիարակելիության խնդրի հետագա ուսումնասիրություններին,
- կտիրապետի շնորհալի և դժվար դաստիարակվող երեխաներին բացահայտող ախտորոշիչ մեթոդիկաներին:

***Բովանդակությունը.***

***Ձեմա 1.*** Դժվար դաստիարակելիությունը և նրա դասակարգումը . ***Ձեմա 2*** Երեխաների և դեռահասների շեղված վարքագիծ: ***Ձեմա 3.*** Մանկական անհարմարվողականության տիպաբանությունը, ընդհանուր տարբերակումը և նրա ախտորոշումը: ***Ձեմա 4.*** Ուսման մեջ հետ մնացող աշակերտներ. ***Ձեմա 5.*** Շնորհալի երեխաները և նրանց դաստիարակության, ուսուցման խնդիրները: ***Ձեմա 6.***

Ընտանիքը և երեխաների հակասոցիալականացումն ու հակահարմարվողականությունը: **Թեմա 7.** Դժվար երեխաների հետ մանկավարժական աշխատանքի պայմանները դպրոցում: **Թեմա 8** Երեխայի և նրա մանկության սոցիալ - հոգեբանական պաշտպանվածություն:

**Մ/բ-1128 Մանկավարժական ներգործության հնարները – 4 կրեդիտ**  
**Դասախոսություն - 24 ժամ, գործնական - 32 ժամ, Շարաքական 3,5 ժամ**  
**7-րդ կիսամյակ, քննություն**

**Մ /բ- -1129 Սոցիալական մանկավարժը մասնագիտական կողմնորոշման համակարգում – 4 կրեդիտ**  
**Դասախոսություն - 24 ժամ, գործնական - 32 ժամ, Շարաքական 3,5 ժամ**  
**7-րդ կիսամյակ, քննություն**

### **Նպատակը.**

Դասընթացը ապագա սոցիալական մանկավարժին նախապատրաստում է օգնելու տարբեր տարիքային խմբերի երեխաներին ճիշտ որոշելու իրենց ապագա մասնագիտությունը, որից կախված է անձի ներդաշնակ զարգացումը, հասարակական և մասնագիտական ակտիվությունն ու ինքնադրսևորումը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքները կիրառել սոցիալ-մանկավարժական գործունեության ընթացքում,
2. կկարողանա հստակորեն կողմնորոշվել տարբեր տարիքային խմբերի երեխաներին ապագա մասնագիտության ճիշտ դիրքորոշման հարցերում:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1** «Սոցիալական մանկավարժը մասնագիտական կողմնորոշման համակարգում» դասընթացի նպատակն ու խնդիրները: **Թեմա 2.Սոցիալական մանկավարժը նախադպրոցական տարիքի երեխաների մասնագիտական կողմնորոշման օրոժում** :Առաջին քայլերը մասնագիտության մեջ: **Թեմա 3**

Սոցիալական մանկավարժը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մասնագիտական դաստիարակության օրոժընթացում: **Թեմա 4** Դեռահասության տարիքի երեխաների ծանոթությունը մասնագիտությունների աշխարհին: **Թեմա 5.** Սոցիալական մանկավարժի մասնակցությունը պատանեկան տարիքի երեխաների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում: **Թեմա 6** Մասնագիտական ընտրության համակարգը: **Թեմա 7.** Սոցիալ-մասնագիտական ադապտացիան:

### **Յ/բ-0321 Էթնոհոգեբանություն –3 կրեդիտ**

**Դասախոսություն –24 ժամ, գործնական – 26 ժամ, (շաբաթական 4 ժամ)**

**5-րդ կիսամյակ, ստուգաթղթ**

#### **Նպատակը.**

Ուսանողներին զինել գիտելիքներով էթնոհոգեբանական հիմնախնդիրների, էթնոհոգեբանական հիմնական հասկացությունների, էթնոսների տեսակների և զարգացման փուլերի, միջէթնիկական հարաբերությունների, էթնիկական ինքնագիտակցության և ինքնիմացության, էթնիկական ստերեոտիպերի, էթնոցենտրիզմի, էթնոքաղաքականության և այլ էթնոհոգեբանական հասկացությունների վերաբերյալ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էթնիկական հոգեբանության հիմնական խնդրացանկը
2. ծանոթ կլինի էթնիկական խմբերի դինամիկայի օրինաչափություններին
3. կկարողանա դուրս բերել միջէթնիկական փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների առանձնահատկությունները:

#### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Էթնիկական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Էթնիկական ինքնագիտակցություն **Թեմա 3.** Էթնոս և մշակույթ **Թեմա 4.** Էթնոպաշտպան մեխանիզմներ **Թեմա 5.** Էթնիկական ստերեոտիպեր և էթնոցենտրիզմ **Թեմա 6.**

Էթնիկական հոգեկերտվածք **Թեմա 7**. Ազգային բնավորություն **Թեմա 8**. Մարզինալ կարգավիճակ **Թեմա 9**. Ասիմիլյացիա **Թեմա 10**. Էթնոգենետիկ գործընթացներ

### **Հ/բ-1149 Ընտանիքի սոցիոլոգիա –3 կրեդիտ**

### **Դասախոսություն –24 ժամ, գործնական - 26 ժամ, Շարաքական 4 ժամ**

### **5-րդ կիսամյակ, ստուգաք**

#### ***Նպատակը.***

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել ընտանիքի պատմական փոփոխության, իբրև սոցիալական խումբ և ինստիտուտ՝ սոցիոլոգիական երկակի մոտեցման և հետազոտման առանձնահատկությունների վերաբերյալ:

#### ***Կրթական արդյունքները.***

##### **- ԳԻՏԵՆԱ՝**

Ընտանիքի դերը հասարակության գործառնության սահմաններում՝ այլ ինստիտուտների հետ փոխկախվածության տեսանկյունից:

##### **-ԿԱՐՈՂԱՆԱ՝**

Կազմակերպել ընտանիքի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտություն:

##### **-ՏԻՐԱՊԵՏԻ՝**

Ընտանիքի հետազոտման հիմնական մեթոդներին, գործիքների մշակման ձևերին, վերլուծության հիմնական եղանակներին:

#### ***Բովանդակությունը***

**Թեմա 1. Ընտանիքի սոցիոլոգիայի էությունը:** Ընտանիքը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտ: Ընտանիքը ուսումնասիրող գիտությունները և դրանց կապը սոցիոլոգիայի հետ: Ընտանիքի պատմական կայացումը: Ընտանիքի քննության միկրո և մակրոսոցիոլոգիական կոնտեքստը:

**Թեմա 2. Ընտանիքն ուսումնասիրող տեսական մոտեցումներ:** Ընտանիքի քննությունը կառուցվածքային ֆունկցիոնալիզմի, կոնֆլիկտի, տեսության

շրջանակներում: Ընտանիքի քննությունը փոխանակման, տպավորությունների կառավարման տեսության շրջանակներում: Ընտանիքի քննությունը սիմվոլիկ ինտերակցիոնիզմի շրջանակներում: Ընտանիքի քննությունը էթնոմեթոդաբանության շրջանակներում: Ընտանիքի քննությունը Վալերշտայնի սոցիոլոգիական հայացքներում:

**Թեմա 3. Ընտանիքն իբրև սոցիալական խումբ և ինստիտուտ:** Ընտանիքը որպես սոցիալական խումբ: Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ: Ընտանիքի կապն այլ սոցիալական ինստիտուտների հետ: Ընտանիք և տնտեսություն: Ընտանիք և մշակույթ: Ընտանիքը որպես մշակութային ստանդարտների փոխանցման կարևոր օղակ: Ընտանիք և կրոն: Ընտանիք և կրթություն: Ընտանիք և քաղաքականություն: Հասարակության քաղաքա-տնտեսական հիմքերի ուղղակի և անուղղակի ազդեցությունը ընտանիքի վրա: Ընտանիքի ֆունկցիաները: Ընտանիքի սպեցիֆիկ ֆունկցիաները: Ընտանիքի ոչ սպեցիֆիկ ֆունկցիաները: Ընտանիքի ֆունկցիաների փոփոխությունը պատմության ընթացքում:

**Թեմա 4. Ընտանիքի տիպաբանությունը:** Ընտանիքի պատմական զարգացումը: Ավանդական և ժամանակակից ընտանիքների նմանություններն ու տարբերությունները: Ավանդական ընտանիք. առանձնահատկությունները: Նուկլեար ընտանիք. առանձնահատկությունները: Ընտանիքի տիպաբանությունը ըստ իշխանության բաշխման հիմքի: Երկկարիեռային ընտանիք. առանձնահատկությունները: Ընտանիքատիպ միավորումներ:

**Թեմա 5. Ընտանեկան կոնֆլիկտներ:** Ընտանիք և սոցիալական միջավայր: Ընտանիք և երեխա: Կին և ընտանիք: Ընտանիք և սոցիալական միջավայր: Ընտանեկան կոնֆլիկտների յուրահատկությունը: Միջսերնդային կոնֆլիկտներ ընտանիքում: Ներսերնդային կոնֆլիկտներ ընտանիքում: Ընտանեկան ենթամշակույթ:

**Թեմա 6. Ընտանիքի սոցիոլոգիական հետազոտման առանձնահատկությունները:** Ընտանիքի հետազոտման մեթոդական և մեթոդաբանական հիմքերը: Կյանքի պատմությունների մեթոդի կիրառելիությունը ընտանիքի հետազոտման ընթացքում: Խորին հարցազրույցի և հարցաթերթիկային հարցման կիրառելիությունը ընտանիքի հետազոտման ընթացքում: Ներգրավված դիտում: Ընտանիքի հետազոտման դժվարությունները:

**Մ/բ-1106 Պենիտենցիար մանկավարժություն 3 կրեդիտ**

**Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական՝ 24 ժամ Շաբաթական 3 ժամ**  
**4-րդ կիսամյակ, ստուգաթղթ**

***Նպատակը.***

1. Կարևորել դատապարտյալների ուղղման ու վերադաստիարակության և կրթության խնդիրները:
2. Ծանոթանալ այն առաջադեմ մեթոդներին, հնարներին և միջոցներին, որոնք կարող են նպաստել դատապարտյալների առողջ և ամուր կոլեկտիվի ստեղծմանը:
3. Հասարակության ուշադրությունը հրավիրել անչափահաս հանցագործների հետ տարվող աշխատանքների կարևորության վրա:

***Կրթական արդյունքները.***

*Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.*

- պենիտենցիար մանկավարժության մեթոդոլոգիական հիմքերը, հետազոտությունների չափորոշիչները
- դատապարտյալի հետ աշխատելու առանձնահատկությունները և դժվարությունները
- դատապարտյալի վերադաստիարակության սկզբունքները
- Մակարենկոյի կոլեկտիվի տեսությունը

*Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.*

- ուսումնասիրել դատապարտյալի ներաշխարհը
- կազմակերպել կրթության գործընթացը դատապարտյալների համար ճիշտ կիրառել դատապարտյալների ֆիզիկական, բարոյական, աշխատանքային և իրավական դաստիարակության մեթոդները

*Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.*

- դատապարտյալների հետ փոխհարաբերությունների հաստատման մեխանիզմին
- վերադաստիարակության ձևերին և իրականացման եղանակներին
- Մակարենկոյի տեսության կիրառման մեխանիզմին:

***Բովանդակությունը.***

**Ձեռնարկ 1.** Պենիտենցիար մանկավարժության առարկան և խնդիրները. **Ձեռնարկ 2.** Պենիտենցիար մանկավարժությունը որպես մանկավարժության առանձին ճյուղ. **Ձեռնարկ 3.** Պենիտենցիար մանկավարժության մեթոդալոգիական հիմքերը, հետազոտման մեթոդները. **Ձեռնարկ 4.** Պենիտենցիար մանկավարժության հիմնական հասկացությունները. **Ձեռնարկ 5.** Դատապարտյալների անձը, նրա ուղղմանը ներկայացվող չափորոշիչները. **Ձեռնարկ 6.** Դատապարտյալների վերադաստիարակության և ուղղիչ-աշխատանքների սկզբունքները. **Ձեռնարկ 7.** Դատապարտյալների ֆիզիկական, աշխատանքային, իրավական, էսթետիկական, բարոյական դաստիարակությունների էությունը, սկզբունքները և մեթոդները. **Ձեռնարկ 8.** Մանկավարժական գործընթացի առանձնահատկությունները կանանց գաղութում **Ձեռնարկ 9.** Անչափահաս դատապարտյալների բնութագիրը **Ձեռնարկ 10.** Դատապարտյալների կրթության գործընթացի կազմակերպման յուրահատկությունը ուղղիչ-աշխատանքային հիմնարկներում.

**Մ/բ-0248 Համեմատական մանկավարժություն 3 կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, գործնական` 24 ժամ, Շարաքական 3 ժամ**

**4-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել գիտական ուսումնասիրության նոր բնագավառին, տարբեր երկրների տնտեսական, մշակութային, քաղաքական, սոցիալական ինստիտուտներին, միջազգային կրթական համակարգերի համեմատական վերլուծության արդյունքում ի հայտ բերել առաջավորը, կիրառելի տարբեր երկրների համար:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- համեմատական մանկավարժության ծագումն ու զարգացումը,
- համեմատական մանկավարժության առարկան, խնդիրները և գործառույթները,
- համաշխարհային կրթադաստիարակչական համակարգի խնդիրները,

- Անգլիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի կրթահամակարգերը և դրանց առանձնահատկությունները,
- սփյուռքահայության կրթության որոշ հիմնահարցեր,
- ժամանակակից բուրժուական տեսությունների ասպեկտները համեմատական մանկավարժության մեջ:

Կկարողանա.

- կիրառել համեմատական մանկավարժության մեթոդները,
- ուսումնասիրել կրթահամակարգեր, վերլուծել, դատողություններ անել,
- համեմատել, հակադրել կրթահամակարգերը:

Կտիրապետի.

- կրթահամակարգերի մեկնաբանմանը,
- համեմատական մանկավարժության մեթոդներին,
- ակադեմիապես աշխատելուն:

### ***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** Համեմատական մանկավարժության ծագումն ու զարգացումը: **Թեմա 2.** Համեմատական մանկավարժության առարկան, խնդիրները և գործառույթները: **Թեմա 3.** Համեմատական մանկավարժության մեթոդները: **Թեմա 4.** Համաշխարհային կրթադաստիարակչական համակարգի խնդիրները: **Թեմա 5.** Անգլիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի կրթահամակարգերը և դրանց առանձնահատկությունները: **Թեմա 6.** Սփյուռքահայության կրթության որոշ հիմնահարցեր: **Թեմա 7.** ժամանակակից բուրժուական տեսությունների ասպեկտները համեմատական մանկավարժության մեջ:

***Մ/բ- 1130 Սոցիալ- մանկավարժական մեթոդներ 4 կրեդիտ***

***Դասախոսություն - 24 ժամ, գործնական – 32 ժամ (շաբաթական – 3,5 ժամ)***

***5-րդ կիսամյակ, քննություն***

### ***Նպատակը.***

Սոցիալ-մանկավարժական մեթոդների տեսական ու գործնական հարցերի ուսումնասիրմանը և կոչված է ապագա սոցիալական մանկավարժների մեջ ձևավորելու գործնական և գիտահետազոտական կարողություններ,



մեթոդաբանական մշակույթ, ծանոթացնելու տեսական և էմպիրիկ մեթոդներին, սոցիալ-մանկավարժական մեթոդների գիտական հասկացություններին, իրականացման մեթոդիկային, լեզվաոճական կողմին առաջադրվող մեթոդաբանական պահանջներին, հետազոտության ընթացքում ստացված արդյունքների վերլուծությանը, ամփոփմանը, իմաստավորմանը, գիտական հետազոտության արդյունքների ձևակերպմանը, մեթոդական հանձնարարականների մշակմանը:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

#### ***1. Գիտենա՝***

Գիտական ճանաչողության մեթոդների էությունը, բովանդակությունը, բնութագիրը և դասակարգումը:

Սոցիալ-մանկավարժության մեթոդների դասակարգումը:

Ճանաչողության ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդներ:

Սոցիալ-մանկավարժության մեթոդների մեթոդաբանական հիմունքները:

Սոցիալ-մանկավարժական մեթոդների մեթոդաբանության սահմանումը, խնդիրները, գործառույթները:

Սոցիալ- մանկավարժական մեթոդների մեթոդաբանական սկզբունքները:

Սոցիալ-մանկավարժության մեթոդների բնութագիրը:

Սոցիալ-մանկավարժության մեթոդները՝ որպես սոցիալ-մանկավարժության բնագավառում ճանաչողական գործունեության յուրահատուկ ձև:

Սոցիալ-մանկավարժության մեթոդներն ըստ բնույթի և բովանդակության:

#### ***2. Կարողանա՝***

Կիրառել սոցիալ-մանկավարժության և ճանաչողության ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդները:

Սոցիալ-մանկավարժության մեթոդների մեթոդաբանական հիմունքները:

Սահմանել սոցիալ-մանկավարժական մեթոդների մեթոդաբանության խնդիրները, գործառույթները:

#### ***3. Տիրապետի՝***

- Սոցիալ-մանկավարժական հետազոտությունների պլանավորման, կազմակերպման և ղեկավարման մեթոդներին:

- Ժամանակակից կրթադաստիարակչական աշխատանքի իրականացման, դրա արդյունքների գնահատման մեթոդներին:

***Բովանդակությունը.***

***Թեմա 1.*** Գիտական ճանաչողության մեթոդները.

Գիտական ճանաչողության մեթոդների էությունը, բովանդակությունը, բնութագիրը և դասակարգումը:

Սոցիալ-մանկավարժության մեթոդների դասակարգումը:

Ճանաչողության ընդհանուր գիտական տրամաբանական մեթոդներ:

***Թեմա 2.*** Սոցիալ-մանկավարժության մեթոդների մեթոդաբանական հիմունքները:

Սոցիալ-մանկավարժական մեթոդների մեթոդաբանության սահմանումը, խնդիրները, գործառույթները:

Սոցիալ- մանկավարժական մեթոդների մեթոդաբանական սկզբունքները:

***Թեմա 3.*** Սոցիալ-մանկավարժության մեթոդների բնութագիրը:

Սոցիալ-մանկավարժության մեթոդները՝ որպես սոցիալ-մանկավարժության բնագավառում ճանաչողական գործունեության յուրահատուկ ձև:

Սոցիալ-մանկավարժության մեթոդներն ըստ բնույթի և բովանդակության

***Մ/բ-1131 Սոցիոլոգիական մեթոդները սոց. մանկավարժական հետազոտություններում, 4 կրեդիտ***

***Դասախոսություն՝ 24 ժամ, գործնական 32 ժամ (շաբաթական – 3,5 ժամ)***

***5-րդ կիսամյակ, քննություն***

***Նպատակը***

Սոցիոլոգիական մեթոդների իմացությունը և կիրառումը մանկավարժության մեջ անկասկած կբարձրացնի հետազոտությունների մակարդակը և կնպաստի դաստիարակության տեսության և պրակտիկայի հետագա զարգացմանը:

***Կրթական արդյունքներ***

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողները
  - կկարողանան մեթոդների օգնությամբ կատարել համապատասխան հետազոտություններ, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,

- կկարողանան գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն ուսումնասիրություններ, եզրահանգումներ, նրանց մոտ կծկավորվի քննադատական մտածողություն:

***Քովանդակություն***

Թեմա1. Սոցիոլոգիական մեթոդների տեղը և դերը մանկավարժական հետազոտություններում: Թեմա2. Որոշակի սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդների առանձնահատկությունները: Թեմա3. Հասարակությունը որպես սոցիալական համակարգ: Թեմա4. Սոցիալական հաստատություններ: Թեմա5. «Սոցիալական նորմ» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Թեմա6. Սոցիալական հետազոտություն. կառուցվածքը, մեթոդիկա, տեխնիկան: Թեմա7. Հարցման մեթոդներ: Հարցման մեթոդների հիմնական տեսակները: Թեմա8. Անկետավորում: Թեմա9. Սոցիոմետրիական հարցում: Թեմա10. Սոցիոլոգիական դիտում: Թեմա11. Սոցիոլոգիական փորձ: Թեմա12. Փաստաթղթերի վերլուծություն: Թեմա13. Սոցիալական և սոցիալ-մանկավարժական գիտափորձ: Թեմա14. Համեմատական հետազոտություն:

**Յ/բ-0322 Աշխատանքի հոգեբանություն - 4կրեդիտ**

**Դասախոսություն - 24 ժամ, գործնական - 28 ժամ (շաբաթական – 3,5 ժամ)**

**6-րդ կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը.**

Ուսանողին տալ գիտելիքներ կրթության կառուցվածքի, ուսումնական և մանկավարժական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների, օրինաչափությունների մասին, ներառական կրթության առանձնահատկությունների, հատուկ կարիքներով երեխաների հետ տարվող աշխատանքների մասին:

**Կրթական արդյունքները**

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
- կկարողանա առանձնացնել աշխատողների մասնագիտական ընտրության, պատրաստման և ուսուցման հիմնական կողմերը,
- կիմանա աշխատանքային դրդապատճառների բացահայտման եղանակները,
- կառանձնացնի մասնագիտական սթրեսների և մասնագիտական հիվանդությունների արդի հիմնախնդիրները,
- կկարողանա ախտորոշել մասնագիտական ընդունակությունների կառուցվածքային առանձնահատկությունները:

### ***Բովանդակություն***

**Թեմա 1`** Աշխատանքի հոգեբանության առարկան, խնդիրներ, մեթոդները: **Թեմա 2** Աշխատանքի հոգեբանության զարգացման պատմությունը: Աշխատանքը որպես հասարակական երևույթ: **Թեմա 3`** Մարդը որպես աշխատանքի սուբյեկտ: Աշխատանքը և մարդու տիպական անհատական հատկանիշները **Թեմա 4** Աշխատանքային կարողություններ և հմտություններ: Դրանց ձևավորման առանձնահատկությունները: **Թեմա 5** Աշխատանքային գործունեության արդյունավետության ախտորոշում; խատողի ընդունակությունների կառուցվածքի ախտորոշման ժամանակակից մեթոդները: **Թեմա 6`** Աշխատանքային գործունեության մոտիվացիան: Մոտիվացիային նպաստող գործոնները, դրդապատճառների համաստորադասությունը: **Թեմա 7** Աշխատանքային գործունեությանը հոգեբանորեն պատրասվածության հիմնախնդիրը: Էքստրեյլալ և օպտիլալ պայմաններում իրականացվող աշխատանքի հոգեբանական առանձնահատկություններ **Թեմա 8** Աշխատանքի պայմանները և աշխատողի հոգեվիճակները: Սթրեսներ, ֆրուստրացիաներ: **Թեմա 9** Աշխատանքային գործունեության մեջ հաղորդակցման առանձնահատկությունները: Աշխատանքային կոլեկտի, հոգեբանական բնութագիրը:

**Թեմա 10** Միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշումը: Մասնագիտական հեղինակություն: **Թեմա 11** Ինժեներական հոգեբանություն: Նպատակները, ստրատեգիաներ և խնդիրներ:

**Յ/բ-1134 Աշխատանքի սոցիոլոգիա – 4 կրեդիտ**

**Դասախոսություն – 24 ժամ, գործնական - 28 ժամ, (շաբաթական – 3,5 ժամ)**

**6-րդ կիսամյակ, ստուգարք**

**Նպատակը.**

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել աշխատանքի սոցիալական կոնտեքստի պատմական փոփոխության, դրանում տեղի ունեցող գործընթացների սոցիոլոգիական՝ հնարավոր չափելիության վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

**- ԳԻՏԵՆԱ՝**

Սոցիոլոգիայի դերը աշխատանքային գործընթացների արդյունավետ կազմակերպման գործում, աշխատանքային կոնտեքստի սոցիոլոգիական չափման հնարավորությունները:

**-ԿԱՐՈՂԱՆԱ՝**

Կազմակերպել աշխատանքային կոնկրետ գործընթացի արդյունավետության գնահատմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտություն:

**-ՏԻՐԱՊԵՏԻ՝**

Աշխատանքի սոցիոլոգիական հետազոտման հիմնական մեթոդներին, գործիքների մշակման ձևերին, վերլուծության հիմնական եղանակներին:

**Բովանդակությունը**

**Թեմա 1.Աշխատանքի սոցիոլոգիայի էությունը:** 1.Աշխատանքի սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները: 2.Աշխատանքի սոցիոլոգիան որպես միջին մակարդակի տեսություն, կապն այլ տեսությունների հետ:

3. Աշխատանքի սոցիոլոգիան տնտեսագիտության և սոցիոլոգիայի համատեքստում:  
4. Աշխատանքի սոցիոլոգիայի զարգացումը ապահովվող գործոնները: 5. Աշխատանքի սոցիոլոգիայի կայացման պատմությունը:

**Թեմա 2. Աշխատողի նկատմամբ վերաբերմունքի պատմական փոփոխություն:**

1. «Աշխատանքային ռեսուրս»-ից «մարդկային գործոն»-ի անցումը: 2. Գիտելիքի կարևորումը տնտեսության զարգացման մեջ. աշխատողի գնահատման փոփոխություն: 3. Մարդկային գործոնի բազմաչափությունը. Տնտեսական մարդ: Տեխնոլոգիական մարդ: Սոցիո-հոգեբանական մարդ: Սոցիո-քաղաքական մարդ: Կենսաբանական մարդ: 4. Ստախանովյան շարժում. Ամերիկյան և նախկին ԽՍՀՄ-յան մոտեցումների համադրում: 5. Մարդկային ուժի փոխարինումը տեխնիկայով: Տեխնոլոգիական հագեցվածություն: Աշխատուժի գնահատումը ըստ մասնագիտական և հոգեբանական առանձնահատկությունների:

**Թեմա 3. Աշխատանքային պրոցեսի ուսումնասիրման**

**առանձնահատկությունները:** 1. Աշխատանքային գործընթացի սոցիալական, հոգեբանական և տնտեսական կողմերը: 2. Աշխատանքային կոլեկտիվի համախմբվածության կարևորումը լավ արդյունք ստանալու գործում: Մեյոյի հոտորնյան հետազոտությունների ներդրումը աշխատանքային կոլեկտիվի ուսումնասիրման գործում: Գիտափորձի կիրառելիությունը աշխատանքային կոլեկտիվի ուսումնասիրման մեջ: Թեստավորման արդի ձևերը: Սոցիոհոգեբանական անհրաժեշտ նթնդրոտի ապահովման եղանակները: 3. Դեկավարման ոճի պարզաբանման ձևերը և դրանց ուղղակի և անուղղակի ազդեցությունը աշխատանքային պրոցեսի վրա:

**Թեմա 4. Աշխատանքային շուկա:** 1. Աշխատաշուկայի սուբյեկտները. գործատու, աշխատող, գործազուրկ: 2. Կրթական և տնտեսական համակարգերի երկխոսության անհրաժեշտությունը աշխատաշուկայում: Վերջինիս բացակայության ապակառուցողական դրսևորումները: 3. Ժամանակակից աշխատաշուկայի պահանջները. որակյալ մասնագետի հագեցվածության խնդիրը: Գիտական գիտելիքի արժևորում: Ֆիզիկական ուժի անհրաժեշտության կորուստ. մարդկային ուժի փոխարինումը տեխնիկայով:

**Թեմա 5. Աշխատանքային հարաբերությունների կարգավորման մոդելներ:** 1.

Դասական մոդելներ. Ամերիկյան և ճապոնական մոդելներ, դրանց նմանություններն ու տարբերությունները, առանձնահատկությունները: 2. Աշխատանքային

հարաբերությունների կարգավորումն ըստ ինֆորմացիոն հոսքերի: Միակողմանի, բազմաստիճան, շրջապտուտային կարգավորման ձևեր:

**Թեմա 6. Կազմակերպությունների կառավարման եղանակները: 1.**

Կազմակերպությունների կայացումը: Կազմակերպությունների հիմնական ձևերը: 2. Բյուրոկրատական կազմակերպություն: Բյուրոկրատական կազմակերպության դրական և բացասական կողմերը: Բյուրոկրատական «աբսուրդ»: 3. Ադիոկրատական կազմակերպություն, առանձնահատկությունները:

**Թեմա 7. Սոցիոլոգիական հետազոտությունների դերը աշխատանքային պրոցեսի արդյունավետ կազմակերպման գործում: 1.**

Սոցիոլոգիական հետազոտությունների ընթացակարգը: 2. Սոցիոլոգիական հետազոտության հիմնական մեթոդներ. Հարցում, դիտում, փաստաթղթերի վերլուծություն, գիտափորձ: 3. Գնահատող հետազոտությունների կիրառելիությունը աշխատանքային պրոցեսում:

**Մ/բ-1132 Սոցիալ-մանկավարժական մոդելներ` 4 կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, գործնական` 32 ժամ, շաբաթական 3,5 ժամ**

**7-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիալական մանկավարժության խորհրդատվության մեջ կիրառվող գործնական մոդելներին, և դրանց կիրառման առանձնահատկություններին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա խորհրդառուների հետ իրականացվող աշխատանքի հնարավոր դժվարությունները, նրանց հետ կիրառվող սոցմանկավարժական խորհրդատվության մոդելները:
- կկարողանա ճիշտ ընտրել իրեն դիմած խորհրդառուի հետ աշխատելու մոդելը
- կտիրապետի սոց.մանկավարժական խնդիրների ախտորոշման մեթոդներին և լուծման մոդելներին:

### ***Բովանդակությունը.***

***Թեմա1*** «Միջամտություն ճգնաժամային իրավիճակում» մոդելը սոցմանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա2*** «Խնդրի վրա կենտրոնացում» մոդելը սոցմանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա 3*** Հոգեվերլուծական մոտեցումը սոցմանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա4*** Ճանաչողական-վարքաբանական մոտեցումը սոցմանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա 5*** Համակարգային - միջավայրին մոդելը սոցմանկավարժական խորհրդատվության մեջ: ***Թեմա 6*** Հունանիստական և էքզիստենցիալ մոդելների շարքը:

***Մ /բ-1133 Մոդելավորումը որպես գիտական հետազոտության մեթոդ\_ 4 կրեդիտ  
Դասախոսություն` 24 ժամ, գործնական` 32 ժամ, շաբաթական 3,5 ժամ  
7-րդ կիսամյակ, քննություն***

### ***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել մոդելավորման գիտահետազոտական նշանակությանը:

### ***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- իրական օբյեկտի հետազոտման մոդելների նշանակությունների մասին,
- «մոդելավորում», «մոդել» հասկացությունները,
- մոդելավորման մեթոդաբանական հիմքը,
- մոդելավորման տեսակները,
- մոդելավորումը և համակարգային մոտեցումը,
- մոդելավորման կապը մյուս գիտաճանաչողական մեթոդների հետ,
- մոդելավորումը տեխնոլոգիական շրջափուլում,
- մոդելավորողը որպես օբյեկտի ճանաչման սուբյեկտ:

կկարողանա.

- պատկերացում կազմել մոդելավորման, մոդելների տեսակների մասին,



- արժևորել մոդելավորման դերը օբյեկտի մասին նոր գիտելիքներ ձեռք բերելու գործում,
- կառուցել հետազոտական մոդելներ:

կտիրապետի.

- մոդելավորման գործընթացին:

### ***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** «Մոդելավորում», «մոդել» հասկացությունները: **Թեմա 2.** Պատմական ակնարկ մոդելավորման մեթոդի մասին: **Թեմա 3.** Մոդելավորման մեթոդաբանական հիմքը: **Թեմա 4.** Մոդելների դասակարգումը և մոդելավորման տեսակները Մոդելների դասակարգումը և մոդելավորման տեսակները: **Թեմա 5.** Մոդելավորումը և համակարգային մոտեցումը: **Թեմա 6.** Մոդելավորման կապը մյուս գիտաճանաչողական մեթոդների հետ: **Թեմա 7.** Մոդելավորումը տեխնոլոգիական շրջափուլում: **Թեմա 8.** Մոդելավորողը որպես օբյեկտի ճանաչման սուբյեկտ:

### **Հ/Բ -0311 Անձի հոգեբանություն -4 կրեդիտ**

**Դասախոսություն - 24 ժամ, գործնական - 32 ժամ շաբաթական 3,5 ժամ**

**7-րդ կիսամյակ, ստուգարք**

### ***Նպատակը.***

Ուսանողներին զինել գիտելիքներով անձի հիմնախնդիրների, հոգեկանի մեխանիզմների և օրինաչափությունների, հոգեկանի կառուցվածքի, ինացական գործընթացների, մարդու անձնային և անհատական հոգեբանական առանձնահատկությունների մասին:

### ***Կրթական արդյունքները***

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.**

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի անձի հոգեբանական հետազոտության մեթոդներին,

- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
- կկարողանա վերլուծության ենթարկել անձի զարգացման վերաբերյալ տեսությունները:
- կհիմանա անձի ուսումնասիրման արդի խնդիրները, կհասկանա կառուցվածքային մոտեցումները, մեթոդաբանության տրամաբանությունը:

### **Բովանդակություն**

**Թեմա 1`** Անձի հոգեբանության առարկան, խնդիրները: Անձի ուսումնասիրման առանձնահատկությունները: **Թեմա 2** Մարդու հիմնախնդիրը աշխարհի փիլիսոփայական պատկերի ներքո: **Թեմա 3`** Անձի հիմնախնդիրը համակարգային մոտեցման տեսանկյունից: **Թեմա 4`** Անձը պատմամշակույթային և գործունեության տեսության ներքո: **Թեմա 5`** <<Համակարգ-գործունեություն>>մոտեցման սկզբունքները անձի հոգեբանության ուսումնասիրման համատեքստում: **Թեմա 6`** Անձի ձրավորումը և սոցիալականացումը: Անձի զարգացման շարժիչ ուժերը և պայմանները: **Թեմա 7`** Մարդը որպես անհատ, կենսագենետիկ ուղղությունը հոգեբանության մեջ: **Թեմա 8`** Մարդը որպես անձ, սոցիոգենետիկ ուղղությունը հոգեբանության մեջ: **Թեմա 9`** Մարդը որպես անհատականություն, պեսոգենետիկ ուղղությունը անձի հոգեբանության մեջ: **Թեմա 10`** Պահանջմունքներ և դրդապատճառներ **Թեմա 11`** Ինքնագիտակցության հիմնախնդիրը: <<Ես>> կոնցեպցիա: **Թեմա 12`** Անձը և նրա կենսատարածքը, անձը որպես սեփական կյանքի սցենարի հեղինակ: **Թեմա 13`** Անձի սուբյեկտային մոտեցումը: Հոգեբանական կանխարգելիչ օգնություն անձին: **Թեմա 14`** Անձնային հատկությունների ձևավորումը: Անձ և շփում:

***Յ/բ-0328 - Հատուկ հոգեբանություն – 4 կրեդիտ***

***Դասախոսություն – 24, գործնական -32, շաբաթական 3,5 ժամ***

***7-րդ կիսամյակ, ստուգարք***

**Նպատակը.**

Ուսանողներին զինել գիտելիքներով երեխայի զարգացման մեջ տեղ գտած շեղումների մեխանիզմների և օրինաչափությունների, դինամիկայի, հոգեբանական առանձնահատկությունների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա.

• Հատուկ հոգեբանության սահմանումը, առարկան, խնդիրները, հիմնական մեթոդները:

• Հատուկ հոգեբանության կողմից լուծվող հիմնական խնդիրները:

• Հատուկ հոգեբանության դերը հասարակական զարգացման և մանկավարժական գործունեության ոլորտում:

• Հատուկ հոգեբանության ճյուղերը:

• Ջանազան խախտումներով անձանց իմացական ոլորտի առանձնահատկությունները:

• Ջանազան խախտումներով անձանց հուզականային ոլորտի առանձնահատկությունները:

• Ջանազան խախտումներով անձանց գործունեության առանձնահատկությունները:

**Քոլանդակությունը.**

**Թեմա 1.** Հատուկ հոգեբանությունը որպես գիտության և պրակտիկայի ինքնուրույն ճյուղ: **Թեմա 2.** Ստավոր հետամնաց երեխաների հոգեբանություն՝ օլիգոֆրենոհոգեբանություն: **Թեմա 3.** Հոգեկան զարգացման հապաղում՝ ՀԶՀ: **Թեմա 4.** Լսողության խախտումներով անձանց հոգեբանություն՝ սուրդոհոգեբանություն: **Թեմա 5.** Տեսողության խախտումներով անձանց հոգեբանություն՝ տիֆլոհոգեբանություն: **Թեմա 6.** Խոսքի խանգարումներով երեխաների հոգեբանություն՝ լոգոհոգեբանություն: **Թեմա 7.** Վաղ մանկական աուտիզմի ախտանիշով երեխաների հոգեբանությունը (ՎՄԱ): **Թեմա 8.** Ջարգացման բարդ խախտումներով երեխաների հոգեբանությունը՝ ՋԲԽ: **Թեմա 9.** Հատուկ հոգեբանության կիրառական խնդիրները:

## 1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս

**Մ/բ- 1134 Վերադաստիարակության հիմունքներ` 3 կրեդիտ**  
**Դասախոսություն` 24ժամ, սեմինար` 24ժամ, շաբաթական 3 ժամ**  
**4-րդ կիսամյակ, ստուգարք**

### **Նպատակը.**

• Վերլուծել դաստիարակության, ինքնադաստիարակության և վերադաստիարակության խնդրի հետ կապված հոգեբանամանկավարժական գրականությունը, բնութագրել դաստիարակության, ինքնադաստիարակության և վերադաստիարակության էությունը, դրանց փոխկապակցվածությունը::

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կսովորի բացահայտել և վերլուծել անձնավորության զարգացման և վերադաստիարակության խնդիրները,
- կկարողանա մշակել «նորմ» հասկացությունը դաստիարակության մեջ և կիրառել այն վերադաստիարակության տեսակներում, ձևերում,
- կկարողանա կազմել վերադաստիարակության անհատական ծրագիր,
- կիմանա վերադաստիարակության մանկավարժական հիմունքները,
- կկարողանա գործնականում կիրառել վերադաստիարակության հատուկ սկզբունքները:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Դաստիարակության, ինքնադաստիարակության, վերադաստիարակության էությունը Հասկացողություն դաստիարակության, ինքնադաստիարակության նրանց իմաստների, էության մասին: Վերադաստիարակության էությունը և սոցիալական նշանակությունը: **Թեմա 2.** «Վերադաստիարակություն» հասկացությանը պատկանող երեխաների, դեռահասների կարգը:

Վերադաստիարակության գործառույթները /ախտորոշում, խորհրդատվություն, շտկում/, իրականացման փուլերը: **Թեմա 3.** Անձի ինքնավերլուծում և ինքնագնահատում, ներքին կոնֆլիկտի հաղթահարում: Դրական պատկերացումների մասին հասկացությունների, հայացքների, համոզմունքների ձևավորում: **Թեմա 4.** Դեսահասի դրական վարքի փորձի կուտակում: Դեռահասի ակտիվ մասնակցություն համակարգված գործունեության տարբեր տեսակներում: **Թեմա 5.** Վերադաստիարակության անհատական ծրագրի կազմում:

**Թեմա 6.** **Վերադաստիարակության մանկավարժական հիմունքները** Անձնակողմնորոշիչ դաստիարակության էությունը /ճանաչել, հասկանալ, ընդունել/. ավտորիտար դաստիարակությունը վերադաստիարակության ակունքն է, մարդասիրական դաստիարակությունը՝ դաստիարակության հիմքը: **Թեմա 7.** Վերադաստիարակության անհրաժեշտ պայմանները /մանկավարժական ազդեցության միասնություն, մանկական կոլեկտիվի համախմբվածության առկայություն, դեռահասի ինքնահաստատման համար դժվար գործունեության առկայություն, մանկավարժական լավատեսություն, դրական զարգացման նախագծման առկայություն, մանկավարժների և ծնողների ձգտում/:

**Թեմա 8.** Վերադաստիարակության բաղադրիչ տարրերը /գիտական մանկավարժական մտածողություն, մանկավարժական խորագիտություն և հոգեբանական նրբանկատություն, կազմակերպչական ընդունակություններ, դաստիարակության մարդասիրական ոճ/: **Թեմա 9.** **Վերադաստիարակության հատուկ սկզբունքները.** Հասկացողություն վերադաստիարակության հատուկ սկզբունքների մասին /համոզման և պարտադրանքի զուգորդում, օբյեկտիվ վերաբերմունք, մեծահասակների և հասակակիցների մարդասիրական վերաբերմունք, մանկավարժական ազդեցություն, կենտրոնացում դրական որակների ձևավորման վրա/: **Թեմա 10.** Մանկավարժական տեսության և պրակտիկայի համակարգային ուսումնասիրություն:

**Մ/ք- 1134 Վերադաստիարակության հիմունքներ՝ 3 կրեդիտ**

**Դասախոսություն` 24ժամ, սեմինար` 24ժամ, շաբաթական 3 ժամ**  
**5-րդ կիսամյակ, քննություն**

**Նպատակը.**

- Բնութագրել և կարողանալ կառուցել վերադաստիարակության իրականացման փուլերը,
- կիրառել վերադաստիարակության հատուկ մեթոդները,
- ուսումնասիրել վերադաստիարակչական աշխատանքի համակարգը մանկավարժորեն բարձիթողի երեխաների, դեռահասների հետ :

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա վերադաստիարակության գործընթացի հատուկ մեթոդները, փուլերը,
2. կկարողանա ներկայացնել վերադաստիարակության իրականացման փուլերը, հատուկ մեթոդները` ցույց տալով դեռահասին կոլեկտիվ ընդգրկվելու ուղիները,
3. կկարողանա մշակել «նորմ» հասկացությունը դաստիարակության մեջ և կիրառել այն վերադաստիարակության մեթոդներում,
4. կկարողանա ուսումնասիրել և վերլուծել սանի անձնային որակները` որոշելով վերադաստիարակության անհրաժեշտության պատճառները,
5. կկարողանա ճիշտ կազմակերպել վերադաստիարակության յուրաքանչյուր փուլը` առաջնորդվելով գիտական սկզբունքներով,
6. կկարողանա ապացուցել վերադաստիարակության անհրաժեշտությունը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Վերադաստիարակության հատուկ մեթոդները: Վերադաստիարակության մեթոդների ընտրություն «Վերահամոզում» և «վերուսուցում» մեթոդները: **Թեմա 2.**

Բնավորության «վերակառուցումը»՝ որպես դեռահասի ներաշխարհը վերափոխող մեթոդ: «Վերափոխում»-ը՝ որպես սանի հայացքների վերակողմնորոշման մեթոդ: **Թեմա 3.** Ա.Ս.Մակարենկոյի «հետաձգված գրույց» մեթոդի էությունը և «պայթյունի» մեթոդը որպես բացասական գծի վերացման միջոց: Սուբյեկտիվ-պրագմատիկ մեթոդը՝ որպես վերադաստիարակության հատուկ մեթոդ: **Թեմա 4.** Բնական հետևանքների մեթոդը՝ որպես վերադաստիարակության հատուկ մեթոդ: Հատուցման մեթոդի էությունը: **Թեմա 5.** Աշխատանքային մեթոդը՝ որպես վերադաստիարակության կարևոր միջոց: **Թեմա 6. Վերադաստիարակության հիմնական ուղղությունները, պայմանները:** Սովորողի հուզական վիճակի կարևորությունը՝ որպես բնավորության որոշող: Վերադաստիարակության կարիք ունեցող երեխաների դասակարգում:

**Թեմա 7.-** Վերադաստիարակության կարիք ունեցող երեխաների վարքագծային դրսևորման ձևերն ու մակարդակները: Ա.Ս.Մակարենկոյի մանկավարժական փորձի կիրառումը ոչ լիարժեք ընտանիքների երեխաների հետ աշխատելու ժամանակ:

**Թեմա 8.-** Նոր միջավայրի ստեղծումը՝ որպես վերադաստիարակության մանկավարժական պայման: Դասարանի վրա հենվելը՝ որպես վերադաստիարակության գործընթացի առաջատար պայման: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես վերադաստիարակության միջոց: **Թեմա 9.**

**Վերադաստիարակչական աշխատանքի համակարգը մանկավարժորեն բարձիթողի երեխաների, դեռահասների հետ:** Մանկավարժորեն բարձիթողի սովորողների մանկավարժական ղեկավարումը վերադաստիարակության համակարգում՝ որպես գլխավոր օղակ: Վերադաստիարակչական աշխատանքի կազմակերպման փուլերը մանկավարժորեն բարձիթողի երեխաների, դեռահասների հետ: **Թեմա 10.**

Աշխատանք՝ մանկավարժորեն բարձիթողի երեխաների ընտանիքների հետ: Օրենքի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի և օրինական վարքի հմտությունների դաստիարակությունը: **Թեմա 11.** Մանկավարժորեն բարձիթողի սովորողների ուսումնասիրման սկզբունքներն և մեթոդները: Շփման դժվարությունները մանկավարժորեն բարձիթողի դեռահասների հետ: **Թեմա 12.** Քրեակատարողական

հաստատություններում անչափահաս իրավախատների վերադաստիարակչական աշխատանքները: Անձի մանկավարժորեն բարձիթողության նշանների բացահայտումն ախտորոշման մեթոդիկաներ:

**Մ/բ-1135. Սոցիալ-մանկավարժական հետազոտման մեթոդների պրակտիկում - 5 կրեդիտ**

**Դասախոսություն - 32 ժամ, գործնական – 32 ժամ, (շաբաթական - 4 ժամ) 6-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Սովորողին տալ գիտելիքներ սոցիալական մանկավարժության հետազոտական մեթոդների վերաբերյալ, նրա մոտ ձևավորել հետազոտությունների տարբեր մեթոդների կիրառման հմտություններ:

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

**1. Գիտենա՝**

Սոցիալական մանկավարժությունում հետազոտական գործընթացի կիրառման անհրաժեշտության ներկայացում.

Սոցիալական մանկավարժությունում տեղեկատվության ստացման հիմնական մեթոդները

**2. Կարողանա՝**

Կիրառել սոցիալական մանկավարժությունում տեղեկատվության ստացման տարբեր մեթոդները:

Ներկայացնել.

- ուսումնասիրության մեթոդը և նրա տեսակները,
- հարցման մեթոդը, նրա տեսակները,
- դիտարկման մեթոդը և նրա տեսակները,
- գիտափորձն իր տեսակներով:



### **3. Տիրապետի՝**

- վիճակագրական տեղեկատվությանը,
- հարցման մեթոդիկաներին,
- հարցազրույց և գրանցել արդյունքներին,
- սոցիոմետրիկական հարցմանը,
- փորձագիտական հարցմանը:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալ-մանկավարժության էմպիրիկ մեթոդները:

1.1 Դիտումը՝ որպես սոցիալ- մանկավարժական տեղեկատվության կուտակման մեթոդ

1.2. Զրույցը՝ որպես էմպիրիկ մեթոդ

1.3. Հարցման մեթոդներ

1.4. Սոցիալ-մանկավարժական գիտամեթոդական գրականության, արխիվային նյութերի ուսումնասիրման մեթոդ

1.5. Գործունեության արդյունքների ուսումնասիրման և սոցիալ-մանկավարժական առաջավոր փորձի ընդհանրացման մեթոդներ

1.6. Գիտափորձի մեթոդը սոցիալ-մանկավարժական հետազոտություններում.

**Թեմա 2.** Սոցիալ-մանկավարժական տեսական և պատմահամեմատական մեթոդները Տեսական ճանաչողության էությունը և հիմնական ձևերը

Սոցիալ-մանկավարժական տեսական մեթոդները..

Սոցիալ-մանկավարժական պատմահամեմատական մեթոդները

**Թեմա 3.:** Սոցիալ-մանկավարժական հետազոտության անցկացման մեթոդիկան

Մանկավարժական հետազոտության մեթոդիկայի բաղադրատարրերը և իրականացման փուլերը

Հետազոտության արդյունքների մեկնաբանումը, փորձաքննությունն ու ներդնումը

Գիտական հետազոտության արդյունքների ձևակերպումը

Ուսանողների ուսամնահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջները.

Հետազոտողի մանկավարժական վարպետությանը և մշակույթը

**Մ /բ-1136 Սոցիալ-մանկավարժական գործունեության ուղղություններ\_4**  
**կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, սեմինար` 32 ժամ, շաբաթական 3,5 ժամ**  
**8-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել սոց.մանկավարժական գործունեության ուղղություններին և նախապատրաստել այդ բազմաշերտ աշխատանքին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա.

- սոցիալ-մանկավարժական գործունեության ուղղությունները,
- ապահարմարվող երեխաների բացահայտումը և սոց.մանկավարժական աշխատանքների կազմակերպումը,
- երեխայի իրավունքի սոցիալ-մանկավարժական պաշտպանության ապահովումը,
- սոցիալ-մանկավարժական աջակցում երեխայի անձի ձևավորմանը,
- սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը,
- սոցիալ-մանկավարժական կանխարգելումը, շտկումը և վերականգնումը,
- սոց.մանկավարժական աշխատանքը ընտանիքի հետ,
- սոց.մանկավարժի կազմակերպական-մեթոդական գործունեությունը:

կկարողանա.

- պատկերացում կազմել սոցիալական մանկավարժության գործունեության բոլոր հնարավոր ուղղությունների մասին,
- իմաստավորել, որպես ապագա մասնագետ, սոց.մանկավարժական գործունեության յուրաքանչյուր ուղղությամբ տարվող աշխատանքները,
- ծրագրել, պլանավորել իր աշխատանքները համապատասխան ուղղությամբ,
- արժևորել սոց.մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաները սոց.մանկավարժական գործունեության յուրաքանչյուր ուղղությամբ աշխատելիս:

կտիրապետի.

- սոցիալ-մանկավարժական գործունեության տարբեր ուղղությունների աշխատանքների նախագծմանը:

***Քոլանդակությունը.***

**Թեմա 1.** Սոցիալ-մանկավարժական գործունեության ուղղությունները: **Թեմա 2.** Ապահարմարվող երեխաների բացահայտումը և սոց.մանկավարժական աշխատանքների կազմակերպումը: **Թեմա 3.** Երեխայի իրավունքի սոցիալ-մանկավարժական պաշտպանության ապահովում: **Թեմա 4.** Սոցիալ-մանկավարժական աջակցում երեխայի անձի ձևավորմանը: **Թեմա 5.** Սոցիալ-մանկավարժական խորհրդատվություն: **Թեմա 6.** Սոցիալ-մանկավարժական կանխարգելում, շտկում և վերականգնում: **Թեմա 7.** Սոց.մանկավարժական աշխատանք ընտանիքի հետ: **Թեմա 8.** Սոց.մանկավարժի կազմակերպական-մեթոդական գործունեություն: **Թեմա 9.** Սոց.մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաները:

**Յ/ք Միջազգային սոցիալական աշխատանք 5 կրեդիտ**

**Դասախոսություն` 32 ժամ, սեմինար` 36 ժամ շաբաթական 4,5 ժամ**

**8-րդ կիսամյակ, քննություն**

**Մ/ք - 1123 Ներառական կրթության կազմակերպում 4 կրեդիտ**

**Դասախոսություն` 24 ժամ, գործնական` 32 ժամ շաբաթական 3,5 ժամ**

**5-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը***

Ուսանողների համար բացահայտել ներառական կրթության էությունը, գաղափարախոսությունը, քաղաքականությունը, մեթոդաբանությունն ու բովանդակությունը, ուսանողներին փոխանցել ներառական կրթության տեսագործնական առաջավոր փորձը, ուսուցանել ներառական կրթության կազմակերպման օրենսդրական և մանկավարժական հիմունքները, ուսանողներին նախապատրաստել աշխատանքի նեառական դպրոցներում, լուսաբանել

ներառական կրթության դրվածքը, համակարգի զարգացումներն ու զարգացման միտումները, հանրահռչակման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

### **Կրթական արդյունքներ**

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա ներառական կրթության գաղափարախոսությունը, քաղաքականությունը, հայեցակարգը, բովանդակությունը, միջազգային փորձը և սկզբունքները, ներառական կրթության որակի ապահովման և արդյունավետության բարձրացման ուղիները, միջոցները, ներառական ուսուցման կազմակերպման մեթոդիկաներն ու տեխնոլոգիաները, ներառական կրթության իրավական, օրենսդրական և մանկավարժական հիմունքները:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա պլանավորել, կազմակերպել և իրականացնել մանկավարժական գործընթացը և վերլուծել ծագած հիմնխնդիրները, օգտվել հանրակրթության չափորոշիչից և կազմել ներառական գործընթացի կազմակերպման փաստաթղթեր, դրսևորել մանկավարժական վարպետություն և օգտվել ՀՀ օրենքներից ու նորմատիվ փաստաթղթերից:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի ներառական ուսուցման մեթոդիկաներին և տեխնոլոգիաներին, մանկավարժական աջակցության ձևերին, ներառական ուսուցում իրականացնող դպրոցների և ընտանիքների համագործակցության ձևերին, աշակերտների կրթական կարիքների, նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման գործիքակազմին:

### **Բովանդակություն**

**Թեմա 1.** Ներածություն: **Թեմա2.** Ներառական կրթության նպատակահարմարությունը: **Թեմա 3.** Ներառական քաղաքականության և պրակտիկայի զարգացման կառավարումը: **Թեմա4.** Մասնագիտական զարգացման նշանակությունը ներառական կրթության համար: **Թեմա5.** Ուսուցման գնահատումը որպես որակյալ կրթության բաղկացուցիչ: **Թեմա6.** Աջակցության կազմակերպում ներառական համակարգերում: **Թեմա7.** Ընտանիքը և համայնքը որպես ներառական կրթության զարգացման ակտիվ մասնակիցներ: **Թեմա8.** Ներառական ուսուցման

պլանի զարգացում: **Ձեմա9.** Ֆինանսների կառավարում ներառական համակարգին աջակցելու նպատակով: **Ձեմա10.** Ուսուցման գործընթացում անցումային փուլերի կառավարում: **Ձեմա11.** Դպրոցում կատարվող փոփոխությունների նախաձեռնում և աջակցում: **Ձեմա12.** Ներառական ուսուցմամբ կրթության հիմնախնդիրները ՀՀ-ում:

**Յ/բ-0327 Հոգեբանամանկավարժական ախտորոշում` 5կրեդիտ**  
**Դասախոսություն` 32 ժամ, սեմինար` 32 ժամ, շաբաթական 4 ժամ**  
**6-րդ կիսամյակ, քննություն**

**Նպատակը**

Ուսանողներին ծանոթացնել հոգեախտորոշման առարկայի ծագմանն ու զարգացման պատմությանը, զինել գիտելիքներով հոգեախտորոշման հիմնախնդիրների, հիմնական հասկացությունների, մեթոդների, մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջների վերաբերյալ, սովորեցնել նրանց իրականացնել տարբեր տարիքի մարդկանց հոգեախտորոշում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա հոգեախտորոշման հիմնական հասկացությունները, մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջները,
2. կիմանա անձի, ինտելեկտի, կրեատիվության, ընդունակությունների ախտորոշման եղանակները,
3. կկարողանա իրականացնել տարբեր տարիքի երեխաների և մեծահասակների, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների ախտորոշում,

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Հոգեախտորոշման ծագումն ու զարգացումը: **Թեմա 2.** Հոգեախտորոշման առարկան, ճյուղերը, կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 3.** Հոգեախտորոշման նպատակը, գործընթացը: **Թեմա 4.** Հոգեախտորոշիչ տեխնոլոգիայի սկզբունքը: Տվյալների հիմնական տեսակները: **Թեմա 5.** Մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջները: **Թեմա 6.** Հոգեախտորոշման հոգեբանական հիմքերը՝ թեստերի կառուցման հիմնական փուլերը: **Թեմա 7.** Հոգեախտորոշման մեթոդները: **Թեմա 8.** Անձի ախտորոշման պրոյեկտիվ մեթոդիկաներ: **Թեմա 9.** Ինտելեկտի ախտորոշում, ինտելեկտի թեստեր: Ինտելեկտի կախվածությունը ժառանգական և սոցիալական գործոններից: **Թեմա 10.** Կրեատիվության և ընդունակությունների ախտորոշում: **Թեմա 11.** Տարբեր տարիքի երեխաների հոգեախտորոշման առանձնահատկություններն ու մեթոդները: **Թեմա 12.** Մեծահասակների և միջանձնային հարաբերությունների հոգեախտորոշում: **Թեմա 13.** Հոգեկան վիճակների ախտորոշում: **Թեմա 14.** Հոգեկան վիճակների կարգավորման մեթոդներ: **Թեմա 15.** Հոգեբանի աշխատանքի բարոյաէթիկական խնդիրները: Հոգեբանի իրավունքները, աշխատանքի կազմակերպումը, սկզբունքների և կանոնների բովանդակությունը:

**Յ/բ-0331 Հոգեբանական խորհրդատվություն և հոգեշտկման հիմունքներ՝ 5 կրեդիտ**  
**Դասախոսություն՝ 32 ժամ, սեմինար - 32 ժամ, շաբաթական 4 ժամ**  
**6-րդ կիսամյակ, քննություն**

***Նպատակը.***

- ուսանողների մոտ ստեղծել հոգեբանական խորհրդատվության ընթացքի, բովանդակության, ուղղությունների և ձևերի մասին ամբողջական պատկերացում.
- ապահովել ուսուցման տեսական և գործնական դասընթացների սերտ կապը.
- նպաստել ուսանողների մոտ հոգեբանական խորհրդատվության հմտությունների ձևավորմանը.

- պայմաններ ստեղծել ամեն մի ուսանողի մոտ խորհրդատվության իր մասնագիտական ոճի ձևավորման, հնարավորությունների գիտակցման և մասնագիտական աճի համար:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

#### **Կիմանա՝**

- հոգեբանական խորհրդատվություն առարկան, հիմնական մեթոդները, տեխնիկաները,
- հոգեբանական խորհրդատվություն կողմից լուծվող հիմնական խնդիրները,
- հոգեբանական խորհրդատվության դերը հասարակական զարգացման և մանկավարժական գործունեության ոլորտում,
- - հոգեշտկման հիմնական տեսական ուղղությունները և տեխնիկաները,
- - հոգեշտկողական աշխատանքի սկզբունքները,
- - գործնական հոգեշտկման հիմնական մեթոդները,
- - հոգեշտկման ձևերը,
- - հոգեշտկողական ծրագրերի կազմման առանձնահատկությունները:

#### **Կկարողանա**

- - մշակել հոգեշտկողական ծրագիր ելնելով ծրագրերի կազմման հիմնական պահանջներից, հոգեշտկման սկզբունքներից՝ հաշվի առնելով սովորողների պրոբլեմները,
- - կիրառել հիմնական մեթոդները, պրակտիկ հոգեշտկման ձևերը հոգեբանի գործունեության ընթացքում:
- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կիրառել հոգեբանական խորհրդատվության մեթոդները,
- կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

#### **Կտիրապետի**

- ✓ հոգեբանական խորհրդատվություն առարկային, մեթոդներին և խնդիրներին:
- ✓ խորհրդատուի բարոյական սկզբունքներին

- ✓ խորհրդատուին անհրաժեշտ անձնական հատկությունների և մասնագիտական հմտությունների
- ✓ հոգեբանական խորհրդատվության ժամանակակից ուղղություններում ընդունված անձի կառուցվածքի վերաբերյալ գիտելիքների , աշխատանքի ձևերի, խորհրդատվություն վարելու ժամանակ յուրաքանչյուր ներկայացված ուղղվածության առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում;
- ✓ աշխատանքի գործնական տեխնոլոգիաների, որոնք կաջակցեն ուսանողի մասնագիտական մակարդակի բարձրացմանը և իր գործունեության ոլորտի լայնացմանը;
- ✓ հոգեբանության յուրաքանչյուր ուղղությանը հատուկ տեսական մոտեցումներին;
- ✓ ամեն մի տեսական մոտեցման սահմաններում օգտագործվող աշխատանքային տեխնիկաներին

***Բովանդակությունը***

**Թեմա 1** Գաղափար հոգեբանական խնդրի և հոգեբանական օգնության մասին

**Թեմա 2** Հոգեբանական խորհրդատվության առարկան և նպատակները

**Թեմա 3** Խորհրդատվության տեսական մոտեցումները

**Թեմա 4** Հոգեբանական խորհրդատվության հիմնական ուղղությունները և ձևերը

**Թեմա 5** Խորհրդատվության տեսակները և սկզբունքները:

**Թեմա 6** Անհատական և խմբային խորհրդատվություն

**Թեմա 7** Խորհրդատվության բարոյական և իրավական ասպեկտները

**Թեմա 8** Խորհրդատվության ընթացքը և բովանդակությունը

**Թեմա 9** Խորհրդատուի անձը և արդյունավետությունը որոշող հատկությունները

**Թեմա 10** Հոգեշտկումը որպես գործնական հոգեբանության բնագավառ

**Թեմա 11** Հոգեշտկման նպատակը, խնդիրները, բաղադրամասերը

**Թեմա 12** Հոգեշտկման ձևերն ու սկզբունքները

**Թեմա 13** Հոգեշտկման հիմնական տեխնիկաները:

**Թեմա 14** Հոգեախտորոշման կիրառումը հոգեշտկման ընթացքում:



**Թեմա 15** Հոգեշտկող միջոցառումներ իրականացնող հոգեբանին ներկայացվող հիմնական պահանջները:

**Թեմա 16** Շտկողական ծրագրերի կազմման առանձնահատկությունները:

**Թեմա 17** Հոգեշտկման հիմնական ուղղությունները

**Թեմա 18** Հոգեշտկման հիմնական մեթոդները և դասակարգումը

**Մ/բ-0254 Հոգեբանամանկավարժական մարդաբանություն` 3 կրեդիտ**  
**Դասախոսություն` 24 ժամ, սեմինար` 16 ժամ, շաբաթական 2 ժամ**  
**1-ին կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

Ուսանողներին ծանոթացնել մարդու զարգացման անատոմո-ֆիզիոլոգիական, հոգեբանա-մանկավարժական օրինաչափություններին, ամրապնդել նրանց հումանիստական մանկավարժական մտահորիզոնը, օգնել մասնագիտական աճին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները.

- կկարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետեն մարդաբանական և մանկավարժական հետազոտության մեթոդներին,
- կկարողանան դաստիարակչական տարբեր իրավիճակներում գտնել համապատասխան դաստիարակության ուղիներ` հաշվի առնելով մարդու բնույթի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները,
- կկարողանան գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ, նրանց մոտ կձևավորվի քննադատական մտածողություն:

***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** Հոգեբանա-մանկավարժական մարդաբանության ներածություն: **Թեմա 2.** Մարդը որպես հոգեբանա-մանկավարժական մարդաբանության առարկա: **Թեմա 3.** Մարդու զարգացումը ժամանակի և տարածության մեջ: Օնտոգենեզի տարբեր

հայեցակարգերը: **Թեմա 4.** Մշակույթը որպես մարդաբանական գործընթաց, երևույթ: **Թեմա 5.** Դաստիարակությունը որպես մարդկային գործունեություն, գործընթաց: **Թեմա 6** Կ. Դ. Ուշինսկու մարդաբանական հայացքները:

**Մ/ք 0256. Մանկ. հետազոտ. մեթոդոլոգիա և մեթոդներ – 5 կրեդիտ**  
**Դասախոսություն –32 ժամ, սեմինար 32 ժամ շաբաթական 4 ժամ**  
**7-րդ կիսամյակ, քննություն**

### **Նպատակը.**

Ուսանողներին պատկերացում տալ մեթոդաբանության, նրա մակարդակների, աշխարհաճանաչման համընդհանուր մեթոդների, օրենքների և կատեգորիաների մասին:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կունենա մանկավարժական հետազոտություն կատարելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ,
- հաղորդակից կդառնա գիտական հետազոտությունների արդի մեթոդներին,
- կապահովի դրանց տիրապետումը:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Մեթոդոլոգիան և մանկավարժությունը: **Թեմա 2.** Հետազոտության պրոբլեմի ընտրությունը և հիմնավորումը: **Թեմա 3.** Մանկավարժական հետազոտության հիմնական փուլերը: **Թեմա 4.** Մանկավարժի մեթոդաբանական մշակույթը: **Թեմա 5.** Դիալեկտիկայի օրենքների դրսևորումը մանկավարժության մեջ: **Թեմա 6** Ճանաչողության տեսությունը և ուսուցումը: **Թեմա 7** Բարոյագիտությունը և բարոյական դաստիարակություն **Թեմա 8** Գեղագիտությունը և գեղագիտական դաստիարակություն **Թեմա 9** Մանկավարժական հետազոտության մեթոդները: **Թեմա 10** Սոցիոլոգիական մեթոդների կիրառումը մանկավարժության մեջ **Թեմա 11** Մանկավարժական գիտափորձի տեսությունը և պրակտիկան:

**Մ/բ-0271 Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ` 2 կրեդիտ  
Դասախոսություն` 20 ժամ, գործնական` 16 ժամ շաբաթական 3 ժամ  
8-րդ կիսամյակ, ստուգարք**

***Նպատակը.***

Նախապատրաստել ապագա սոցիալական մանկավարժին օգնելու աշակերտին ճիշտ որոշելու իրենց ապագա մասնագիտությունը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մասնագիտական կողմնորոշման աշխատանքի էությունն ու բովանդակությունը,
- կիմանա սովորողների մասնագիտական կողմնորոշման սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական, հասարակական ծառայությունների հետ համագործակցելու առանձնահատկությունները ,ուղղությունները,
- կկարողանա կազմել տարբեր մասնագիտությունների պրոֆեսիոգրամ,մասնագիտական կողմնորոշման աշխատանքի անհատական ծրագիր,
- կկարողանա կատարել խորհրդատվական աշխատանք մասնագիտության լուսավորության, ադապտացիայի, պիտանելիության,աշխատաշուկայի պահանջարկի մասին,
- կտիրապետի մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին վերաբերող ընդունակությունների, դրդապատճառների բացահայտման մեթոդիկաներին,

***Բովանդակությունը.***

***Թեմա 1.***Մասնագիտության կողմնորոշման գիտական հիմունքները: Մասնագիտական կողմնորոշման համակարգը հանրակրթական դպրոցում: ***Թեմա2.*** Պրոֆեսիոգրամ, մասնագիտական մտադրություն, ռեզերվային մտադրություն: Անձի գործոնը և մասնագիտական կողմնորոշումը: ***Թեմա 3.*** Մասնագիտության ընտրության դրդապատճառները: Հետաքրքրությունները և մասնագիտական կողմնորոշումը:Ընդունակությունները և մասնագիտական կողմնորոշումը:

Խառնվածքը և մասնագիտական կոցմնորոշումը: Բնավորությունը և մասնագիտական կողմնորոշումը: Մասնագիտական պիտանելիություն: **Թեմա 4** Սովորողների մասնագիտական լուսավորությունը: Մասնագիտական լուսավորությունը գիտությունների ուսումնասիրման և աշխատանքային ուսուցման պրոցեսում: Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները և մասնագիտական լուսավորությունը: **Թեմա 5** Սովորողների մասնագիտական կոնսուլտացիան: Մասնագիտական կոնսուլտացիայի խնդիրները, ձևերը և բովանդակությունը դպրոցում: Մասնագիտական կոնսուլտացիայի անցկացման մեթոդիկան: Մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտի անձի ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 6.** Հանրակրթական դպրոցի կապը միջնակարգ մասնագիտական հաստատությունների հետ: Դպրոցը մասնագիտական կողմնորոշման աշխատանքի կենտրոն: **Թեմա 7.** Դպրոցի և բուհի համագործակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքում: **Թեմա 8.** Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքում: **Թեմա 9.** Սովորողների մասնագիտական կողմնորոշման առաջնահերթ խնդիրները հանրակրթական դպրոցի բարեփոխումների ներկա փուլում:

## **V. Այլ բաղադրիչներ**

1. Ուսումնական պրակտիկա 3 կրեդիտ, 6-րդ կիսամյակ
2. Արտադրական պրակտիկա (6+6=12 կրեդիտ), 7-րդ, 8-րդ կիսամյակ
3. Կուրսային աշխատանք (3+3=6 կրեդիտ), 5-րդ, 7-րդ կիսամյակ

### **Ուսումնական պրակտիկա -3կրեդիտ Պրակտիկայի նպատակը՝**

ծանոթացում կրթադաստիարակչական համակարգին,  
սոցիալական հաստատություններին,

լրացուցիչ կրթական համակարգերին :

Ապագա սոցիալական մանկավարժին անհրաժեշտ է ծանոթացնել.

- Ուսումնական հաստատությունների գործունեության հետ՝ դպրոց-ինտերնատներ, մանկատներ, նախկրթական հաստատությաուններ, տարածքային մանկական միավորումներ, ուսումնադաստիարակչական կենտրոններ, հատուկ դպրոցներ,

□ լրացուցիչ կրթական հաստատություններ և ոչ ֆորմալ միավորումները՝ մանկական և պատանեկան մշակույթի տներ, ժամանցի կենտրոններ, երիտասարդ տեխնիկների և բանասերների ակումբներ, այգիներ, ստադիոններ, մանկական, պատանեկան գրադարաններ, թատրոններ և այլն,

- սոցիալական հաստատություններ՝
  - ընտանիքի սոցիալական օգնության, երեխաների, դեռահասների վերականգնման կենտրոններ, որդեգրման և խնամքի կենտրոններ, հոգեբանամանկավարժական կոնսուլտացիայի կենտրոններ և այլն:

### **Պրակտիկայի խնդիրներն են.**

Ծանոթացում տարբեր մանկական և սոցիալական հաստատությունների աշխատանքի տեսակների, ձևերի, նպատակների, բովանդակության հետ:

Մանկական և սոցիալական հաստատությունների տեղի կողմնորոշումն անհատի սոցիալիզացիայի համակարգում, սոցումի մանկավարժեցման մեջ երեխաների բարձիթողության կանխորոշում և նման երեխաների ու դեռահասների վարքագծային շեղումների հայտնաբերման մեխանիզմի ծանոթացում, ընտանիքներին, դպրոցներին բարոյահոգեբանական օգնության ցուցաբերում:

Այն օբյեկտի առանձնահատկությունների բացահայտում, որի հետ աշխատում է այս կամ այն սոցիալական ծառայությունը:

### **Պրակտիկայի բովանդակությունը**

Վերջին տարիներին բոլոր ոլորտներում առկա են տարաբնույթ սոցիալական խնդիրներ, հատկապես աճող սերնդի սոցիալիզացիայի գործընթացում: Պրակտիկայի բովանդակությունը իր մեջ ներառում է.

Ուսանողը պարտավոր է «խնամակալության և հոգեբարձության» հանձնաժողովում ուսումնասիրի.

- պրակտիկայի ընթացքում խորացնել և ամրապնդել մասնագիտական գիտելիքները,
- ձևավորել սոցիալական մանկավարժի մասնագիտական կարողություններն ու հմտությունները,
- կարողանալ համագործակցել մյուս մասնագետների հետ,
- ձգտել ինքնահաստատվելու, ինքնարտահայտվելու համար,

հաստատությունից վերցնել օգտակարն ու հարստացնել մասնագիտական փորձը

## Արտադրական պրակտիկա-6 կրեդիտ

### Պրակտիկայի նպատակը

**Պրակտիկայի նպատակը`** խնամքի և պաշտպանության հաստատությունում սոցիալ-մանկավարժական աշխատանքի սկզբնական փորձերի ինքնուրույն իրականացում:

### Պրակտիկայի խնդիրները`

ուսանողների մոտ ձևավորել վերլուծական-ռեֆլեքսիվ մոտեցում` մանկավարժական գործունեության կազմակերպման նկատմամբ, երեխայի զարգացման սոցիալական միջավայրի դաստիարակչական հնարավորությունների ուսումնասիրում, սոցիալ-մանկավարժական գործունեության որոշ տեսակների ինքնուրույն իրականացում, երեխաների հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի բարոյական և մասնագիտական մոտիվացիայի ձևավորում, մասնակցություն` սոցիալ-մանկավարժական գործունեության կառավարման որոշ գործընթացներին, գիտահետազոտական աշխատանքների թեմաների որոշում և ընտրություն, մասնակցություն փորձարարական աշխատանքներին, ապագա սոցիալական մանկավարժի բարոյական վարքագծի չափորոշիչների ձևավորում, ուսանողների ընդհանուր և մասնագիտական մշակույթի հետագա զարգացում:

### Պրակտիկայի բովանդակությունը

Վերջին տարիներին բոլոր ոլորտներում առկա են տարաբնույթ սոցիալական խնդիրներ, հատկապես աճող սերնդի սոցիալիզացիայի գործընթացում: Պրակտիկայի բովանդակությունը իր մեջ ներառում է.

Ուսանողը պարտավոր է խնամքի և պաշտպանության հաստատությունում

ուսումնասիրի.

հաստատության ավանդույթները, աշխատանքի օբյեկտ ծառայող բնակչության խմբերը, կոլեկտիվի աշխատանքային խնդիրները, աշխատանքի ձևերը և մեթոդները,

բնակչության առանձին խմբերի / շերտերի կամ կատեգորիաների/ հետ տարվող աշխատանքների բովանդակությունը, սոցիալական հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվող տարբեր մասնագետների փոխգործունեությունը,

փոխադարձ հարաբերությունները երեխաների միջև, երեխաների և մեծահասակների միջև, տվյալ թաղամասում բնակվող 1-2 երեխայի և նրանց ընտանիքների անհատական սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, կոնկրետ սոցիալ-մանկավարժական 1-2 խնդիրների լուծմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդիկան,

տվյալ սոցիալ-մանկավարժական հիմնարկության գործունեության ոլորտում գտնվող սոցիումի սոցիալ, մշակութային, տնտեսական, ժողովրդագրական, բնապահպանական առանձնահատկությունները:

Պարտադիր է 1-2 միջոցառումների անցկացումը, անհատական աշխատանքը հատուկ ուշադրություն պահանջող երեխաների և ընտանիքների հետ: Պրակտիկան անցկացվում է համաձայն սոցիալ-մանկավարժական գործունեությունն իրականացնող խնամքի և պաշտպանության հաստատության աշխատանքային պլանների և հաստատության մասնագետների ղեկավարությամբ:

Աղյուսակ 2.

Պրակտիկայի ընթացքում իրականացվող գործունեության բովանդակությունը

Առաջադրանք	Գործունեության տեսակները	Հաշվետվության ձևը
Ծանոթանալ այն երեխաներին, որոնց տրամադրվում է սոցիալ-մանկավարժական օգնություն	Ուսումնասիրել փաստաթղթերը: Կազմել հարցաթերթ և անցկացնել սոցիալ-մանկավարժական	Ծրագրում թվարկել երեխաների այն կատեգորիաները, որոնց հետ աշխատում է
	հետազոտություն	խնամքի և պաշտպանության հաստատությունը
Ուսումնասիրել սոցիալական մանկավարժի պաշտոնական պարտականությունները	Վերլուծել սոցիալական մանկավարժի մասնագիտացման բնութագիրը և համադրել այն խնամքի և պաշտպանության հաստատության գործունեության հետ	Ներկայացնել խնամքի և պաշտպանության հաստատության սոցիալ մանկավարժի պաշտոնական պարտականությունների սեփական պատկերացումները
Տիրապետել ընտանիքում, դպրոցում, կոլեկտիվում ստեղծված երեխայի համար անցանկալի իրադրության ախտորոշման մեթոդիկաներին	Կազմակերպել հանդիպում՝ երեխայի և նրա ընտանիքի հետ: Անցկացնել ախտորոշիչ հետազոտություն և բացահայտել տարբեր խախտումների առաջացման պատճառները	Ներկայացնել ախտորոշիչ հետազոտության փաստաթղթերը
Ուսումնասիրել տվյալ հիմնարկության կանխարգելիչ գործունեության առանձնահատկությունները	Որոշել երեխայի վարքի սոցիալական վերահսկողությունն իրականացնող հիմնական սուբյեկտները: Առանձնացնել երեխայի սոցիալական սատարման հիմնական	Գնահատել տվյալ հիմնարկության կանխարգելիչ գործունեության մեթոդները և ձևերը: Որոշել սոցիալական կանխարգելման

	մեթոդները և տվյալ երեխաների մանկավարժական կանխարգելման բովանդակությունը	ձևերը: Որոշել կատեգորիայի սոցիալ-	տեխնոլոգիաների կիրառման ոլորտը:
Ուսումնասիրել երեխայի սոցիալ-մանկավարժական վերականգնման առանձնահատկությունները	Անցկացնել իմացության զարգացման անձի դրական ախտորոշում	Էնոցիոնալ-ոլորտի մակարդակի, որակների	Օրագրում ներկայացնել վերականգնողական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

**4. Ավարտական որակավորման քննություն (3կրեդիտ)**